



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

5(117)2024






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
5(117)2024



ISSN 1829-1155

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ,
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Սահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Սահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1750-1765)

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՄ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1750, 27 սեպտեմբերի 2024 թվականի).....9
- 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ «ՔԱԶԱՐԱՆԻ ԹՈՒՆԵԼԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1751, 27 սեպտեմբերի 2024 թվականի).....18
- ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1087.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 8-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1752, 1 հոկտեմբերի 2024 թվականի).....23

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ԼՈԳՈՍՏԻԿ ԿԵՆՏՐՈՆ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1753, 8 հոկտեմբերի 2024 թվականի).....51

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՔԱՂԱՔ ԲԻՇՔԵԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՆՑԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ (ԼՎԱՑՄԱՆ) ԵՎ ԱՀԱԲԵԿԶՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1754, 8 հոկտեմբերի 2024 թվականի).....59

- 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1755, 8 հոկտեմբերի 2024 թվականի).....65

- «ՀՈՎՆԱՆՅԱՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԸ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ

ՕՐԵՆՍԳՐՔԻ 331-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 432-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1756, 8 հոկտեմբերի 2024 թվականի).....70

- ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 52-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1757, 15 հոկտեմբերի 2024 թվականի).....92
- 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ««ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1758, 18 հոկտեմբերի 2024 թվականի).....111
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....119
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՅՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1759, 19 նոյեմբերի 2024 թվականի).....128
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....134

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1760, 26 նոյեմբերի 2024 թվականի).....141
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ս. ՍԱՖԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....149
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....164
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐ-ԵՆԹԱԾՐԱԳՐ 2» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1761, 26 նոյեմբերի 2024 թվականի).....177
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....181
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՊԵԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱԶ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1762, 26 նոյեմբերի 2024 թվականի).....188

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....194

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՍԻԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Ը ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1763, 26 նոյեմբերի 2024 թվականի).....201

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....205

- 1899 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-ԻՆ ԵՎ 1907 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՀԱԱԳԱՅՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Ը ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1764, 3 դեկտեմբերի 2024 թվականի).....212

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....221

- 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԻՐԵՆՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Ը ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ

ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՍԴՈ – 1765, 17 դեկտեմբերի 2024 թվականի).....228

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....236

II. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ (ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ)
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԻՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԻՍՏԻՆ.....244



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ
ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ
ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ,
ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝
ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 սեպտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի դեկտեմբերի 25-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024
9

միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի հունիսի 14-ի N 900-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի դեկտեմբերի 25-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հուլիսի 30-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի դեկտեմբերի 25-ին Սանկտ Պետերբուրգում՝ ԵԱՏՄ անդամ պետությունների միջև առևտրատնտեսական հարաբերությունների ընդլայնման պայմաններ ստեղծելով՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով:

2. Համաձայնագրի 11.1 հոդվածի համաձայն՝ համաձայնագրի բոլոր հավելվածները և լրացուցիչ արձանագրությունները Համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում: Համաձայնագիրն ունի 6 Հավելված՝ Հավելված 1. «Սակագնային պարտավորությունների ժամանակացույցները», Հավելված 2. «Առանձին արտադրատեսակներին առնչվող հատուկ կանոնները», Հավելված 3, որում ներկայացվում են Ծագման սերտիֆիկատի օրինակը և դրա լրացման ցուցումները (Ձև СТ-3), Հավելված 4. «Ծագման հայտարարագիրը», Հավելված 5. «Մաքսային արժեքի որոշման կանոնները», Հավելված 6. «Օրենքների

և կարգավորումների ու պետական գնումների մասին տեղեկությունների հրապարակում»:

Համաձայնագրի 1.2 հոդվածի համաձայն՝ Կողմերը Համաձայնագրով ստեղծում են Ազատ առևտրի գոտի՝ միջազգային կանոններին, չափանիշներին և գործելակերպերին համապատասխան¹:

Համաձայնագրի նպատակներն են Համաձայնագրի դրույթներին համապատասխան՝ Կողմերի միջև ապրանքների առևտրի ազատականացումը և դյուրացումը, մասնավորապես՝ սակագնային և ոչ սակագնային խոչընդոտները նվազեցնելու կամ վերացնելու միջոցով, Կողմերի միջև տնտեսական և առևտրային համագործակցությանն աջակցելը, Կողմերի միջև առևտրի ընդլայնման և բազմազանեցման խրախուսումը և Համաձայնագրի շրջանակներում համաձայնեցված ոլորտներում սերտ համագործակցության ամրապնդումը և Կողմերի միջև հաղորդակցության դյուրացումը:

Համաձայնագրի 1.5 հոդվածի համաձայն՝ Կողմերը ստեղծում են յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչներից բաղկացած Համատեղ կոմիտե, որը համանախագահում են երկու ներկայացուցիչներ. մեկը՝ ԵԱՏՄ-ից և դրա անդամ պետություններից, իսկ մյուսը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից:

Համաձայն Համաձայնագրի 1.4 հոդվածի 2-րդ կետի՝ չհակասելով Համաձայնագրի 6.7 հոդվածին՝ Համաձայնագրի դրույթները չեն կիրառվում ԵԱՏՄ անդամ պետությունների միջև կամ ԵԱՏՄ անդամ պետությունների և ԵԱՏՄ-ի միջև, ինչպես նաև դրանցով Իրանի Իսլամական Հանրապետությանը չեն շնորհվում այնպիսի արտոնություններ, որոնք ԵԱՏՄ անդամ պետությունները բացառապես շնորհում են միմյանց:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

3.1. նշանակել կապի ապահովման կենտրոն կամ կապի ապահովման կենտրոններ՝ Համաձայնագրին առնչվող ցանկացած հարցի շուրջ Կողմերի միջև հաղորդակցությունը դյուրացնելու նպատակով, և Համատեղ կոմիտեին տեղեկացնել ՀՀ կապի ապահովման կենտրոնի

¹ Համաձայնագրի՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ հանդիսացող Կողմերի համար «միջազգային կանոններ, չափանիշներ և գործելակերպեր» նշանակում է ԱՀԿ համաձայնագրի համապատասխան դրույթները, մասնավորապես՝ «Սակագների և առևտրի մասին» 1994 թվականի գլխավոր համաձայնագրի XXIV հոդվածը:

կամ կապի ապահովման կենտրոնների մասին (հոդված 1.7, կետ 1),

3.2. ապահովել, որ Կողմի հարցման հիման վրա՝ ՀՀ կապի ապահովման կենտրոնը կամ կապի ապահովման կենտրոնները պարզեն տվյալ հարցի համար պատասխանատու գերատեսչությունը կամ պաշտոնական պատասխանատուին և անհրաժեշտության դեպքում աջակցեն Կողմերի միջև հաղորդակցության ապահովման հարցում (հոդված 1.7, կետ 2),

3.3. ՀՀ համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն՝ պահպանել Համաձայնագրին համապատասխան տեղեկությունները տրամադրող Կողմի՝ որպես գաղտնի նշագրված տեղեկությունների գաղտնիությունը (հոդված 1.8, կետ 1),

3.4. պայմանով, որ նշված միջոցները չեն կիրառվում որպես կամայական կամ չարդարացված խտրականության միջոց այն երկրների միջև, որտեղ միևնույն պայմանները գերակայում են, կամ որպես միջազգային առևտրի քողարկված սահմանափակման միջոց, Համաձայնագրում ոչինչ չմեկնաբանել այնպես, որ որևէ Կողմի խոչընդոտի ընդունել կամ իրականացնել Համաձայնագրի 1.9 հոդվածում սահմանված միջոցները (հոդված 1.9),

3.5. Համաձայնագրում ոչինչ չմեկնաբանել այնպես, որ դրանով որևէ Կողմից պահանջվի տրամադրել այնպիսի տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է այդ Կողմի անվտանգության էական շահերին, կամ խոչընդոտի որևէ Կողմի ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք այդ Կողմն անհրաժեշտ է համարում իր անվտանգության էական շահերի պաշտպանության համար, և որոնք կապված են տրոհվող նյութերի կամ այն նյութերի հետ, որոնցից դրանք ստացվել են կամ կապված են զենքի, զինամթերքի և ռազմական միջոցների առևտրի և այլ ապրանքների ու նյութերի առևտրի հետ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրականացվում է զինված ուժերին մատակարարելու համար, իրականացվում են ռազմական ժամանակ կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ իրավիճակում, կամ խոչընդոտի որևէ Կողմի՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված՝ միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման նպատակներով ստանձնած իր պարտավորությունների կատարմանն ուղղված որևէ գործողության ձեռնարկմանը (հոդված 1.10),

3.6. ապահովել, որ ՀՀ կողմից Համաձայնագրի 1.11 հոդվածին համապատասխան սահմանված, պահպանվող կամ ուժեղացված՝

ներմուծմանն առնչվող սահմանափակումները չգերազանցեն այն սահմանափակումները, որոնք անհրաժեշտ են ՀՀ արժութային պահուստներին սպառնացող վտանգը կանխելու կամ դրանց էական նվազումը դադարեցնելու համար, կամ ՀՀ արժութային պահուստների՝ անբավարար կամ շատ քիչ լինելու վտանգի առկայության դեպքում՝ դրա պահուստների աճի ողջամիտ տեմպն ապահովելու համար (հոդված 1.11, կետ 1),

3.7. հրապարակել Համաձայնագրի 1.12 հոդվածի 1-ին կետում նշված այն օրենքների ու կարգավորումների նախագծերը, որոնք Հայաստանի Հանրապետությունը նախատեսում է ընդունել, և շահագրգիռ անձանց և մյուս Կողմին տրամադրել ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իրենց մեկնաբանությունները Համաձայնագրի 1.12 հոդվածի 1-ին կետում նշված այն օրենքների ու կարգավորումների վերաբերյալ, որոնք Հայաստանի Հանրապետությունը նախատեսում է ընդունել (հոդված 1.12, կետ 2),

3.8. ապահովել մյուս Կողմի համար ներմուծմանն առնչվող ՀՀ համապատասխան պահանջների հստակությունն ու թափանցիկությունը և հրապարակել մյուս Կողմին տրամադրել մյուս Կողմի արտահանողների համար ներմուծման կարգավորման վերաբերյալ ՀՀ կողմից կիրառվող մանրամասն ձեռնարկը՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում (հոդված 1.12, կետ 4),

3.9. նախքան Համաձայնագրի ուժի մեջ մտնելը՝ ձեռնարկել ընդհանուր և հատուկ բնույթի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Համաձայնագրին համապատասխան ՀՀ պարտավորությունները կատարելու համար, և անհրաժեշտության դեպքում ՀՀ օրենքներում և կարգավորումներում համապատասխանաբար կատարել ճշգրտումներ՝ դրանք Համաձայնագրի դրույթներին համապատասխանեցնելու նպատակով (հոդված 1.13),

3.10. մյուս Կողմի տարածքից ՀՀ տարածք ներմուծվող ապրանքները ոչ ուղղակի և ոչ էլ անուղղակի չենթարկել ներքին հարկման կամ ցանկացած բնույթի այլ ներքին վճարների, որոնք գերազանցում են հայրենական արտադրության համանման ապրանքների նկատմամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կիրառվող ներքին հարկերն ու վճարները, բացի այդ, ներմուծվող կամ հայրենական արտադրության ապրանքների նկատմամբ ներքին հարկերը կամ այլ ներքին վճարներ չկիրառել այնպես, որ դա հակասի Համաձայնագրի 2.2 հոդվածի 1-ին կետով սահմանված սկզբունքներին (հոդված 2.2, կետ 2),

3.11. Համաձայնագրի 2.5 հոդվածի դրույթները տարածել այն

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 5(117)2024

վճարների, վճարումների, ձևակերպումների ու պահանջների վրա, որոնք սահմանվում են իշխանության մարմինների կողմից ներմուծման և արտահանման, ինչպես նաև Համաձայնագրի 2.5 հոդվածի 4-րդ կետում շարադրված դեպքերի առնչությամբ (հոդված 2.5, կետ 4),

3.12. հակազնագցման ու փոխհատուցման միջոցներ կիրառելիս ապահովել Համաձայնագրի 3.2 հոդվածի դրույթների կատարումը (հոդված 3.2),

3.13. պաշտպանական միջոցներ կիրառել միայն այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է լուրջ վնասը կանխելու կամ հատուցելու և կարգավորումների գործընթացը դյուրացնելու համար, և ապահովել, որ պաշտպանական միջոցի կիրառման ժամկետը չգերազանցի 4 տարին, եթե միայն այն չի երկարաձգվում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխան սահմանել պաշտպանական միջոցի կիրառման ընդհանուր ժամկետը, ներառյալ՝ ցանկացած ժամանակավոր միջոցի կիրառման ժամկետը, նախնական կիրառման ժամկետը և դրա երկարաձգումը, որոնք չպետք է գերազանցեն 10 տարին (հոդված 3.3, կետ 5),

3.14. երկկողմ պաշտպանական միջոցը կիրառել միայն այն դեպքում, երբ հստակ ապացույց է ներկայացվում այն մասին, որ ավելացած ծավալներով ներմուծումը կարող է լինել լուրջ վնասի կամ դրա առաջացման վտանգի էական պատճառ (հոդված 3.4, կետ 2),

3.15. ապահովել, որ տեխնիկական կանոնակարգերի առնչությամբ մյուս Կողմի տարածքից ներմուծվող ապրանքների համար տրամադրվի այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ ազգային ծագում ունեցող համանման ապրանքների և որևէ այլ երկրի ծագում ունեցող համանման ապրանքների համար տրամադրվող ռեժիմից (հոդված 4.4, կետ 1),

3.16. չհակասելով Համաձայնագրի 4.5 հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի դրույթներին՝ ապահովել, որ հնարավորության դեպքում մյուս Կողմի համապատասխանության գնահատման ընթացակարգերի արդյունքներն ընդունվեն, նույնիսկ եթե այդ ընթացակարգերը տարբերվում են ՀՀ ընթացակարգերից՝ պայմանով, որ բավարարվի այն պահանջը, որ այդ ընթացակարգերով ապահովվում է համապատասխանությունը կիրառելի տեխնիկական կանոնակարգերի կամ ստանդարտների հետ, որոնք համարժեք են ՀՀ սեփական ընթացակարգերին (հոդված 4.5, կետ 1),

3.17. բացառությամբ Համաձայնագրի 4.6 հոդվածի 6-րդ կետում շարադրված հրատապ հանգամանքների՝ տրամադրել տեխնիկական կանոնակարգերի հրապարակման և դրանց ուժի մեջ մտնելու միջև

առնվազն 180 օր, որպեսզի արտահանող Կողմի արտադրողներին տրվի ժամանակ՝ իրենց ապրանքները կամ արտադրության մեթոդները ներմուծող ՀՀ պահանջներին հարմարեցնելու համար (հոդված 4.6, կետ 8),

3.18. Համաձայնագրի 5-րդ գլուխը կիրառել այն սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների նկատմամբ, որոնք ուղղակի կամ անուղղակի ձևով կարող են ազդել Կողմերի միջև առևտրի վրա (հոդված 5.3),

3.19. ընդունել տարածաշրջանային պայմաններին հարմարեցման հայեցակարգը, ներառյալ՝ վնասատուներից կամ հիվանդություններից զերծ տարածքները և վնասատուների կամ հիվանդությունների տարածվածության ցածր մակարդակը՝ որպես առևտրի դյուրացման կարևոր պայմաններ (հոդված 5.7, կետ 1),

3.20. մյուս Կողմի տարածքից ծագող ապրանքների համար ՀՀ տարածք ներմուծման դեպքում տրամադրել սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ՝ Համաձայնագրի 6.15 հոդվածի 1-ին կետում շարադրված ծագման ապացույցներից որևէ մեկը ներկայացնելու դեպքում (հոդված 6.15, կետ 1),

3.21. ծագման ապացույց չպահանջել ծագում ունեցող ապրանքների ներմուծման համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ ստանալու նպատակով այն դեպքում, երբ մաքսային արժեքը չի գերազանցում 200 եվրոն կամ ներմուծող Կողմի արժույթով համարժեք գումարը՝ պայմանով, որ տվյալ ներմուծումը չի կազմում մեկ կամ մեկից ավելի խմբաքանակների մաս, որոնք ողջամտորեն կարող են դիտարկվել որպես ծագման ապացույց ներկայացնելուց խուսափելու նպատակով նախաձեռնված կամ իրականացված միջոց (հոդված 6.16),

3.22. ապահովել ՀՀ մաքսային մարմինների կողմից կիրառվող մաքսային վարչարարության միջոցների կանխատեսելիությունը, հետևողականությունը և թափանցիկությունը (հոդված 7.3, կետ 1),

3.23. Համաձայնագրի 7.5 հոդվածի 1-ին կետի համաձայն և հնարավորության դեպքում նախատեսել ապրանքների բացթողումը մաքսային հայտարարագիրը գրանցվելուց հետո ոչ ավելի, քան 48 ժամվա ընթացքում՝ բացառությամբ ՀՀ մաքսային օրենսդրությամբ և կարգավորումներով նախատեսված հանգամանքների, և ձգտել ընդունել և կիրառել մինչև ապրանքների ժամանումը մաքսային տեղեկատվության էլեկտրոնային ներկայացման և մշակման ապահովումը՝ ժամանումից հետո ապրանքների բացթողումն արագացնելու նպատակով (հոդված

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

7.5, կետ 2),

3.24. չպահանջել բեռնառաքման ստուգումների իրականացում՝ կապված սակագնային դասակարգման և մաքսային արժեքի որոշման հետ (հոդված 7.20, կետ 2),

3.25. ապահովել, որ մաքսային օրենսդրության, կարգավորումների կամ ընթացակարգերի պահանջների խախտման համար տույժերը նշանակվեն միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խախտման համար պատասխանատու անձի (անձանց) նկատմամբ (հոդված 7.25, կետ 2),

3.26. եթե վեճի Կողմերն այլ բան չեն պայմանավորվում, ապա կրել ՀՀ կողմից նշանակված արբիտրի հետ կապված՝ ՀՀ սեփական ծախսերն ու դատական ծախսերը, իսկ արբիտրաժային խորհրդի նախագահի և խորհրդի վարույթի հետ կապված մյուս ծախսերը կրել մյուս Կողմի հետ հավասար չափով (հոդված 8.15, կետ 1),

3.27. համաձայնել խորացնել համագործակցությունը տեղեկությունների փոխանակման և խորհրդակցությունների, ինչպես նաև Կողմերի բիզնես գործունեությանը տեղեկատվական օժանդակման, Կողմերի բիզնես գործունեության միջև երկխոսության ու հաղորդակցության խթանման, համատեղ նախագծերի դյուրացման, ոլորտային համագործակցության հարցերի քննարկման համար համատեղ ֆորումների, համատեղ ցուցահանդես-վաճառքների, միջազգային սեմինարների և գիտաժողովների և Համաձայնագրի 10-րդ գլխում ընդգրկված հարցերի առնչությամբ փորձագետների վերապատրաստման փորձի փոխանակման միջոցով (հոդված 10.3),

3.28. ապահովել, որ մաքսատուրքի արտոնյալ դրույքաչափը հաշվարկելիս ադվալորային (արժեքային) տուրքը կլորացվի ներքև՝ մինչև առաջին տասնորդական նիշը, յուրահատուկ (հաստատագրված) տուրքը կլորացվի ներքև՝ մինչև երրորդ տասնորդական նիշը (Հավելված 1, կետ 4),

3.29. Համաձայնագրի Հավելված 5-ի 2-րդ հոդվածը կիրառելիս մաքսային արժեքը որոշելու համար կիրառել վաճառվող նույնական ապրանքների գործարքի գինը նույն կոմերցիոն մակարդակով և հիմնականում նույն քանակությամբ, ինչ գնորոշվող ապրանքների դեպքում, իսկ նման վաճառքի բացակայության դեպքում կիրառել տարբեր կոմերցիոն մակարդակով և (կամ) տարբեր քանակություններով վաճառվող նույնական ապրանքների գործարքի գինը, որը ճշգրտվել է՝ հաշվի առնելով կոմերցիոն մակարդակով և (կամ) քանակությամբ պայմանավորված տարբերությունները՝ պայմանով, որ այդ ճշգրտումները

կարող են կատարվել ներկայացված այն փաստերի հիման վրա, որոնցով հստակ սահմանվում են ճշգրտման ողջամտությունը և ճշգրտությունը՝ անկախ նրանից՝ ճշգրտումը բերում է արժեքի ավելացման, թե նվազման (Հավելված 5, հոդված 2, կետ 1, ենթակետ «բ»),

3.30. ապահովել, որ Համաձայնագրի Հավելված 5-ի 8-րդ հոդվածի 1-ին կետի «ե», «զ» և «է» ենթակետերում նշված ծախսերը և վճարումները գործարքի գնի մեջ ներառված լինելու դեպքում, ճշգրտումը կատարվի՝ հաշվի առնելով հեռավորությունների և փոխադրման եղանակների տարբերություններից բխող՝ տվյալ ներմուծվող ապրանքների և նույնական ապրանքների միջև այդ ծախսերի և վճարումների զգալի տարբերությունները (Հավելված 5, հոդված 2, կետ 2),

3.31. Համաձայնագրի Հավելված 5-ի 1-ից ներառյալ 6-րդ հոդվածի դրույթների համաձայն ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու անհնարինության դեպքում մաքսային արժեքը որոշել Համաձայնագրի Հավելված 5-ի սկզբունքներին և ընդհանուր դրույթներին համահունչ ողջամիտ միջոցների կիրառմամբ և Հայաստանի Հանրապետությունում առկա տվյալների հիման վրա (Հավելված 5, հոդված 7, կետ 1):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի դեկտեմբերի 25-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

27 սեպտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1750



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՄԻՋՈՑՆԵՐԻՑ «ՔԱԶԱՐԱՆԻ ԹՈՒՆԵԼԻ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 սեպտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Բ. Ղալեյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի հուլիսի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և

Եվրասիական զարգացման բանկի միջև Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից «Քաջարանի թունելի շինարարություն» ծրագրի ֆինանսավորման համար ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի օգոստոսի 15-ի N 1267-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի հուլիսի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից «Քաջարանի թունելի շինարարություն» ծրագրի ֆինանսավորման համար ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի օգոստոսի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի (այսուհետ՝ Կառավարիչ) միջև «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից «Քաջարանի թունելի շինարարություն» ծրագրի ֆինանսավորման համար ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի հուլիսի 26-ին՝ «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհային միջանցքի հատվածում տարանցիկ փոխադրումների ներուժի բարձրացման ու վթարայնության նվազեցման նպատակով:

2. Համաձայնագրով նախատեսվում է Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 200,000,000 (երկու հարյուր միլիոն)

ԱՄՆ դոլարի չափով ներդրումային վարկ (այսուհետ՝ Ներդրումային վարկ) «Քաջարանի թունելի շինարարություն» ծրագրի և գոյություն ունեցող Մ2 ճանապարհի շուրջ 4 կմ երկարությամբ հատվածի վերակառուցման աշխատանքների (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորման համար:

3. Համաձայնագրի թվով 8 ներքոնշյալ հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մաս, մասնավորապես՝

1) Հավելված թիվ 1՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից մասնակից պետությանը ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրերի ստանդարտ պայմաններ (այսուհետ՝ Ստանդարտ պայմաններ),

2) Հավելված թիվ 2՝ Ներդրումային վարկի պայմանները,

3) Հավելված թիվ 3՝ Հիմնական պարտքի մարման ժամանակացույցը,

4) Հավելված թիվ 4՝ Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և ծախսային կատեգորիաները,

5) Հավելված թիվ 5՝ Ծրագրի նկարագրությունը և իրականացման կարգը,

6) Հավելված թիվ 6՝ Ծրագրի մոնիթորինգը և գնահատումը,

7) Հավելված թիվ 7՝ Գնումների ընթացակարգերը,

8) Հավելված թիվ 8՝ Միջոցների հատկացման ընթացակարգերը:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես, ապահովել՝

4.1. Ծրագրի իրականացումը՝ Համաձայնագրով և Ստանդարտ պայմանների 4.01 բաժնի պահանջներով, ինչպես նաև Համաձայնագրի թիվ 5 հավելվածում սահմանված կարգով և պայմաններով (հոդված 4, կետ 4.1, «ա» ենթակետ),

4.2. Ծրագրի իրականացման ընթացքում Հայաստանի Հանրապետության կողմից Համաձայնագրի թիվ 2 հավելվածում նշված քաղաքականությունների և ընթացակարգերի կիրառելի պահանջների կատարումը, Կառավարչին ներկայացվող հաշվետվությունների, փաստաթղթերի և նյութերի կազմումն ու տրամադրումը, որոնք ենթակա են տրամադրման նշված քաղաքականություններին և ընթացակարգերին համապատասխան (հոդված 4, կետ 4.1, «բ» ենթակետ),

4.3. Տեխնիկական միջոցների, ծառայությունների և այլ ռեսուրսների տրամադրումը, որոնք պահանջվում են Ծրագրի արդյունավետ կատարումն ապահովելու համար՝ Ստանդարտ պայմանների 4.01 բաժնի «բ» կետին համապատասխան (հոդված 4, կետ 4.1, «դ» ենթակետ),

4.4. Կառավարչին Ծրագրի փաստաթղթերի և դրանց հասանելիության տրամադրումը, հաշվառման փաստաթղթերի վարումը և պահպանումը՝ Ստանդարտ պայմանների 4.02 բաժնին համապատասխան (հոդված 4, կետ 4.1, «ե» ենթակետ),

4.5. Ծրագրի մոնիթորինգը և գնահատումը, ինչպես նաև Համաձայնագրով նախատեսված՝ Ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետվությունների տրամադրումը՝ Ստանդարտ պայմանների 4.03 բաժնին և Համաձայնագրի թիվ 6 հավելվածին համապատասխան (հոդված 4, կետ 4.1, «զ» ենթակետ),

4.6. Ներդրումային վարկի միջոցների ֆինանսական կառավարումը, ֆինանսական հաշվետվությունների աուդիտի անցկացումը և Կառավարչին տեղեկատվության տրամադրումը՝ Ստանդարտ պայմանների 4.04 բաժնի պահանջներին համապատասխան (հոդված 4, կետ 4.1, «է» ենթակետ),

4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների իրականացումը Ներդրումային վարկի միջոցների հաշվին՝ Համաձայնագրի թիվ 7 հավելվածում նշված գնումների ընթացակարգերին համապատասխան (հոդված 4, կետ 4.1, «ը» ենթակետ),

4.8. Ծրագրի ֆինանսավորման համար հատկացված միջոցների ծախսումը Համաձայնագրի թիվ 8 հավելվածում նշված՝ միջոցների տրամադրման ընթացակարգերին համապատասխան (հոդված 4, կետ 4.1, «թ» ենթակետ),

4.9. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան՝ Ծրագրի իրականացման ամենօրյա աշխատանքների համար պատասխանատու կազմակերպության կամ այլ կազմակերպության ներգրավումը՝ Համաձայնագրի թիվ 5 հավելվածի 3-րդ կետում նշված գործառույթները կատարելու համար (հոդված 4, կետ 4.1, «ժ» ենթակետ):

5. Հայաստանի Հանրապետությունը, գրավոր հարցման հիման վրա, Կառավարչին տեղեկատվություն է տրամադրելու իր տարածքում ֆինանսական և տնտեսական պայմանների վերաբերյալ, որի համար Կառավարիչը հիմնավորված հարցում կներկայացնի՝ հաշվի առնելով Ստանդարտ պայմանների 5.01 բաժնի (հոդված 4, կետ 4.3):

6. Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է ապահովել, որ իր որևէ արտաքին պարտք առաջնահերթություն չունենա Ներդրումային վարկի գծով պարտքի նկատմամբ՝ Ստանդարտ պայմանների 6.01 բաժնի դրույթներին համապատասխան (հոդված 4, կետ 4.4):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2024 թվականի հուլիսի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից «Քաջարանի թունելի շինարարություն» ծրագրի ֆինանսավորման համար ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

27 սեպտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1751



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 1087.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 8-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

1 հոկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Արտակ Զեյնալյանի (այսուհետ նաև՝ Դիմող) և նրա ներկայացուցիչ՝ փաստաբան Աշխեն Դաշյանի,*

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող) աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին:

Օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ **«Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները»** վերտառությամբ 1087.1-ին հոդվածի 8-րդ մասը սահմանում է.

«8. Զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապարիկի չափով փոխհատուցում վճարել»:

Օրենսգիրքը 1087.1-ին հոդվածով լրացվել է 18.05.2010 թ. ՀՕ-97-Ն օրենքով, վիճարկվող դրույթը փոփոխվել է 24.03.2021 թ. ՀՕ-330-Ն օրենքով, համաձայն որի՝ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի «2000» թիվը փոխարինվել է «6000» թվով:

Գործի քննության առիթն Արտակ Զեյնալյանի՝ 2024 թվականի ապրիլի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը 2024 թվականի մայիսի 14-ի ՍԴԱՌ-82 աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունել «Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի և «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը: Սահմանադրական դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 1-ի ՍԴԱՌ-146 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը մասամբ՝ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի մասով, կարճվել է:

Ուսումնասիրելով դիմումը, Դիմողի և Պատասխանողի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով վիճարկվող և վերաբերելի օրինադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), քննելով թիվ ԵԴ/9074/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի Արտակ Հայկազի Զեյնալյանի ընդդեմ Գայանե Բենյամինի Առուստամյանի, երրորդ անձ՝ Մարինա Հրանտի Պողոսյան՝ զրպարտող տեղեկությունը հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում բռնագանձելու պահանջների մասին, 2020 թվականի դեկտեմբերի 18-ին վճռել է.

«Արտակ Հայկազի Զեյնալյանի հայցն ընդդեմ Գայանե Բենյամինի Առուստամյանի, երրորդ անձ՝ Մարինա Հրանտի Պողոսյան՝ զրպարտող տեղեկությունը հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում բռնագանձելու պահանջների մասին, բավարարել՝ մասնակի:

Գայանե Բենյամինի Առուստամյանից հօգուտ Արտակ Հայկազի Զեյնալյանի բռնագանձել 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցման գումար:

Հայցը մնացած մասով մերժել:

Գայանե Բենյամինի Առուստամյանից հօգուտ Արտակ Հայկազի Զեյնալյանի բռնագանձել 90,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Գայանե Բենյամինի Առուստամյանից հօգուտ Արտակ Հայկազի Զեյնալյանի բռնագանձել 2,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

(...)»:

1.2. Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, գրավոր ընթացակարգով քննելով Արտակ Զեյնալյանի վերաքննիչ բողոքը՝ Դատարանի 18.12.2020 թ. վճռի՝ հայցի մերժված մասի դեմ, 2021 թվականի մայիսի 21-ին որոշել է.

«1. Վերաքննիչ բողոքը բավարարել:

ԵԴ/9074/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 18.12.2020 թվականի վճիռը մասնակի՝ հայցը մերժելու մասով, բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նշված ծավալով նոր քննության:

(...)»:

1.3. Դատարանը, քննելով թիվ ԵԴ/9074/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի Արտակ Հայկազի Ձեյնալյանի ընդդեմ Գայանե Բենյամինի Առուստամյանի, Երրորդ անձ՝ Մարինա Հրանտի Պողոսյանի՝ զրպարտող տեղեկությունը հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում բռնագանձելու պահանջների մասին, 2022 թվականի հոկտեմբերի 18-ին վճռել է.

«1. Արտակ Հայկազի Ձեյնալյանի հայցն ընդդեմ Գայանե Բենյամինի Առուստամյանի, Երրորդ անձ՝ Մարինա Հրանտի Պողոսյանի՝ զրպարտող տեղեկությունը հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում բռնագանձելու պահանջների մասին, մերժել:

(...)»:

Հիշյալ վճռով Դատարանը նշել է. «Մինչ իրավական վերլուծությանը անցնելը դատարանը անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 21.05.2021 թվականի որոշմամբ մասնակի բեկանելով ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 18.12.2020 թվականի վճիռը՝ հայցը մերժելու մասով, սահմանել է քննության ծավալ՝ պարզել «Marina Poghosyan» «Gayane Arustamyan» Ֆեյսբուքյան օգտատերերը իրականացնում են լրատվական գործունեություն, թե ոչ, և պարզել պատասխանող Գայանե Առուստամյանի գույքային դրությունը:

Դատարանը «Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին» 23.09.2021 թվականի որոշմամբ Հայցվորին վերապահել է ապացուցելու «Marina Poghosyan» Ֆեյսբուքյան օգտատիրոջ լրատվական գործունեությամբ զբաղվելու փաստը և Պատասխանողին՝ 2.000.000 ՀՀ դրամ վճարելը իր գույքային դրության տեսանկյունից անհամաչափ լինելը:

Հայցվորի ներկայացուցիչը գործի քննությամբ ընդունել է, որ Երրորդ անձը լրատվական գործունեությամբ չի զբաղվում, այլ զբաղվում է հասարակական գործունեությամբ, իսկ Պատասխանողի կողմից որևէ դիրքորոշում կամ ապացույց գույքային դրության մասով չի ստացվել:

(...)

Վերոգրյալ փաստական հանգամանքներից ելնելով Դատարանը արձանագրում է, որ «Marina Poghosyan» օգտատիրոջ՝ Երրորդ անձի, լրատվական գործունեությամբ զբաղվելու մասին փաստ չի ներկայացվել, ուստի 1087.1-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված միջոցը կատարելու պարտականություն չի կարող նրան վերապահվել»:

1.4. Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, գրավոր ընթացակարգով քննելով Արտակ Հայկազի Ձեյնալյանի վերաքննիչ բողոքը՝

Դատարանի 18.10.2022 թ. վճռի դեմ, 2023 թվականի մարտի 22-ին որոշել է.

«1. Արտակ Հայկազի Զեյնալյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի. Մասնակի բեկանել Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/9074/02/19 քաղաքացիական գործով 18.10.2022 թվականին կայացված վճիռը և այն փոփոխել հետևյալ կերպ.

«1. Արտակ Հայկազի Զեյնալյանի հայցն ընդդեմ Գայանե Բենյամինի Առուստամյանի, երրորդ անձ՝ Մարինա Հրանտի Պողոսյանի՝ զրպարտող տեղեկությունը հերքելուն պարտավորեցնելու և փոխհատուցում բռնագանձելու պահանջների մասին, բավարարել մասնակի.

Գայանե Բենյամինի Առուստամյանից հոգուտ Արտակ Հայկազի Զեյնալյանի բռնագանձել 500.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցման գումար:

2. Գայանե Առուստամյանից հոգուտ Արտակ Զեյնալյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված և բավարարված հայցապահանջի մասով պետական տուրքի գումար:

3. Գայանե Բենյամինի Առուստամյանից հոգուտ Արտակ Հայկազի Զեյնալյանի բռնագանձել 110.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար»:

Վճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:

(...):»:

Նույն որոշմամբ Վերաքննիչ դատարանը նշել է.

«(...) սույն գործի քննության ընթացքում ֆեյսբուքյան օգտատեր «Marina Poghosyan»-ի լրատվական գործունեությամբ զբաղվելու փաստը ապացուցված չլինելու պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ վեճի առարկա հրապարակումը տեղի է ունեցել ֆիզիկական անձ «Marina Poghosyan»-ի ֆեյսբուքյան էջի միջոցով, որը չի կարող գնահատվել որպես լրատվության միջոց՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված տեղեկությունը չի կարող համարվել լրատվության միջոցով տարածված:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով սահմանված պաշտպանության միջոցի կիրառման հիմքը: Հետևաբար՝ այս առնչությամբ բողոքաբերի պատճառաբանությունները Վերաքննիչ դատարանի գնահատմամբ անհիմն են»:

1.5. Վճռաբեկ դատարանը, քննելով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 22.03.2023 թ. թվականի որոշման դեմ Արտակ Զեյնալյանի

բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, 2023 թվականի հոկտեմբերի 11-ին որոշել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը, ներկայացնելով թիվ ԵԴ/9074/02/19 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը, շարադրելով վիճարկվող նորմերի բովանդակությունը, բարձրացված հարցադրումների վերաբերյալ Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան դիրքորոշումները, նշում է. «Օրենսդիրը վիրավորանքից և զրպարտությունից ոչ նյութական պաշտպանության կարգը և պայմանները տարբերակել է, տարբերակել է նաև արատավորող արտահայտությունից պաշտպանությունն՝ ըստ հրապարակման աղբյուրի»: Ըստ Դիմողի՝ վիրավորական արտահայտության դեպքում իրավունքի խախտման զոհն իրավասու է պահանջելու իրավախախտից հրապարակային ներողություն խնդրել, իսկ զրպարտության դեպքում՝ հերքում հրապարակել պայմանով, որ զրպարտող տեղեկությունը հրապարակվել, հանրայնացվել, տարածվել է «լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ»: Այս համատեքստում Դիմողն ընդգծում է. «Իսկ, թե՛ ռին է «լրատվական գործունեություն իրականացնող» և հերքումն ինչ ձևով կարող է հրապարակվել, որոշվում է «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով»:

Դիմողը պնդում է, որ առկա իրավակարգավորումների համաձայն՝ եթե զրպարտությունը հրապարակվել, հանրայնացվել, տարածվել է բանավոր կերպով (առանց վերարտադրման հնարավորության) կամ «Ձանգվածային լրատվության մասին» օրենքի իմաստով՝ «լրատվության միջոց» չհանդիսացող հարթակի միջոցով՝ վերարտադրման, տարածության և ժամանակի մեջ տարածման հնարավորությամբ, ապա իրավունքի խախտման զոհը հնարավորություն չունի զրպարտություն համարված փաստերը հերքելու, հրապարակումը հեռացնելու պահանջ ներկայացնելու իրավախախտին:

Դիմողը Սահմանադրական դատարանի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ տեղեկատվության տարածման ժամանակակից միջոցներով, մասնավորապես՝ սոցիալական ցանցում գրանցված օգտահաշվի միջոցով, տարածված տեղեկությունը մշտապես հրապարակվում, հանրայնացվում, տարածվում է: Հաճախ որոշ օգտահաշիվներ անհամադրելի քանակով հետևորդներ են ունենում,

քան «լրատվության միջոցները»: Ավելին, Դիմողի գնահատմամբ, ժամանակակից տեղեկատվական համացանցային հոսքերի կառավարման ալգորիթմներն ապահովում են տեղեկատվության տարածումը նաև այն «սպառողների» շրջանում, որոնք կոնկրետ օգտատիրոջ կամ օգտահաշվի «հետևորդ» չեն, սակայն կարող են այդ բովանդակության պոտենցիալ «գնորդ» լինել: Դիմողի գնահատմամբ՝ 101 բաժանորդ ունեցող «լրատվության միջոցով» տարածված զրպարտության հետագա տարածումը դադարեցնելը, զրպարտությունը հեռացնելը, հերքում տարածելը՝ որպես իրավական պաշտպանության միջոցներ, նախատեսված են, սակայն միլիոնավոր հետևորդներ ունեցող օգտահաշվից՝ հնարավոր չէ:

Դիմողի կարծիքով՝ քանի դեռ առկա չէ անձի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկությունները հերքելու, հեռացնելու պաշտպանության միջոց, խախտումները կրելու են շարունակական բնույթ՝ անկախ դատական պաշտպանության դիմած անձի օգտին կայացված դատական ակտի առկայությունից: Ավելին, անձի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող հրապարակային ներկայացված փաստացի տվյալները չհերքվելու և չհեռացվելու պայմաններում դրանք շարունակելու են արատավորել անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը՝ հանգեցնելով նոր խախտման:

Դիմողի պնդմամբ՝ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասը չի նախատեսում զրպարտությունը սոցիալական հարթակի օգտահաշվից հեռացնելու, նույն վայրում հերքում հրապարակելու կարգ ու պայման, իսկ «Ձանգվածային լրատվության մասին» օրենքի 3-րդ հոդվածը սոցիալական հարթակում գործող օգտահաշիվը չի դիտարկում որպես լրատվության միջոց:

Դիմողը շեշտադրում է, որ մարդը բարձրագույն արժեք է, և նրա պատիվը, արժանապատվությունը և բարի համբավն արատավորելուց պաշտպանելը, մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելը, հնարավոր չէ ֆինանսական փոխհատուցմամբ: Հակառակ իրավիճակը, ըստ Դիմողի, կստեղծի նյութական հատուցման միջոցներ տրամադրելով ոչ նյութական բարիքների դեմ անարգել ոտնձգելու հնարավորություն, ինչը կհակասի մարդու արժանապատվության բարձրագույն արժեք լինելու գաղափարին, կդրդի մարդուն դիմելու իր իրավունքը պաշտպանելու հնագույն բնական միջոցին՝ իրավունքի ինքնապաշտպանությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024
29

Արդյունքում Դիմողը եզրակացնում է, որ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասը, չնախատեսելով զրպարտությունը սոցիալական հարթակի օգտահաշվից հեռացնելու, նույն վայրում հերքում հրապարակելու կարգ ու պայման, և «Ձանգվածային լրատվության մասին» օրենքի 3-րդ հոդվածը, սոցիալական հարթակում օգտահաշիվը չդիտարկելով որպես լրատվության միջոց, չեն համապատասխանում Սահմանադրության 3, 23, 31, 61, 63 և 75-րդ հոդվածներով ամրագրված իրավակարգավորումներին:

Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ Դիմողը խնդրում է. «(...) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 23 և 31, 61 և 63, 28 և 29, 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 1087.1-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթն՝ այնքանով, որքանով զրպարտության դեպքում, եթե զրպարտությունը տեղ է գտել սոցիալական ցանցի օգտահաշվում, անձին հնարավորություն չի տալիս սոցիալական ցանցի օգտատիրոջը պահանջներ կայացնել օգտահաշվից հեռացնել զրպարտող տեղեկությունը և (կամ) հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը:

(...) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 23 և 31, 61 և 63, 28 և 29, 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի դրույթն՝ այնքանով, որքանով սոցիալական ցանցի օգտատիրոջը չի դիտարկում որպես լրատվական գործունեություն իրականացնող, իսկ սոցիալական ցանցի օգտահաշիվը չի դիտարկում որպես լրատվություն իրականացնելու միջոց»:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը, մեջբերելով Սահմանադրության 23, 28, 29, 31, 61, 63 և 75-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորումները և դրանց վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի նախադեպային դիրքորոշումները, գործող օրենսդրական կարգավորումները դիտարկելով դատական պրակտիկայի և միջազգային իրավակարգավորումների համատեքստում, նշում է. «(...) տվյալ դեպքում օրենսդրական բաց և օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործման խախտում առկա չեն»:

Պատասխանողի գնահատմամբ՝ օրենսդիրը տվյալ իրավա-
կարգավորումները սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ
համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և
ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան
իրավակիրառ պրակտիկայի ձևավորում. «(...) այդպիսի ընթացակարգի
սահմանումը եղել է օրենսդրի նպատակը»:

Պատասխանողը պնդում է, որ տվյալ դեպքում օրենքի բացը
հաղթահարելու անհնարինությունն առկա չէ, մասնավորապես, այն
պայմաններում, երբ դատարաններին տրված դատական հայեցողության
շրջանակներում՝ պայմանավորված յուրաքանչյուր գործի փաստական
հանգամանքներով, կարող է քննարկման առարկա դառնալ սոցիալական
ցանցի կոնկրետ օգտահաշվի (օգտահաշվի առանձնահատկություններով
պայմանավորված)՝ որպես լրատվական միջոց հանդիսանալու հարցը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պատասխանողը գտնում է, որ վիճարկ-
վող դրույթը՝ իր իրավակարգավորիչ դերով, համապատասխանում է
Սահմանադրությանը՝ չհանգեցնելով սահմանադրական իրավունքների
արդյունավետ իրացման որևէ խոչընդոտի:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում
Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ
հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասն այնքանով,
որքանով չի նախատեսում լրատվական գործունեություն չիրա-
կանացնողի՝ համացանցում տարածած տեղեկատվության մեջ տեղ
գտած զրպարտության դեպքում անձի կողմից դատական կարգով
զրպարտություն համարվող փաստացի տվյալները հրապարակայնորեն
հերքելու և (կամ) հրապարակայնորեն դրանց վերաբերյալ իր
պատասխանը ներկայացնելու և (կամ) դրանք հեռացնելու պահանջ
ներկայացնելու օրենսդրական հնարավորություն, համահունչ է
Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված իրավուն-
քին՝ հաշվի առնելով նաև Սահմանադրության 75-րդ հոդվածով
ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների
արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի
և ընթացակարգերի առկայության սահմանադրաիրավական պահանջը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրության՝ «Մարդու արժանապատվությունը» վերտառությամբ 23-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունն անխախտելի է: Այսպիսով՝ **մարդու արժանապատվությունը բացարձակ պաշտպանության ենթակա սահմանադրական արժեք է, որը կանխորոշում է մարդու իրավունքների և ազատությունների բովանդակությունը և ծավալը:** Այս մասին է վկայում նաև այն, որ Սահմանադրության 203-րդ հոդվածի համաձայն՝ ի թիվս այլ հոդվածների, Սահմանադրության 3-րդ հոդվածը փոփոխման ոչ ենթակա հոդված է:

Սահմանադրական դատարանը, իր մի շարք որոշումներում անդրադառնալով «արժանապատվություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, մասնավորապես, նշել է.

- «Վավերացնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է դրա Նախաբանի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից»: Սահմանադրության 3 հոդվածի 1-ին մասում նշված է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: «Բարձրագույն արժեք» հասկացությունն այստեղ վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում և՛ պետական, և՛ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել» (2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշում),

- «Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչը նրա արժանապատվությունն է, որն իր

սահմանադրահիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու և քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար: Այն նաև ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում և կամահայրնության դրսևորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն» (2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-913 որոշում),

- «Անձի արժանապատվության անխախտելիությունը, նրա պատվի և բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը վերաբերում են ոչ միայն մարդկային կյանքի ողջ ժամանակահատվածին, այլ պետությունը պարտավոր է ստեղծել նաև մահացած անձի պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտ իրավական երաշխիքներ» (2017 թվականի մարտի 21-ի ՍԴՈ-1358 որոշում):

Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1621 որոշման շրջանակներում նշել է. «(...) Սահմանադրության 3-րդ հոդվածը, **մարդուն հռչակելով որպես բարձրագույն արժեք, վերջինիս արժանապատվությունը դիտարկում է որպես սահմանադրական արժեհամակարգի հիմնաքար՝** հանրային իշխանությանը պարտավորեցնելով ապահովել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը՝ միաժամանակ սահմանափակելով հանրային իշխանությանը՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը արձանագրում է, որ **սահմանադրահիրավական կարգավորումների հիմքում մարդու արժանապատվությունն է, որի վրա խարսխվում են վերջինիս հիմնական իրավունքներն ու ազատությունները:** Այն կանխորոշում է հիմնական իրավունքների և ազատությունների թե՛ բովանդակությունը, թե՛ իրացման սահմանները, հետևաբար՝ մարդու արժանապատվության գերակայության գաղափարը պետք է ընկած լինի ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության հիմքում:

5.2. Մարդու արժանապատվության արժեքանական հիմունքներն արտացոլվել են նաև Սահմանադրության՝ «Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը» վերտառությամբ 31-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ յուրաքանչյուր

որ ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

Մարդու արժանապատվության, դրա անբաժանելի մաս կազմող պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի հարգումն ու պաշտպանությունն իրավական պետության ելակետային հատկանիշներից են և հասարակական արժեհամակարգի կարևորագույն բաղադրատարրերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշումների համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի իմաստով «մասնավոր կյանքը» լայն հասկացություն է, որը տարածվում է անձնական ինքնության հետ կապված մի շարք ասպեկտների վրա, ինչպիսիք են անձի անունը կամ համբավը, և, բացի դրանից, ներառում է անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը: Եվրոպական դատարանը նաև ճանաչել է, որ անձի՝ իր բարի համբավը պաշտպանելու իրավունքն ամրագրված է 8-րդ հոդվածում՝ որպես մասնավոր կյանքը հարգելու իրավունքի մաս (տես *Høiness v. Norway*, Application no. 43624/14, 19.03.2019, Final 19.06.2019, §63):

Մարդու արժանապատվության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական կարևորության մասին է վկայում նաև Սահմանադրի կողմից սույն արժեքների նկատմամբ անվերապահ հարգանք և պաշտպանություն ապահովող կարգավորումների ամրագրումը, մասնավորապես այն, որ **Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ կարծիքի արտահայտման ազատության՝ նույն հոդվածի 3-րդ մասով՝ սահմանափակման իրավաչափ նպատակ է դիտարկում այլոց պատվի ու բարի համբավի պաշտպանությունը:**

Այսպես՝ Սահմանադրության՝ «Կարծիքի արտահայտման ազատությունը» 42-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է յուրաքանչյուրի կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, որը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Կարծիքն ազատ արտահայտելու իրավունքն ընկած է ժողովրդա-

վարական հասարակության հիմքում: Այն ժողովրդավարական հասարակության, ինչպես նաև յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական պայմաններից մեկն է:

2017 թվականի դեկտեմբերի 26-ի ՍԴՈ-1396 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «(...) արտահայտվելու ազատությունը ոչ միայն մարդու իրավունքների ու ազատությունների, այլև հանրային շահերի համակարգում սկզբունքային կարևորության բաղադրիչ է, որի երաշխավորումը սահմանադրաիրավական և միջազգային իրավական պահանջ է»:

Այդուհանդերձ, կարծիքի արտահայտման ազատությունը չի կարող լինել բացարձակ և պետք է ներդաշնակ հավասարակշռվի հասարակության ու պետության կենսական շահերի, ինչպես նաև մարդու այլ հիմնարար իրավունքների հետ, ուստի՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ երկու սահմանադրական արժեքների՝ պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության և կարծիքի արտահայտման ազատության **հավասարակշռման միջոց է սահմանադրորեն նախատեսված իրավաչափ նպատակով, այն է՝ *այլոց պատվի ու բարի համբավի պաշտպանության նկատառումներից ելնելով՝ կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման հնարավորությունը*** (Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մաս):

Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի հոկտեմբերի 5-ի ՍԴՈ-1612 որոշմամբ որպես **կարծիքի ազատ արտահայտման իրավունքի իրականացման բովանդակային սահման է նշել մարդու արժանապատվության, պատվի ու բարի համբավի պաշտպանության անհրաժեշտությունը**, իսկ 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1646 որոշմամբ արձանագրել է, որ «(...) ժողովրդավարական հասարակության մեջ կարծիքի արտահայտման ազատությունը չի պաշտպանում անձի արժանապատվությունը նսեմացնելու նպատակ հետապնդող անվայելույց, անպարկեշտ խոսքը, ինչպես նաև անձի հանդեպ բացահայտ անպարկեշտ՝ հասարակության մեջ ընդունված բարոյական նորմերին հակասող վարքագիծը և անձի մարդկային արժանապատվությունը նսեմացնելուն նպատակադրված այլ ձևերը»:

Այսպիսով, Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ կարծիքի արտահայտման ազատության իրացման բովանդակային սահմանները որոշելու հարցում էական, որոշիչ նշանակություն ունի Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված անձի պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի երաշխավորումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024 35

Ողջ վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ *մի կողմից՝* ամրագրելով անձի կարծիքի արտահայտման ազատությունը, *մյուս կողմից՝* սահմանադրական պաշտպանության ներքո ընդգրկելով անձի արժանապատվության անքակտելի մաս կազմող պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը՝ **հանրային իշխանությունը կրում է սահմանադրաիրավական պարտականություն՝ հավասարակշռել հիշատակված երկու սահմանադրահեն արժեքները, ապահովել դրանց պաշտպանության արդյունավետ իրավական կառուցակարգերի կենսունակությունը:**

5.3. Սահմանադրության 75-րդ հոդվածն ամրագրում է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության վերոնշյալ պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ և իրական կենսագործմանը, քանի որ իրավունքի կամ ազատության սոսկ ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար, **ուստի՝ համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու հարցում:**

Սահմանադրական դատարանը, նախկինում անդրադառնալով սույն սահմանադրաիրավական պահանջի բովանդակությանը, հայտնել է հետևյալ դիրքորոշումները.

«Սահմանադրության վերոնշյալ պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ և իրական կենսագործմանը, քանի որ իրավունքի կամ ազատության միայն ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար, ուստի համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու հարցում» (2021 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴՈ-1618 որոշում):

«(...) Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությունից անմիջականորեն բխում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ օրենքով սահմանելու իրավունքի պաշտպանությանը միտված իրավական այնպիսի միջոցներ, որոնք կապահովեն անկախ, անաչառ և մատչելի

արդարադատության միջոցով անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ, արդար պաշտպանություն՝ ինչպես գործի ըստ էության քննության, այնպես էլ դատական ակտերի հետագա բողոքարկման շրջանակներում:

(...)

Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջն է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Հետևաբար, այս տեսանկյունից Սահմանադրական դատարանը կարևորում է ոչ միայն իրավունքի իրացման կարգի օրենքով նախատեսման փաստը սոսկ, այլև նման կարգի արդյունավետությունը, այսինքն՝ օրենքի նորմերում բովանդակվող իրավակարգավորիչ այնպիսի միջոցների, ձևերի առկայությունը և դրանց գործադրման հնարավորությունը, որոնք կերաշխավորեն սահմանադրորեն կանխորոշված նպատակի լիարժեք իրացումը՝ կոնկրետ դեպքում հաշվի առնելով նաև Սահմանադրության 78, 79, 80 և 81-րդ հոդվածների պահանջները» (2018 թվականի հունիսի 19-ի ՍԴՈ-1420 որոշում):

Սահմանադրական դատարանը, 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման մեջ անդրադառնալով Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությանը, արձանագրել է, որ «(...) ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) արդյունավետ իրականացման համար (2) անհրաժեշտ (3) կազմակերպական (4) կառուցակարգեր և (5) ընթացակարգեր: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը»:

2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են

կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները»:

Սահմանադրական դատարանը հայտնում է, որ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությունը հանրային իշխանության սահմանադրաիրավական պարտականությունն է. հանրային իշխանությունը կրում է պարտականություն՝ ապահովել պաշտպանության ենթակա նշված իրավունքի նկատմամբ **համակողմանի հարգանք և պաշտպանություն ապահովող արդյունավետ օրենսդրական կառուցակարգեր**, առանց որոնց հիշատակված սահմանադրական իրավունքը կկրի հոչակագրային բնույթ:

5.4. Այսպիսով, հանրային իշխանությունը պետք է երաշխավորի մարդու իրավունքների և ազատությունների ամբողջական և լիարժեք պաշտպանությունը, ի թիվս այլնի, նաև արդարադատության իրականացման բացառիկ առաքելություն ունեցող դատական համակարգի միջոցով՝ ապահովելով արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների կենսագործման համար անհրաժեշտ կառուցակարգեր:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ *օրենսդիրը, հաշվի առնելով մարդու արժանապատվության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության դատական կարգով պաշտպանության առանցքային նշանակությունը, ի թիվս այլնի, նաև քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսել է սույն սահմանադրաիրավական արժեքների երաշխավորմանը միտված կարգավորումներ:*

Մասնավորապես՝ Օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին կետի ուժով՝ անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են, ի թիվս այլնի նաև՝ դատական պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ Օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում և կարգով: Հիշատակված կարգավորմանը համահունչ՝ Օրենսգրքի՝ «**Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները**» վերտառությամբ 1087.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

Օրենսգրքի վերոնշյալ հոդվածը սահմանում է վիրավորանքի և զրպարտության օրենսդրական սահմանումները, համաձայն որոնց.

- **վիրավորանքը** խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է (Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 2-րդ մաս),

- **զրպարտությունն** անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը (Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 3-րդ մաս):

Անդրադառնալով «զրպարտություն» հասկացության իրավական բովանդակությանը՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշման շրջանակներում արձանագրել է, որ.

«Այս ձևակերպումից բխում է, որ զրպարտությանը բնորոշ հատկանիշներն են.

- ա/ խոսքը վերաբերում է փաստացի տվյալներին,*
- բ/ դրանք չեն համապատասխանում իրականությանը,*
- գ/ ներկայացվել են հրապարակայնորեն,*
- դ/ արատավորում են անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը,*

ե/ դրանք չեն վերաբերում միայն լրատվամիջոցներով ներկայացված փաստացի տվյալներին»:

Ինչ վերաբերում է զրպարտության՝ անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավն *արատավորող բնույթ* ունենալու իմպերատիվ պահանջին, ապա Սահմանադրական դատարանը հայտնում է, որ արատավորող կարող են լինել իրականությանը չհամապատասխանող՝ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը նսեմացնող այնպիսի տվյալները, որոնք բովանդակում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ տեղեկություններ, որոնք չեն հիմնավորվում թույլատրելի և վերաբերելի ապացույցներով:

Օրենքի միատեսակ կիրառության սահմանադրաիրավական պատվիրանի կենսագործման շրջանակներում Վճռաբեկ դատարանն իր նախադեպային պրակտիկայում սահմանել է կոնկրետ արտահայտությունը՝ որպես զրպարտություն գնահատելու համար հստակ չափանիշներ, որոնք են.

1. անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ, այսինքն՝ ներկայացվածն իր մեջ պետք է պարունակի կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական,

2. անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային¹,

3. ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի,

4. ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը (*տե՛ս, օրինակ, Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի ապրիլի 27-ի որոշումը*):

5.5. Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով վիրավորանքի և զրպարտության դեպքում օրենսդրորեն նախատեսված **իրավական պաշտպանության միջոցներին**² Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 7-րդ մասը սահմանում է անձի կողմից **վիրավորանքի դեպքում** դատական կարգով հայցվող պաշտպանության միջոցները (անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը), ինչպիսիք են՝

1) հրապարակայնորեն ներողություն խնդրելը (ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը),

¹ Վճռաբեկ դատարանի ձևավորած պրակտիկայի համաձայն՝ հրապարակային արտահայտությունը կամ հրապարակային ներկայացումը կարող է դրսևորվել տպագրության միջոցով, ռադիոյի կամ հեռուստատեսության միջոցով հեռարձակմամբ, զանգվածային լրատվության միջոցներով տարածմամբ, **համացանցի միջոցով տարածմամբ**, ինչպես նաև հեռահաղորդակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներով կամ որևէ այլ կերպ թեկուզ մեկ երրորդ անձի դրանց հաղորդակից դարձնելով (*տե՛ս Վճռաբեկ դատարանի 27.04.2012 թ. թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով որոշումը*):

2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով դատարանի վճիռը լրիվ կամ մասնակի հրապարակելը (հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը),

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարելը:

Իսկ վիճարկվող դրույթի՝ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ **զրպարտության դեպքում** անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ պաշտպանության միջոցները (մեկը կամ մի քանիսը).

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն զրպարտություն համարվող փաստացի տվյալները հերքելը և (կամ) դրանց վերաբերյալ իր պատասխանի հրապարակումը (հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հաստատանի Հանրապետության օրենքով),

2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարելը²:

Այսպիսով՝ օրենսդիրը, հաշվի առնելով, որ զրպարտությունը ենթադրում է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվության հրապարակային ներկայացում, ինչպես նաև ելնելով պատվի, արժանապատվության և գործարար (բարի) համբավի սահմանադրաիրավական բովանդակությունից, որպես զրպարտության դեմ առավել արդյունավետ պաշտպանության միջոց, նախատեսել է այնպիսի *հատուկ իրավական միջոցներ, ինչպիսիք են նման տեղեկատվության հերքումը և (կամ) դրանց վերաբերյալ պատասխանի հրապարակումը, որոնք, սակայն, օրենսդիրը հնարավոր է համարել բացառապես այն պարագայում, եթե հրապարակումը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ*: Միայն այդ դեպքում անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել է, կարող է լրատվության համապատասխան միջոցով (որով տարածվել են զրպարտություն համարվող տվյալները) հրապարակայնորեն հերքում և (կամ) զրպարտություն համարվող փաստացի տվյալների

² Գործող կարգավորմամբ սահմանվել է սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 6000-ապատիկի չափով փոխհատուցում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

վերաբերյալ իր պատասխանի հրապարակում պահանջել: **Ընդ որում՝ գործող օրենսդրական կարգավորումների ուժով զրպարություն համարվող տվյալների հերքումը և (կամ) պատասխանի հրապարակումը թեև կիրառելի են նաև սոցիալական ցանցերում՝ առցանց հարթակներում արված հրապարակումների դեպքում, այդ թվում՝ սոցիալական ցանցերի մեկնաբանությունների տիրույթում հնչեցրած արտահայտությունների առնչությամբ, սակայն միայն այն դեպքում, երբ զրպարությունը տեղ է գրել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության շրջանակներում:** Հակառակ դեպքում, երբ նման տեղեկատվությունը տարածվել է լրատվական գործունեություն չիրականացնող անձի համացանցային կայքի, այդ թվում՝ սոցիալական ցանցերում գործող անձնական օգտահաշվի միջոցով, գործող իրավակարգավորումների պայմաններում չի կարող խոսք լինել զրպարտություն համարվող փաստացի տվյալների հերքման և (կամ) դրանց վերաբերյալ պատասխանի հրապարակման պահանջի մասին: **Օրենսդիրն առհասարակ չի նախատեսել զրպարություն հանդիսացող տվյալների (տեղեկատվության)՝ համացանցային կայքից հեռացման օրենսդրական հնարավորություն, այդ թվում նաև՝ համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող զանգվածային լրատվության միջոցով նման տեղեկատվության տարածման պարագայում:**

Վերոգրյալի առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև **Վճռաբեկ դատարանի** ձևավորած պրակտիկային, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի իրավակարգավորումները կիրառելի են բացառապես այն դեպքում, երբ զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է.

«Տվյալ դեպքում օրենսդիրը նախատեսել է, որ անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը հատուցվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան, որի համաձայն՝ անձը, ում պատրիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարություն կատարած անձի դեմ: Անձի պատվին, արժանապատվությանը կամ

գործարար համբավին զրպարտության միջոցով վնաս պատճառված լինելու դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել ինչպես հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի փյվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը, այնպես էլ՝ վճարել սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապարիկի չափով փոխհատուցում: Ընդ որում, վերը նշված միջոցներից առաջինն անձը կարող է պահանջել **բացառապես այն դեպքում, երբ զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, այսինքն՝ «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով այն իրավաբանական կամ ֆիզիկական անձի, այդ թվում՝ անհար ձեռնարկատիրոջ, որն իր անունից լրատվության միջոցով, այդ թվում նաև՝ սոցիալական ցանցերում, առցանց հարթակներում, տարածել է այդ տեղեկատվությունը:**

(...)

Տվյալ դեպքում պատասխանող Մանե Գևորգյանը վերը նշված հրապարակումը «Facebook» համացանցային կայքում իրականացրել է ոչ թե որպես լրատվական գործունեություն իրականացնող, այլ՝ որպես այդ կայքի օգտատեր և իր անձնական էջում՝ «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով չհանդիսանալով ինչպես լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, այնպես էլ՝ անհար ձեռնարկատեր, իսկ այդ հրապարակումն էլ չի տարածվել նույն օրենքի իմաստով լրատվության միջոցով: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նրանով, որ Մանե Գևորգյանի վերը նշված անձնական էջը չի համապատասխանում «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով լրատվության միջոցին առաջադրվող պահանջներին» (տե՛ս թիվ ԵԴ/16144/02/20 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունիսի 10-ի որոշումը):

Ողջ վերոշարադրյալի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **զրպարտության օրենսդրական սահմանումը, ինչպես նաև դրա տարածման եղանակներն ավելի լայն են, քան դրա դեմ օրենքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցների շրջանակը:** Զրպարտության օրենսդրական սահմանումից հետևում է, որ **զրպարտող կարող է հանդիսանալ յուրաքանչյուր ոք,** ինչը ենթադրում է, որ կոնկրետ անձի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալների (statement of fact)

հրապարակային ներկայացման դեմ պաշտպանության միջոցները պետք է ուղղված լինեն անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանությանը՝ **անորոշ թվով անձանցից**, մինչդեռ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի իմաստով անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել է, կարող է դատական կարգով պահանջել զրպարտություն համարվող փաստացի տվյալների հերքում և (կամ) դրանց վերաբերյալ իր պատասխանի հրապարակում բացառապես այն պարագայում, երբ զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ:

5.6. Օրենսգրքի վիճարկվող դրույթը դիտարկելով համացանցի՝ տեխնոլոգիաների ներկայիս զարգացման փուլում հասարակության լայն շրջանակների կողմից որպես տեղեկատվության ստացման, տեղադրման և փոխանակման աղբյուրի ընկալման լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

տեխնոլոգիաների զարգացման աճն ու դրանով պայմանավորված՝ հասարակական հարաբերությունների սրընթաց զարգացումը, նպաստել են համացանցի՝ որպես համընդհանուր տարածում և ճանաչում ունեցող տեղեկատվության ստացման, տեղադրման և փոխանակման աղբյուրի վերածմանը: Համացանցը գլոբալ, համաշխարհային տեղեկատվական համակարգ է, որը միավորում է բազմաթիվ օգտատերերի ամբողջ աշխարհում: Ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ տեղեկատվությունը համացանցում ավելի արագ է տարածվում, քան սովորական (ավանդական) զանգվածային լրատվության միջոցներում. այն փոխանցվում է տարբեր ձևերով, տարբեր ծավալներով, անկախ հեռավորություններից և պետական սահմաններից՝ հաշված բոպենների ընթացքում հասանելի դառնալով **անորոշ (անսահմանափակ) թվով անձանց և, բացի դրանից, այդ եղանակով տարածվող տեղեկատվությունն ունի վերահսկելիության ավելի ցածր աստիճան և այդ տիրույթում մշտապես մնալու մեծ հավանականություն:**

Եվրոպական դատարանը, անդրադառնալով զրպարտություն համարվող և այլ՝ ակնհայտորեն ոչ իրավաչափ խոսքի՝ համացանցում տարածմանը, իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ՝ «(...) *օգտատերերի կողմից համացանցում արտահայտչական գործունեության ծավալումն արտահայտվելու ազատության աննախադեպ հնարա-*

վորություն է սպեղծում: Սա անվիճելի է և նախկինում այլ առիթների ժամանակ Դատարանի կողմից արդեն ճանաչվել է (տես Ahmet Yildirim-ն ընդդեմ Թուրքիայի, թիվ 3111/10, § 48, ՄԻԵԴ 2012, և Times Newspapers Ltd-ն (թիվ 1 և թիվ 2) ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 3002/03 և թիվ 23676/03, § 27, ՄԻԵԴ 2009): Սակայն այս առավելությունների հետ մեկտեղ որոշակի վրանգներ ևս կարող են սպեղծվել: Զրպարտիչ և այլ՝ ակնհայտորեն ոչ իրավաչափ խոսքը, այդ թվում նաև՝ արելության խոսքը և բռնության հրահրող կոչերը, կարող են վայրկյանների ընթացքում աշխարհով մեկ տարածվել ավելի արագ, քան նախկինում երբևէ տարածվել են, իսկ երբեմն նույնիսկ կայուն մնալ համացանցում: Այս երկու միմյանց հակասող իրականություններն ընկած են այս գործի հիմքում: Գիտակցելով Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքների պաշտպանության անհրաժեշտությունը և հաշվի առնելով այն, որ Կոնվենցիայի 8 և 10-րդ հոդվածներով ամրագրված իրավունքներն արժանի են հավասար հարգանքի, անհրաժեշտ է այս երկուսը հավասարակշռել այնպես, որ դրանց էությունը պահպանվի: Այսպիսով, չնայած Դատարանը ճանաչում է այն հանգամանքը, որ խոսքի ազատության իրացման տեսանկյունից համացանցը կարևոր առավելություններ է տալիս, այն նաև հաշվի է առնում, որ զրպարտիչ կամ այլ անօրինական բովանդակության համար պատասխանատվությունը պետք է սկզբունքորեն պահպանվի և հանդիսանա անձնական իրավունքների խախտման համար արդյունավետ միջոց» (տես Delfi AS v. Estonia, Application no. 64569/09, 16.06.2015, §110)³:

Նման պայմաններում Օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորումների ուժով պատվի, արժանապատվության և գործարար համբավի իրավական պաշտպանությունը զրպարտություն պարունակող տեղեկատվությունից, որը տեղ է գտել **1)** համացանցային կայքում, որը գրանցված է որպես զանգվածային լրատվության միջոց, և **2)** համացանցային կայքում, որը գրանցված չէ որպես այդպիսին (օրինակ՝ համացանցային կայքի օգտատիրոջ անձնական օգտահաշվում), և տարբերվում է՝ **չնայած այն հանգամանքին, որ հրապարակային հարթակում իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալների ներկայացման արդյունքում անձի համար առաջացած փաստական հետևանքները երկու պարագայում էլ գրեթե նույնական են:** Այլ կերպ՝ այն դեպքում, երբ զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալների տարածողը լրատվական գործունեություն

³ Հասանելի է <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-162655> հղմամբ:

իրականացնող չէ, **ապա դատական կարգով պաշտպանության՝ ոչ նյութական միջոցի կիրառման պահանջ ներկայացնելու և այդպիսի պահանջի բավարարում ստանալու օրենսդրական գործիքակազմը բացակայում է:**

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ զրպարտության միջոցով անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի դեմ կատարված ոտնձգության պայմաններում **լոկ նյութական հատուցման տրամադրման կառուցակարգերը բավարար չեն:** Խնդրո առարկա իրավունքին նման կերպ *ոտնձգելու պարագայում, երբեմն ոտնձգողի (անկախ սուբյեկտի) կողմից ոչ նյութական հատուցման միջոցով է հնարավոր ապահովել դրանց պաշտպանության արդյունավետությունն ու համարժեքությունը:* Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի *պաշտպանությունը երբեմն ենթադրում է ոչ նյութական հատուցման եղանակի կիրառում, որպիսի պարագայում է միայն հնարավոր լինում ապահովել դրա արդյունավետությունն ու լիարժեքությունը:* Ամեն դեպքում «տուժող կողմը» պետք է միշտ հնարավորություն ունենա ինքը որոշելու իրավունքի պաշտպանության որ եղանակն ու միջոցն ընտրի՝ ելնելով իր արժանապատվության, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի վերաբերյալ սեփական վերաբերմունքից ու պատկերացումից:

5.7. Տվյալ դեպքում, գործի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողի պատիվը և արժանապատվությունն արատավորող հրապարակումը տեղ է գտել ֆիզիկական անձ «Marina Poghosyan»-ի ֆեյսբուքյան էջի (անձնական օգտահաշվի) միջոցով, որը, ըստ խնդրո առարկա քաղաքացիական գործի նյութերի, չի հիմնավորվել, որ «Չանգվածային լրատվության մասին» օրենքի իմաստով զանգվածային լրատվության միջոց է, իսկ նշյալ օգտահաշվի օգտատերը՝ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, ուստիև՝ նշված **տեղեկության հրապարակային ներկայացումը չի համարվել լրատվության միջոցով իրականացված:**

Վերոշարադրյալի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Facebook» սոցիալական մեդիա հարթակն առցանց ծառայություն է, որը հնարավորություն է տալիս ստեղծել օգտահաշիվ, տեղադրել տեղեկատվություն և այլն: Վերջինս հասարակության լայն շրջանակներում ընկալվում է որպես զանգվածային լրատվության

միջոցներին փոխարինող այլընտրանքային տեղեկատվության աղբյուր, բայց միևնույն ժամանակ այդ հարթակում տեղեկատվություն տեղադրող և տարածող ամեն ոք չէ, որ լրատվական գործունեություն իրականացնող է, հետևաբար՝ համացանցում տեղեկատվության տարածման աղբյուր (սուբյեկտ) են հանդիսանում ոչ միայն լրատվական գործունեություն իրականացնողները, այլ նաև ցանկացած անձ, որն ազատ է թե՛ լրատվական գործունեություն իրականացնողների կողմից տեղադրված/տարածված տեղեկատվության՝ իր անձնական էջերում տնօրինման (մասնավորապես՝ իր անձնական էջում հրապարակելու/կիսվելու, խորագրելու, մեկնաբանություններ անելու), թե՛ սեփական տեղեկատվության տեղադրման, դրա տարածման հարցում: Ավելին, որոշ դեպքերում մասնավոր անձանց կողմից վարվող բազմաթիվ օգտահաշիվներ ներկայումս ապահովում են **ավելի մեծ դիտելիություն և տեղեկատվության ավելի արագ տարածում, քան առանձին զանգվածային լրատվության միջոցներ:**

Այս առնչությամբ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ չի անտեսում այն դյուրինությունը, ընդարձակ տարածման հնարավորությունները և արագությունը, որով տեղեկատվությունը կարող է տարածվել համացանցով, այդ թվում նաև՝ մեկ անգամ արդեն բացահայտված տեղեկատվության անընդհատ առկայությունը համացանցում, ինչը կարող է ծանրացնել ոչ իրավաչափ խոսքի հասցրած վնասի հետևանքները համացանցի միջոցով տարածման դեպքում, **որը շար ավելի ծանր է, քան կարող էր լինել ավանդական մամուլի դեպքում** (տե՛ս *Delfi AS v. Estonia, Application no. 64569/09, 16.06.2015, §147*)⁴:

Ողջ վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ անձի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող հրապարակային ներկայացված **փաստացի տվյալները (անկախ դրանք հրապարակող սուբյեկտի, քանի դեռ դրանք հրապարակային հարթակում են) հերքելու և (կամ) դրանք հեռացնելու օրենսդրական հնարավորության բացակայությունը հանգեցնում է անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի շարունակական արտադավորման, իմաստազուրկ է դարձնում զրպարտության դեպքում Օրենսգրքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցների գործնականում կիրառելիությունն ու դրանց արդյունավետությունը: Մինչդեռ հիմք ընդունելով այն, որ անձի պատի-**

⁴ Հասանելի է <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-162655> հղմամբ:

վր, արժանապատվությունն ու գործարար համբավը ոչ նյութական բարիքներ են, որպես դրանց պաշտպանության առաջնահերթ ձև՝ պետք է սահմանված լինի ոչ նյութական պահանջը: Այդ մասին է փաստում նաև Սահմանադրական դատարանն իր՝ 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴԴ-997 որոշման շրջանակներում՝ նշելով, որ «(...) արարավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պարճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը»:

Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ոչ նյութական արժեքներին վնաս հասցվելու պայմաններում, որպես առաջնահերթություն, ոչ նյութական վնասի հատուցման միջոցների կիրառման իմպերատիվ պահանջի հիմքում ընկած է այն ողջամիտ տրամաբանությունը, որ ոչ նյութական արժեքին վնաս պատճառելիս բացառապես նյութական հատուցում տրամադրելը չի կարող հանդիսանալ անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի դեմ ոտնձգությանը համարժեք պատասխանատվություն, քանի որ չի կարող համարժեքորեն փոխհատուցել (վերականգնել) անձի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասը:

5.8. Սույն գործի նյութերի ուսումնասիրության համաձայն՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը թիվ ԵԴ/9074/02/19 քաղաքացիական գործով իր՝ 22.03.2023 թ. որոշմամբ Օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով սահմանված պաշտպանության միջոցի կիրառման անհնարինության առնչությամբ նշել է հետևյալը.

«(...) սույն գործի քննության ընթացքում ֆեյսբուքյան օգտատեր «Marina Poghosyan»-ի լրավական գործունեությամբ զբաղվելու փաստը ապացուցված չլինելու պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ **վեճի առարկա հրապարակումը տեղի է ունեցել ֆիզիկական անձ «Marina Poghosyan»-ի ֆեյսբուքյան էջի միջոցով, որը չի կարող գնահատվել որպես լրավության միջոց՝** Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված տեղեկությունը չի կարող համարվել լրավության միջոցով փարածված:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով սահմանված պաշտպանության միջոցի կիրառման հիմքը: Հետևաբար՝ այս առնչությամբ բողոքաբերի պարճառաբանությունները Վերաքննիչ

դատարանի գնահատմամբ անհիմն են»:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ զրպարտություն հանդիսացող տվյալները (անկախ հրապարակող սուբյեկտից) **հրապարակային հարթակում (համացանցում) հասանելիության պայմաններում հերքելու և (կամ) դրանք հեռացնելու պահանջ ներկայացնելն անհնար է**, այդպիսի օրենսդրական կարգավորումը չի ապահովում Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված պահանջների արդյունավետ կենսագործումը՝ որպես հետևանք հանգեցնելով անձի դատական պաշտպանության և արդար դատաքնության իրավունքների խախտման՝ անձի արժանապատվության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության երաշխավորման համատեքստում:

Սահմանադրական դատարանը հայտնում է նաև, որ համացանցում հրապարակային ներկայացված տեղեկատվության **հերքումը և (կամ) հեռացումը** ոչ թե նույնական, այլ պաշտպանության **անկախ և ինքնավար միջոցներ են, և որոշ դեպքերում** համացանցում հրապարակային ներկայացված զրպարտություն հանդիսացող տեղեկատվությունը **հեռացնելը** կարող է անձի **պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանելու** առավել արդյունավետ միջոց հանդիսանալ՝ կանխելով զրպարտության շարունակական տարածումը և նման տեղեկատվության դիտումները համացանցում: Մինչդեռ օրենսդիրն **առհասարակ չի նախատեսել զրպարտություն պարունակող նյութը հեռացնելուն պարտավորեցնելու իրավական հնարավորություն:**

Վերոգրյալի առնչությամբ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ **պետք է գործեն անհրաժեշտ կազմակերպական այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կապահովեն անձի նկատմամբ իրականությանը չհամապատասխանող և նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալների (statement of fact) ներկայացման պայմաններում (անկախ դրանք ներկայացրած սուբյեկտի) դրանք հրապարակայնորեն հերքելու և (կամ) դրանց վերաբերյալ իր պատասխանը հրապարակելու և (կամ) դրանք հեռացնելուն պարտավորեցնելու հնարավորությունը, քանզի նման հնարավորության բացակայությունը հակասում է Սահմանադրության 31 և 75-րդ հոդվածներին:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասն այնքանով, որքանով լրատվական գործունեություն չիրականացնողի կողմից համացանցում տարածված զրպարտության դեպքում շահագրգիռ անձի համար չի նախատեսում զրպարտությունը հերքելու, դրա պատասխանը ներկայացնելու, այն հեռացնելու կամ վերը նշված կարգավորումներին համարժեք այլ հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 31-րդ հոդվածին (75-րդ հոդվածի հետ համակցությամբ) հակասող և անվավեր:

2. Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասը՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

1 հոկտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1752



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ
«ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԵՆՏՐՈՆ»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 հոկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատրյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Սյունիքի մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

Կառավարությունն իր՝ 2024 թվականի հուլիսի 25-ի N 1152-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Սյունիքի մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հուլիսի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Սյունիքի մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի մայիսի 14-ին՝ Հայաստանի Սյունիքի մարզում մաքսային և լոգիստիկ կենտրոնի (ՄԼԿ) կառուցման հարցում Հայաստանին օժանդակելու նպատակով:

2. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի VI հոդվածով սահմանված կարգով: Ստանդարտ պայմանների 9.02 բաժնի «գ» կետի նպատակների համար Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար որպես լրացուցիչ նախապայման սահմանված է Համաձայնագիրն համապատասխան և Բանկի կողմից ընդունելի համարվող Ծրագրի իրականացման գրասենյակի ստեղծումը:

Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու պետական մարմին և Ծրագիրն իրականացնող մարմին է հանդիսանում ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, իսկ լիազորված ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարությունը:

3. Համաձայնագիրն ունի թվով 4 հավելվածներ, Հավելված 1. «Ծրագրի նկարագրությունը», Հավելված 2. «Կատեգորիաները և Առհանումները», Հավելված 3. «Հատուկ հաշիվ», Հավելված 4. «Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը»:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

4.1. սկսած 2028 թվականի հուլիսի 15-ից մինչև 2040 թվականի հունվարի 15-ը՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին, [22] հավասարաչափ (կամ հնարավորինս հավասարաչափ) կիսամյակային վճարումներով՝ լողացող տոկոսադրույքով¹, մարել Վարկը, ընդ որում, Վարկի ամբողջ գումարը մինչև Համաձայնագրի 2.02 բաժնի «ե» կետում նշված վարկի առաջին վճարման ամսաթիվը չառհանելու և Բանկի կողմից Համաձայնագրի 2.02 բաժնի «զ» կետում նշված Վերջին հասանելիության ժամկետը մինչև Վարկի առաջին վճարման ամսաթվից հետո ընկնող օր երկարաձգելու դեպքում, Վարկի առաջին վճարման ամսաթվին կամ դրանից հետո կատարված յուրաքանչյուր առհանման գումար բաշխվում է վճարման համար հավասարաչափ մասնաբաժիններով՝ Վարկի մարման տարբեր ամսաթվերի միջև, որոնք այդ առհանումից հետո ընկած ժամանակահատվածում են (Բանկն ըստ անհրաժեշտության կլորացնում է այդ կերպ բաշխված գումարները՝ յուրաքանչյուր դեպքում ամբողջ թիվ ստանալու համար) (հոդված II, բաժին 2.02, կետեր «ե(1)», «ե(2)» և «ը»),

4.2. վճարել Պարտավճար՝ տարեկան 0.5% չափով (հոդված II, բաժին 2.02, կետ «է»),

4.3. Բանկի պահանջով Ծրագրի նպատակների համար բացել և պահպանել Վարկի արժույթով արտահայտված հատուկ ավանդային հաշիվ Հայաստանի Հանրապետության գանձապետարանում՝ Բանկի համար բավարար պայմաններով (հոդված II, բաժին 2.03, կետ «բ»),

4.4. բացի Ստանդարտ պայմանների IV հոդվածով սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, ապա ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ապահովելու բավարար միջոցներ և այլ ռեսուրսներ, այդ թվում՝ մարդկային ռեսուրսներ, Ծրագրի իրագործման համար, ինչպես նաև ձեռնարկել բոլոր գործողությունները և, մասնավորապես՝ ընդունել կամ պարտավորեցնել, որ ընդունվեն Բնապահպանական և սոցիալական գործողության ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր կանոնակարգերը (հոդված III, բաժին 3.01, կետեր «ա», «զ»),

¹ Չհակասելով վերոնշյալին՝ Հայաստանի Հանրապետությունը կարող է ինչպես վարկի ամբողջ գումարի, այնպես էլ դրա՝ այդ պահի դրությամբ չվճարված ցանկացած մասնաբաժնի համար որպես Լողացող տոկոսադրույքի այլընտրանք ընտրել վճարման համար Ֆիքսված տոկոսադրույքը Վարկի այդպիսի մասնաբաժնի համար՝ Ստանդարտ պայմանների 3.04 բաժնի «զ» կետին համապատասխան:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

4.5. բացի Ստանդարտ պայմանների IV հոդվածով սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկի հետ այլ համաձայնություն չեռք չի բերվել, ապա Վարկից ստացված միջոցներն օգտագործել բացառապես Ծրագրի իրականացման համար՝ համաձայն 1-ին հավելվածի (հոդված III, բաժին 3.01, կետ «բ»),

4.6. բացի Ստանդարտ պայմանների IV հոդվածով սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, ապա ապահովել, որ Ծրագիրն իրականացվի բարեխղճորեն և արդյունավետ կերպով՝ ողջամիտ ինժեներական, ֆինանսական և բիզնես գործելակերպերին համապատասխան, բոլոր կիրառելի օրենքների պահպանմամբ՝ պատշաճ կերպով հաշվի առնելով շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության պահանջները, ինչպես նաև ընդունելի միջազգային ստանդարտներին և գործելակերպերին համապատասխան և ապահովել, որ Ծրագրի իրականացման գրասենյակի համապատասխան բաժին(ներ) ը բարեխղճորեն և արդյունավետ կերպով վերահսկեն Ծրագրի իրականացման և կառավարման ամբողջ գործընթացը (հոդված III, բաժին 3.01, կետեր «գ» և «դ»),

4.7. բացի Ստանդարտ պայմանների IV հոդվածով սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկի հետ այլ համաձայնություն չեռք չի բերվել, ապա ձեռք բերել, պահպանել, թարմացնել բոլոր անհրաժեշտ լիցենզիաները, հաստատումները և գրանցումները և համապատասխանել դրանց (հոդված III, բաժին 3.01, կետ «ե»),

4.8. բացի Ստանդարտ պայմանների IV հոդվածով սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկի հետ այլ համաձայնություն չեռք չի բերվել, ապա պահպանել և իրականացնել, ինչպես նաև պարտավորեցնել Ծրագրի իրականացման գրասենյակի կապալառուներին պահպանելու և իրականացնելու Բնապահպանական և սոցիալական գործողության ծրագիրը (հոդված III, բաժին 3.01, կետ «է»),

4.9. բացի Ստանդարտ պայմանների IV հոդվածով սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկի հետ այլ համաձայնություն չեռք չի բերվել, ապա ապահովել, որ շինարարությունն ավարտելուց հետո 12 ամսվա ընթացքում ՄԼԿ-ն ձեռք բերի Էկոշինարարության հավաստագիր, ընդ որում ապահովել, որ այդ հավաստագիրը համապատասխանի «Էներգաարդյունավետ և բնապահպանական նախագծման ուղեցույցի» (LEED) առնվազն արժաթե կամ համարժեք մակարդակին (հոդված III, բաժին 3.01, կետ «ը»),

4.10. Ծրագրի իրականացման բոլոր հայեցակետերը, այդ թվում՝ Ծրագրի համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացը համակարգելու, կառավարելու, դիտանցելու և գնահատելու համար, եթե Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, Ծրագրի իրականացման մարմնին պարտավորեցնել ստեղծել բավարար ռեսուրսներ և համապատասխան որակավորմամբ անձնակազմ ունեցող ծրագրի իրականացման գրասենյակ (կամ այլ թիմային կառույց) և Ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում շահագործել այն՝ Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքներին համապատասխան (հոդված III, բաժին 3.02),

4.11. Ստանդարտ պայմանների 4.03 բաժնի նպատակներով՝ Ծրագրի համար անհրաժեշտ և Վարկից ստացված միջոցներով ֆինանսավորվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների գնման գործընթացն իրականացնել Համաձայնագրի III հոդվածի 3.03 բաժնի դրույթներով սահմանված կարգով՝ բացառությամբ Բանկի կողմից այլ համաձայնություն ձեռք բերելու դեպքի (հոդված III, բաժին 3.03),

4.12. ապահովել Համաձայնագրի III հոդվածի 3.04 բաժնում սահմանված բնապահպանական և սոցիալական նորմերի պահպանման դաշնագրերի կատարումը (հոդված III, բաժին 3.04),

4.13. եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի հետ, Ծրագրի իրականացման հարցում աջակցություն ցուցաբերելու համար, ըստ անհրաժեշտության, ներգրավել կամ պարտավորեցնել ներգրավել խորհրդատուներ և օգտվել վերջիններիս ծառայություններից, որոնց որակավորումները, փորձը և տեխնիկական առաջադրանքները բավարար են Բանկի համար, այդ թվում նաև խորհրդատուներ՝ Ծրագրի իրականացման գրասենյակին աջակցելու համար (հոդված III, բաժին 3.05, կետ «ա»),

4.14. Ծրագրին առնչվող հարցերում կամ գործողություններին աջակցելու համար ներգրավված ցանկացած խորհրդատուի անվճար տրամադրել իրենց գործառույթների իրականացման համար անհրաժեշտ բոլոր միջոցները և օժանդակությունը, ինչպես նաև բոլոր փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկություններ, որոնք կարող են վերաբերել նրանց աշխատանքին (հոդված III, բաժին 3.05, կետ «բ»),

4.15. ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած՝ կիսամյակային կտրվածքով հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո [60] օրվա ընթացքում

մինչև Ծրագրի ավարտը ներկայացնել Ստանդարտ պայմանների 4.04 «ա» (v) բաժնում նշված Ծրագրի պարբերական հաշվետվությունները. այդ հաշվետվությունները ներառում են Համաձայնագրի III հոդվածի 3.07 բաժնի «բ» կետում շարադրված հատուկ հատկանիշները (հոդված III, բաժին 3.07, կետ «բ»),

4.16. անմիջապես Հայաստանի Հանրապետության (Ծրագրի իրականացման մարմնի) հետ կապված որևէ միջադեպից կամ պատահարից հետո, որն ունի կամ կարող է էական բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, աշխատողների կամ հասարակական կամ մասնագիտական առողջության կամ անվտանգության վրա, տեղեկացնել Բանկին և դրանից հետո անմիջապես ծանուցել Բանկին այդ մասին՝ նշելով այդպիսի միջադեպի կամ պատահարի բնույթը և այն շտկելու համար ձեռնարկված բոլոր քայլերը, բացառությամբ այն դեպքերի, երբ միջադեպը ներառում է անձի հետ կապված զգայուն տեղեկություններ կամ հաշվեհարդարի որևէ ռիսկ, որի դեպքում Բանկին ուղղված նախնական ծանուցումը չի ներառում ներգրավված անձանց ինքնության մասին մանրամասն տվյալներ (հոդված III, բաժին 3.07, կետ «գ»),

4.17. անհապաղ ծանուցել Բանկին աշխատողների կամ հանրության անդամների ցանկացած նշանակալի բողոքի կամ միջնորդության մասին, որն ուղղված է կամ առնչվում է Հայաստանի Հանրապետությանը (Ծրագրի իրականացման մարմնին) կամ Ծրագրին, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության (Ծրագրի իրականացման մարմնի) կամ Ծրագրի վրա, կամ որը դարձել է կամ ամենայն հավանականությամբ հայտնի կդառնա հանրությանը լրատվամիջոցների կողմից լուսաբանման միջոցով կամ այլ կերպ և այդ ծանուցումից հետո տասը օրվա ընթացքում Բանկին ներկայացնել բավարար հաշվետվություն՝ նշելով նման բողոքի մասով քննության արդյունքը և Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկված կամ առաջարկվող քայլերը՝ բողոքով կամ միջնորդությամբ բարձրացված հարցերը լուծելու համար (հոդված III, բաժին 3.07, կետ «դ»),

4.18. Հայաստանի Հանրապետության ստորաբաժանումների կամ գերատեսչությունների (Ծրագրի իրականացման մարմնի) մասով, որոնք պատասխանատու են Ծրագրի կամ դրա որևէ մասի իրականացման համար, վարել ընթացակարգեր, փաստաթղթեր և հաշվետվություններ, որոնք բավարար են միջազգայնորեն ընդունված հետևողականորեն կիրառվող հաշվապահական հաշվառման ստան-

դարտներին համապատասխան Ծրագրի հետ կապված կիրառելի գործառնությունները, ռեսուրսները և ծախսերը ներկայացնելու, ինչպես նաև Ծրագրի առաջընթացը (այդ թվում՝ դրա ծախսերը և դրանից բխող օգուտները) վերահսկելու և արձանագրելու համար (հոդված IV, բաժին 4.01, կետ «ա»),

4.19. ունենալ Հատուկ հաշվին առնչվող փաստաթղթերն ու հաշվետվությունները՝ յուրաքանչյուր Ֆինանսական տարվա համար և ապահովել, որ վերջիններիս աուդիտն իրականացվի Բանկի համար ընդունելի անկախ աուդիտորների կողմից՝ միջազգայնորեն ընդունված աուդիտի սկզբունքներին և ստանդարտներին համապատասխան, հնարավորինս շուտ, սակայն ամեն դեպքում՝ յուրաքանչյուր Ֆինանսական տարվա ավարտից ոչ ուշ, քան վեց ամիս հետո, Բանկին տրամադրել աուդիտորների կողմից այդպիսի ծավալով և մանրամասն ներկայացված հաշվետվություն և այդ փաստաթղթերի, հաշվետվությունների և դրանց աուդիտի վերաբերյալ այնպիսի այլ տեղեկություններ, որոնք Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել (հոդված IV, բաժին 4.01, կետ «բ»),

4.20. չնայած Համաձայնագրի 2-րդ հավելվածի 1-ին պարբերության դրույթների՝ Առհանումները կատարել Համաձայնագիրը կնքելուց առաջ ի հայտ եկած ծախսերի նկատմամբ (Հավելված 2, պարբերություն 3),

4.21. Հատուկ հաշվից կատարվող վճարումները կատարել բացառապես Թույլատրելի ծախսերի համար՝ համաձայն Համաձայնագրի հավելված 3-ի դրույթների (Հավելված 3, պարբերություն 2),

4.22. Համաձայնագրի Հավելված 3-ի 8-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված դեպքերում Բանկի ծանուցումից անմիջապես հետո Բանկին որպես կանխավճար վճարել այդ գումարին համարժեք Վարկի մի մասը (Հավելված 3, պարբերություն 8),

4.23. իրականացնել Ծրագիրը Համաձայնագրի Հավելված 3-ով սահմանված՝ Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրին համապատասխան (Հավելված 4):

5. Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանության մեջ առկա են թարգմանչական/տեխնիկական թերություններ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի

մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Սյունիքի մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

8 հոկտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1753



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՔԱՂԱՔ ԲԻՇՔԵԿՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՆՑԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ (ԼՎԱՑՄԱՆ)
ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 հոկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատրյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հ. Խաչատրյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի հոկտեմբերի 13-ին քաղաք Բիշքեկում ստորագրված՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի գնահատման միջազգային կենտրոն ստեղծելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի մայիսի 8-ի N 669-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի հոկտեմբերի 13-ին քաղաք Բիշքեկում ստորագրված «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի գնահատման միջազգային կենտրոն ստեղծելու մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հուլիսի 30-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը և հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունն ու առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի գնահատման միջազգային կենտրոն ստեղծելու մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի հոկտեմբերի 13-ին Բիշքեկ քաղաքում՝ ԱՊՀ անդամ պետությունների միջև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատման ապահովման, ֆինանսական հետախուզության մարմինների միջև տեղեկատվական համագործակցության արդյունավետության մակարդակի բարելավման նպատակով:

2. Համաձայնագիրը նախատեսում է արդյունավետ միջպետական տեղեկատվական փոխգործակցություն ապահովելու և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատում

անցկացնելու նպատակով Հանցավոր եղանակով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի գնահատման միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ՌԳՄԿ) ստեղծում:

3. ՌԳՄԿ-ի գործունեության կազմակերպատեխնիկական և տեղեկատվական ապահովումն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության Ֆինանսական մոնիտորինգի դաշնային ծառայության կողմից, որը հանդիսանում է ՌԳՄԿ-ի օպերատոր և իր գործունեության մեջ առաջնորդվում է կիրառելի միջազգային պայմանագրերով և Ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների ղեկավարների խորհրդի (այսուհետ՝ ՖՀՍԴԽ) կողմից ընդունված որոշումներով, ինչպես նաև քննության առարկա Համաձայնագրով:

ՌԳՄԿ տեղեկատվական համակարգի տվյալների մշակման ծրագրային և ապարատային համալիրները տեղակայված են Ռուսաստանի Դաշնության տարածքում:

Համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվում են ՌԳՄԿ օպերատորի պարտավորությունները և ենթակայությունը, իսկ Համաձայնագրի 6-րդ հոդվածով՝ ՌԳՄԿ հիմնական գործառույթները:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

4.1. ապահովել ՀՀ օրենսդրությանը, Համաձայնագրին և կիրառելի այլ միջազգային պայմանագրերին համապատասխան գաղտնիության ռեժիմի պահպանումը, իրականացնել անհրաժեշտ կազմակերպատեխնիկական և իրավական միջոցները, որոնք ուղղված են Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվության պաշտպանությանը, ներառյալ՝ պատասխանատվության միջոցների կիրառումը՝ պատահական կամ ոչ իրավաչափ ոչնչացումից, փոփոխումից, հրապարակումից, ինչպես նաև ցանկացած այլ ոչ իրավաչափ օգտագործումից (հոդված 4, կետ 2),

4.2. որպես տեղեկատվությունը տրամադրող կողմ՝ որոշել ՌԳՄԿ տեղեկատվական համակարգում պարունակվող տեղեկատվության օգտագործման նպատակը և հնարավորությունը, ինչպես նաև որոշել տեղեկատվության պահպանման ժամկետը՝ ելնելով այն նպատակից, որի համար տվյալ տեղեկատվությունը տեղադրվել, հարցվել և (կամ) տրամադրվել է (հոդված 4, կետ 3),

4.3. որպես տրամադրող կողմ՝ որոշել ՌԳՄԿ տեղեկատվական համակարգում տեղադրելու համար տրամադրվող տվյալների ծավալը, տվյալների գաղտնիության և դրանց օգտագործման ռեժիմը (հոդված 7, կետ 4),

4.4. ապահովել, որ ՀՀ ֆինանսական հետախուզության ստորաբաժանումները իրականացնեն ապարատաձրագրային միջոցներով տեղեկատվության փոխանցումը ՌԳՄԿ տեղեկատվական համակարգ (հոդված 7, կետ 5),

4.5. ապահովել, որ ՀՀ ֆինանսական հետախուզության ստորաբաժանումներն օգտագործեն ՌԳՄԿ տեղեկատվական համակարգն այն դրամական միջոցների կամ այլ գույքի, վիրտուալ ակտիվների հետ գործառնությունների (գործարքների) մասին իրենց տրամադրության տակ եղած տեղեկատվության փոխանակման համար, որոնց վերաբերյալ կասկածներ կան, որ դրանք կապված են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման), ահաբեկչության ֆինանսավորման և դրա հետ կապված այլ հանցագործությունների հետ, ինչպես նաև այդ գործառնությունների կատարմանը մասնակցող անձանց և կազմակերպությունների մասին տեղեկատվության փոխանակման համար (հոդված 8, կետ 1),

4.6. ապահովել, որ ՀՀ ֆինանսական հետախուզության ստորաբաժանման կողմից հարցման կատարման անհնարինության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացվի հարցում ներկայացնող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումը՝ նշելով մերժման պատճառը (հոդված 9, կետ 3, պարբերություն 2),

4.7. ապահովել, որ հարցումները և դրանց պատասխանները ներկայացվեն ռուսերենով, եթե կողմերն այլ բան չեն պայմանավորվել (հոդված 9, կետ 5),

4.8. ապահովել, որ հարցումը կատարվի հնարավորինս սեղմ ժամկետում, բայց, ոչ ուշ, քան այն ստանալու պահից 60 օր անց, եթե Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումներն այլ բան չեն պայմանավորվել (հոդված 9, կետ 6),

4.9. ապահովել, որ հարցում ներկայացնող ՀՀ ֆինանսական հետախուզության ստորաբաժանումն իր նախաձեռնությամբ կամ հարցվող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանման հարցման հիման վրա տեղեկատվություն ուղարկի Համաձայնագրի շրջանակներում հարցվող Կողմի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումից ստացված տեղեկությունների օգտագործման արդյունքների մասին (հոդված 9, կետ 7),

4.10. ապահովել, որ ՀՀ ֆինանսական հետախուզության ստորաբաժանումները մյուս Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների հետ համատեղ՝ կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան, որոշեն միմյանց միջև տեղեկատվության փոխանակման կարգը և անհրաժեշտության դեպքում խորհրդակցություններ անցկացնեն Համաձայնագրի իրականացման հարցերով (հոդված 10, կետ 1),

4.11. ՖՀՍԴԽ համակարգմամբ համատեղ իրականացնել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատում (հոդված 11, կետ 1),

5. ՖՀՍԴԽ-ն հաստատում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատման արդյունքները, որոշում է դրանց գաղտնիության աստիճանը՝ Կողմերի հետ համաձայնեցմամբ: Հաշվի առնելով ՖՀՍԴԽ-ի որոշումները՝ Կողմերի ֆինանսական հետախուզության ստորաբաժանումներն ինքնուրույն են որոշում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի անդրազգային գնահատման արդյունքներն ստացողների շրջանակը և տրամադրման կարգը (հոդված 11, կետ 5):

6. Համաձայնագրով արգելվում է Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը, առանց այն տեղադրած և (կամ) տրամադրած Կողմի նախնական գրավոր համաձայնության օգտագործել այլ նպատակներով, քան նրանց, որոնց համար այն հարցվել և (կամ) տրամադրվել է և տեղադրվել է ՌԳՄԿ տեղեկատվական համակարգում:

7. Համաձայնագրից բխում է, որ Համաձայնագրի շրջանակում ստացված տեղեկությունների վրա տարածվում են գաղտնիության այն ռեժիմները, որոնք նախատեսված են տվյալ տեղեկության համար տեղեկությունը ներկայացնող երկրի օրենսդրությամբ: Համաձայնագրի շրջանակում ստացված տեղեկությունները կարող են օգտագործվել միայն համաձայնագրում ներկայացված նպատակներով :

Համաձայնագրի՝ տեղեկատվության գաղտնիության մասին դրույթները շարունակում են կիրառվել Համաձայնագրի գործողությունը դադարելուց կամ դրանից դուրս գալուց հետո:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «2023 թվականի հոկտեմբերի 13-ին քաղաք Բիշքեկում ստորագրված «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի գնահատման միջազգային կենտրոն ստեղծելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

8 հոկտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1754



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 հոկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատրյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Արտաքին գործերի նախարարի տեղակալ՝ Մ. Սաֆարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի ապրիլի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների այցելությունների և գտնվելու կարգի մասին»

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1304-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի ապրիլի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների այցելությունների և գտնվելու կարգի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի օգոստոսի 26-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների այցելությունների և գտնվելու կարգի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի ապրիլի 15-ին Երևանում Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության քաղաքացիների այցելությունների ու գտնվելու կարգի իրավական կանոնակարգման նպատակով:

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից դադարում է 2006 թվականի նոյեմբերի 6-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև՝ քաղաքացիների փոխադարձ այցելությունների մասին» համաձայնագրի գործողությունը:

2. Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից և 11 հոդվածից:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից 30 (երեսուն) օր հետո:

Ուժի մեջ մտնելուց հետո Համաձայնագրի դրույթները երկու պետությունների քաղաքացիներին, վավերական ճամփորդական փաստաթղթի առկայության պարագայում, կտան մյուս պետություն մուտք գործելու, դուրս գալու, տարանցմամբ անցնելու, տեղաշարժվելու և պետական սահմանը հատելու օրվանից մինչև 90 օրվա ընթացքում վերջինի տարածքում գտնվելու հնարավորություն:

Համաձայնագիրը նաև կազատի մի կողմի տարածքում ժամանակավորապես գտնվող՝ մյուս կողմի քաղաքացիներին մուտքի պետության իրավասու մարմիններում 30 օրվա ընթացքում ըստ գտնվելու վայրի հաշվառվելու պարտավորությունից:

Համաձայնագիրը չի սահմանափակում Կողմերից յուրաքանչյուրի իրավունքը՝ մերժել մյուս Կողմի այն քաղաքացիների մուտքը, որոնց ներկայությունն իր տարածքում ցանկալի չէ:

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջովին կամ մասամբ կասեցնելու Համաձայնագրի գործողությունը, եթե դա անհրաժեշտ է պետության անվտանգության ապահովման, հասարակական կարգի կամ իր պետության բնակչության առողջության պաշտպանության համար:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

3.1. Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավորապես գտնվող՝ Ղազախստանի Հանրապետության քաղաքացիներին ազատել ՀՀ իրավասու մարմիններում 30 (երեսուն) օրվա ընթացքում գրանցվելու (ըստ գտնվելու վայրի՝ հաշվառման կանգնելու) պարտավորությունից (հոդված 2, կետ 1),

3.2. Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցագրի փոխանակման օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում Ղազախստանի Հանրապետության հետ փոխանակել Համաձայնագրում նշված՝ վավերական ճամփորդական փաստաթղթերի նմուշները (հոդված 3, կետ 2),

3.3. դիվանագիտական ուղիներով հայտագրերի փոխանակմամբ ժամանակին Ղազախստանի Հանրապետությանը ծանուցել վավերական նոր ճամփորդական փաստաթղթեր գործածության մեջ դնելու, ինչպես նաև գործող փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին և այդ փաստաթղթերի նմուշները փոխանակել ոչ ուշ, քան նշված

փաստաթղթերը գործողության մեջ դնելուց 30 (երեսուն) օր առաջ (հոդված 3, կետ 3),

3.4. Ղազախստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետության տարածքում Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված փաստաթղթերը կորցնելու և այդ մասին Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին տեղեկացնելու դեպքում ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները տրամադրեն փաստաթղթերը կորցնելու մասին հայտը հաստատող տեղեկանք (հոդված 6, կետ 1),

3.5. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը և հյուպատոսական հիմնարկը ՀՀ քաղաքացիներին տրամադրի Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված՝ ՀՀ վերադառնալու համար ճամփորդական փաստաթուղթ՝ ՀՀ օրենսդրության համապատասխան (հոդված 6, կետ 2),

3.6. Ղազախստանի Հանրապետությանը դիվանագիտական ուղիներով ծանուցել ՀՀ տարածք մուտք գործելու, ՀՀ տարածքից դուրս գալու, ՀՀ տարածքում գտնվելու պայմանների փոփոխության մասին ոչ ուշ, քան այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց 30 (երեսուն) օր առաջ (հոդված 7),

3.7. Ղազախստանի Հանրապետությանն անհապաղ տեղեկացնել Համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված միջոցառումների ձեռնարկման և դրանց վերացման մասին ոչ ուշ, քան նման որոշում ընդունելուց 15 (տասնհինգ) օր առաջ (հոդված 10, կետ 2):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին, ինչպես նաև նպաստում են Սահմանադրության 40-րդ հոդվածով ամրագրված՝ **յուրաքանչյուրի ազատ տեղաշարժվելու իրավունքի պատշաճ իրացմանը:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի

մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2024 թվականի ապրիլի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների այցելությունների և գտնվելու կարգի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

8 հոկտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1755



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀՈՎՆԱՆՅԱՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 331-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ
432-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 հոկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ «Հովնանյան Ինտերնեյշնլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Դիմող) ներկայացուցիչներ՝ փաստաբաններ Տ. Սարգսյանի և Է. Օհանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի (այսուհետ՝ Պատասխանող) ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Հովանյան Ինտերնեյշնլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի և 432-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքն (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին:

Օրենսգրքի՝ «**Հայցային վաղեմություն հասկացությունը**» վերտառությամբ 331-րդ հոդվածը սահմանում է.

«Հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը»:

Օրենսգրքի՝ «**Պարտավորության դադարելը կատարման անհնարինությամբ**» վերտառությամբ 432-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝

«1. Պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ: Այդ դեպքում պարտատերն իրավունք չունի պարտապանից պահանջել պարտավորության կատարում»:

Օրենսգրքի վիճարկվող դրույթները չեն փոփոխվել/լրացվել:

Գործի քննության առիթը Դիմողի՝ 2024 թվականի հուլիսի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, սույն գործով Պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի վերաբերելի դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

1.1. Ալեքսանդր Հովհաննեսի Մանուկյանի ներկայացուցիչը 2020 թվականի նոյեմբերի 2-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Դիմողի, երրորդ անձ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի՝ պարտավորությունները դադարած ճանաչելու, որպես հետևանք հողամասի նկատմամբ

գրանցված սահմանափակումների դադարման պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

1.2. Դատարանը 2020 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ վերոնշյալ հայցադիմումն ընդունել է վարույթ:

1.3. Դիմողը 2021 թվականի դեկտեմբերի 3-ին հակընդդեմ հայց է ներկայացրել ընդդեմ Ալեքսանդր Հովհաննեսի Մանուկյանի, երրորդ անձ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի՝ պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

1.4. Դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ Դիմողի հակընդդեմ հայցադիմումն ընդունել է վարույթ և որոշել այն քննել սկզբնական հայցի հետ համատեղ:

1.5. Հակընդդեմ հայցի շրջանակներում 2021 թվականի դեկտեմբերի 21-ին Ալեքսանդր Հովհաննեսի Մանուկյանի ներկայացուցիչը Դատարան է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու միջնորդություն:

1.6. Դատարանը 2022 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ թիվ ԵԴ/31572/02/20 քաղաքացիական գործից առանձնացրել է Ալեքսանդր Հովհաննեսի Մանուկյանի՝ ի դեմս օրինական ներկայացուցիչ Արմինե Հենրիկի Մանուկյանի, սկզբնական հայցն ընդդեմ Դիմողի, երրորդ անձ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի՝ պարտավորությունները դադարած ճանաչելու, որպես հետևանք հողամասի նկատմամբ գրանցված սահմանափակումների դադարման պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, և Դիմողի հակընդդեմ հայցն ընդդեմ Ալեքսանդր Հովհաննեսի Մանուկյանի, երրորդ անձ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի՝ պայմանագրի 6.1.4.2., 6.1.4.3. և 6.1.4.4. կետերով սահմանված պարտավորությունների կատարելուն պարտավորեցնելու պահանջը:

1.7. Դատարանը, քննելով թիվ ԵԴ/31572/02/20 քաղաքացիական գործը, 2022 թվականի փետրվարի 23-ին վճռել է.

«Հայցային վաղեմություն կիրառելու մասին հակընդդեմ հայցով պատասխանող Ալեքսանդր Հովհաննեսի Մանուկյանի՝ ի դեմս օրինական ներկայացուցիչ Արմինե Հենրիկի Մանուկյանի ներկայացուցչի միջնորդությունը բավարարել մասնակի:

1. Թիվ ԵԴ/31572/02/20 քաղաքացիական գործով «Հովհաննյան Ինթերնեյշնլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հակընդդեմ հայցն ընդդեմ Ալեքսանդր Հովհաննեսի Մանուկյանի՝ ի դեմս օրինական ներկայացուցիչ Արմինե Հենրիկի Մանուկյանի,

երրորդ անձ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մասնակի՝ պայմանագրի 6.1.1., 6.1.2., 6.1.3. 6.1.4.1. կետերով սահմանված պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով, մերժել՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքով (...):»:

1.8. Դատարանը, քննելով թիվ ԵԴ/32029/02/22 քաղաքացիական գործն ըստ հայցի Ալեքսանդր Հովհաննեսի Մանուկյանի՝ ի դեմս օրինական ներկայացուցիչ Արմինե Հենրիկի Մանուկյանի, ընդդեմ Դիմողի, երրորդ անձ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի՝ պարտավորությունները դադարած ճանաչելու, որպես հետևանք հողամասի նկատմամբ գրանցված սահմանափակումների դադարման պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի՝ Դիմողի ընդդեմ Ալեքսանդր Հովհաննեսի Մանուկյանի, երրորդ անձ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի՝ պայմանագրի 6.1.4.2, 6.1.4.3 և 6.1.4.4 կետերով սահմանված պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, 2023 թվականի մարտի 10-ին վճռել է.

«Ալեքսանդր Հովհաննեսի Մանուկյանի՝ ի դեմս օրինական ներկայացուցիչ Արմինե Հենրիկի Մանուկյանի, հայցն ընդդեմ «Հովսեփյան Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի, երրորդ անձ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ պարտավորությունները դադարած ճանաչելու, որպես հետևանք հողամասի նկատմամբ գրանցված սահմանափակումների դադարման պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել:

Դադարած ճանաչել 07.12.2007թ. կնքված Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի 6.1.4.2., 6.1.4.3. և 6.1.4.4 կետերով սահմանված պարտավորությունները:

Վերացնել ք. Երևան, Վահագնի թաղամաս, 5 տեղամաս, Գանձասար-21 հողամասի նկատմամբ ՀՀ Կադաստրի կոմիտեում առկա սահմանափակումների պետական գրանցումը:

«Հովսեփյան Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հակընդդեմ հայցն ընդդեմ Ալեքսանդր Հովհաննեսի Մանուկյանի, երրորդ անձ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ պայմանագրի 6.1.4.2, 6.1.4.3 և 6.1.4.4 կետերով սահմանված պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել: (...):»:

Սույն վճռով Դատարանը, ի թիվս այլնի, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Անդրադառնալով սկզբնական հայցին՝ Դատարանը պարզված է համարում հետևյալը.

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (նախագահությամբ՝ դատավոր Ս. Իսկանդարյանի) թիվ ԵԴ/31572/02/20 քաղաքացիական գործով 23.02.2022թ. վճռի համաձայն՝ «Հովհաննյան Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հակընդդեմ հայցն ընդդեմ Ալեքսանդր Հովհաննեսի Մանուկյանի՝ ի դեմս օրինական ներկայացուցիչ Արմինե Հենրիկի Մանուկյանի, երրորդ անձ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մասնակի՝ պայմանագրի 6.1.1., 6.1.2., 6.1.3. 6.1.4.1. կետերով սահմանված պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով, մերժվել է՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքով:

(...)

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կողմերից մեկի պահանջով թույլատրվում է դադարեցնել պարտավորությունը միայն օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում:

Վերոգրյալ վճռի և իրավական նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ սկզբնական հայցվորն այլևս պարտավոր չէ կատարել պայմանագրի 6.1.1., 6.1.2., 6.1.3., 6.1.4.1 կետերով նախատեսված գործողությունները, ուստի այդ կետերով սահմանված պարտավորությունները դադարել են օրենքի ուժով:

Հակառակ մոտեցումը կհանգեցնի իրավական որոշակիության սկզբունքի խախտման, միաժամանակ կխախտվի նաև սկզբնական հայցվորի՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածով հռչակված սեփականության իրավունքը:

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը գտնում է, որ պետք է դադարած ճանաչել 6.1.1., 6.1.2., 6.1.3. 6.1.4.1. կետերով սահմանված պարտավորությունները և որպես հետևանք այդ մասով վերացնել ք.

Երևան, Վահագնի թաղամաս, 5 տեղամաս, Գանձասար-21 հողամասի նկատմամբ ՀՀ Կադաստրի կոմիտեում առկա սահմանափակումների պետական գրանցումը:

(...)

(...) Դատարանը եզրահանգում է, որ 6.1.4.2., 6.1.4.3. և 6.1.4.4 կետերով սահմանված պարտավորությունները 6.1.4.1 կետով սահմանված պարտավորության ածանցյալ պարտավորություններ են, որոնք առանց 6.1.4.1 կետի ինքնուրույն գոյություն ունենալ չեն կարող, քանի որ 6.1.4.1 կետով սահմանված է, որ ճարտարապետաշինարարական նախագիծը Վաճառողին պետք է ներկայացվի ոչ ուշ, քան 2009 /երկու հազար ինը/թ.-ի սեպտեմբերի 30 /երեսուն/-ը մինչև դրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված/նախատեսված փորձաքննությունների անցկացումը և (կամ) հաստատումների և (կամ) վավերացումների և (կամ) համանման այլ ձևակերպումների/արձանագրությունների իրականացումը, իսկ Պայմանագրի 6.1.4.2., 6.1.4.3. և 6.1.4.4 կետերով սահմանված սահմանափակումները վերաբերում են այդ ճարտարապետաշինարարական նախագծի վերաբերյալ Վաճառողի դիտողություններին, նկատառումներին, փոփոխություններին, լրացումներին, համաձայնեցմանը:

Այս պայմաններում, նկատի ունենալով, որ Դատարանը արդեն իսկ դադարած է ճանաչել Պայմանագրի 6.1.4.1 կետով սահմանված սահմանափակումները՝ Դատարանը գտնում է, որ իմաստազուրկ է նույն Հողամասի կառուցապատման ճարտարապետաշինարարական նախագծի վերաբերյալ Վաճառողի դիտողություններն ու նկատառումները հաշվի առնելը, Վաճառողի հետ համաձայնեցված ճարտարապետաշինարարական նախագծի փոփոխություններ և/կամ լրացումներ և/կամ այլ բնույթի վերափոխումներ նախաձեռնվելը և/կամ իրականացվելը, ինչպես նաև Վաճառողի հետ ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցումը կարգով ու ժամկետներում համապատասխան ապահովվումը:

Վերոգրյալից ելնելով և նկատի ունենալով, որ Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի 6.1.4.1 կետով սահմանված պարտավորությունները ճանաչվում են դադարած, ուստի նույն կետին ածանցյալ համարվող 6.1.4.2., 6.1.4.3. և 6.1.4.4 կետերով սահմանված պարտավորությունները նույնպես պետք է ճանաչել դադարած և որպես հետևանք այդ մասով նույնպես վերացնել ք. Երևան, Վահագնի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

թաղամաս, 5 տեղամաս, Գանձասար-21 հողամասի նկատմամբ ՀՀ Կադաստրի կոմիտեում առկա սահմանափակումների պետական գրանցումը:

Վերոգրյալից ելնելով՝ Դատարանը գտնում է նաև, որ հակընդդեմ հայցը 6.1.4.2., 6.1.4.3. և 6.1.4.4 կետերի մասով անհիմն է և ենթակա է մերժման»:

1.9. Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), քննելով Դատարանի՝ 2023 թվականի մարտի 10-ի թիվ ԵԴ/32029/02/22 վճռի դեմ Դիմողի կողմից բերված վերաքննիչ բողոքը, 2023 թվականի սեպտեմբերի 12-ին որոշել է.

«1. Վերաքննիչ բողոքը մերժել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 10.03.2023թ. թիվ ԵԴ/32029/02/22 վճիռը թողնել անփոփոխ (...):»:

Սույն որոշմամբ Վերաքննիչ դատարանը նշել է.

«Վերաքննիչ դատարանն ընդհանուր իրավասության դատարանի վերը նշված հետևությունները դիտում է հիմնավոր և գործի նյութերից բխող:

(...)

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում հավելել, որ կողմերը փոխադարձ համաձայնությամբ սահմանել են, որ ճարտարապետաշինարարական նախագիծը ընկերությանը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան 30.09.2009 թվականը, միևնույն ժամանակ պայմանագրի վիճարկվող կետերով կողմերը նախատեսել են սահմանափակումներ, որոնք վերաբերել են այդ նախագծի վերաբերյալ ընկերության դիտողություններին, նկատառումներին, փոփոխություններին, լրացումներին, համաձայնեցմանը: Հաշվի առնելով, որ սահմանված ժամկետում ճարտարապետաշինարարական նախագիծը ընկերությանը չի ներկայացվել, իսկ այդ պարտավորությունը կատարելուն պարտավորեցնելու ընկերության պահանջը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո, ուստի նույն հողամասի կառուցապատման ճարտարապետաշինարարական նախագծի վերաբերյալ ընկերության դիտողություններն ու նկատառումները հաշվի առնելու, ընկերության հետ համաձայնեցված նախագծի փոփոխություններ և/կամ լրացումներ և/կամ այլ բնույթի վերափոխումներ նախաձեռնելու և/կամ իրականացնելու պարտավորությունները (նախատեսված

սահմանափակումների) դադարել են կատարման անհնարինությանը՝ նախագիծը գնորդի կողմից չներկայացնելու պարտավորության դադարմամբ պայմանավորված»:

1.10. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԵԴ/32029/02/22 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի որոշման դեմ Դիմողի բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, 2024 թվականի հունվարի 17-ին որոշել է.

«1. Թիվ ԵԴ/32029/02/22 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.09.2023 թվականի որոշման դեմ «Հովնանյան Ինթերնեյշնլ» ՍՊԸ ի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել (...):»:

2. Դիմողի դիրքորոշումները

2.1. Դիմողը, մասնավորապես, նշում է, որ Օրենսգրքի 331-րդ հոդվածով և 432-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավանորմերին տրվել են հետևյալ մեկնաբանությունները. մի դեպքում՝ հայցային վաղեմության ժամանակահատվածը կանոնակարգող Օրենսգրքի 331-րդ հոդվածին տրվել է այնպիսի մեկնաբանություն, որ հայցային վաղեմությունը տարածվում է պարտապանի պարտավորությունների կատարման վրա, մասնավորապես՝ հայցային վաղեմության ժամկետի լրանալը պարտավորությունների դադարման օրենքով նախատեսված հիմք է դիտարկվել Օրենսգրքի 432-րդ հոդվածի համատեքստում, իսկ մյուս դեպքում՝ Օրենսգրքի 432-րդ հոդվածով նախատեսված իրավանորմը մեկնաբանվել է այնպես, որ նշված նորմը ենթակա է կիրառման, երբ հայցային վաղեմության ժամկետը լրացած է, այլ կերպ ասած՝ հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը մեկնաբանվել է որպես պարտավորությունների կատարման անհնարինություն, որի համար կողմերից որևէ մեկը մեղավոր չէ, ուստի՝ հիմք պարտավորությունները դադարած ճանաչելու համար:

2.2. Դիմողը գտնում է, որ թիվ ԵԴ/32029/02/22 քաղաքացիական գործի քննության շրջանակներում Դատարանը նույնացրել է պարտատիրոջ դատարան դիմելու իրավունքի իրացման ժամկետի լրանալը պարտապանի կողմից պարտավորությունների կատարման անհնարինության հետ և փաստացի տվել այնպիսի մեկնաբանություն, որ եթե պարտատիրոջ դատարան դիմելու իրավունքի ժամկետը լրացած

է, ապա առկա է օբյեկտիվ և իրական անհնարինություն պարտապանի կողմից իր պարտավորությունները կատարելու համար:

2.3. Դիմողի համոզմամբ՝ կատարման անհնարինությունն այնպիսի հանգամանք է, որը իրավահարաբերության կողմերին օբյեկտիվորեն զրկում է տվյալ իրավահարաբերության բովանդակությունը հանդիսացող գործողությունները կատարելու հնարավորությունից, իսկ կատարման անհնարինության օբյեկտիվության առկայությունը ենթադրում է կամայական մոտեցմամբ պարտավորության կատարումից խուսափելու հնարավորության բացառում:

2.4. Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 27-րդ գլխով սահմանված պարտավորությունների դադարման հիմքերում առկա չէ Օրենսգրքի 331-րդ հոդվածով սահմանված հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմք: Այսինքն՝ օրենսդիրը, սպառիչ սահմանելով այն բոլոր հիմքերը, թե երբ կարող են պարտավորությունները դադարել, չի սահմանել այնպիսի հիմք, որ եթե լրացած է Օրենսգրքի 331-րդ հոդվածի իմաստով հայցային վաղեմության ժամկետը, ապա պարտավորությունները դադարում են, քանի որ հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը որևէ կերպ չի փոխկապակցվում պարտավորությունների կատարման անհնարինության կամ դադարման հետ:

2.5. Դիմողը նշում է. «(...) դատարանների մեկնաբանությունը հանգել է նրան, որ «կատարման անհնարինությամբ պարտավորության դադարման» ինստիտուտը փոխկապակցել են «հայցային վաղեմության» ինստիտուտի հետ և այս երկու ինստիտուտները կանոնակարգող իրավանորմերը դարձրել են մեկը մյուսի կիրառման պայման»: Դիմողը գտնում է, որ նորմերի տվյալ մեկնաբանության արդյունքում դադարած են ճանաչվել պարտապանի ունեցած բոլոր պարտավորությունները, այդ թվում նրանք, որոնք Օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի կարգով քննության առարկա դարձվել էին, սակայն Դատարանը մերժել էր հայցային վաղեմության կիրառումն այդ պարտավորությունների կատարման պահանջի վրա:

2.6. Դիմողը պնդում է, որ համապատասխան պայմանագրի 6.1.4.2., 6.1.4.3. և 6.1.4.4 կետերով սահմանված պարտավորությունների մասով առկա չի եղել որևէ դատական ակտ, մասնավորապես՝ նշված պայմանագրային պարտավորությունների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառված չի եղել: Մինչդեռ, Դիմողի պնդմամբ, դատարանների կողմից դադարեցվել են նշված պայմանագրային պարտավորությունները: Նշված պարտավորությունների նկատմամբ,

ըստ Դիմողի, առկա է եղել իր պահանջի իրավունքը, առանց որևէ սահմանափակման:

2.7. Դիմողը նշում է, որ դատարանների կողմից վերոնշյալ իրավանորմերին տրված մեկնաբանությունների արդյունքում դադարեցվել են իր նկատմամբ առկա պարտավորությունները, հետևաբար՝ ինքը գրկվել է օրինական պահանջի իրավունքից:

2.8. Դիմողը խնդրում է. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածով և 432-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավանորմերին թիվ ԵԴ/32029/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում տրված մեկնաբանությամբ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 59-րդ և 60-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

3. Պատասխանողի դիրքորոշումները

3.1. Պատասխանողը, ներկայացնելով Սահմանադրական դատարանի վերաբերելի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Օրենսգրքի վիճարկվող դրույթները, գտնում է, որ կատարման անհնարինության պատճառով պարտավորության դադարեցումը և հայցային վաղեմության ժամկետների լրանալը տարբեր իրավական հասկացություններ են:

3.2. Պատասխանողը նշում է, որ «Կատարման անհնարինությունը վերաբերում է այն իրավիճակին, երբ պայմանագրի հիման վրա ստանձնված պարտավորության կատարումը դառնում է անհնար, քանի որ տեղի է ունեցել չնախատեսված իրադարձություն, որը խոչընդոտում է պարտավորության կատարումը: Մյուս կողմից, հայցային վաղեմության ժամկետը սահմանում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում պետք է ներկայացվեն համապատասխան դատական հայցեր՝ անկախ նրանից, թե արդյոք պարտավորությունը հնարավոր էր կատարել: Կատարման անհնարինությամբ պարտավորության դադարումը նյութական իրավունքի նորմ է, իսկ հայցային վաղեմությունը դատավարական բնույթի ինստիտուտ է: Այն սուբյեկտիվ իրավունքի դատական պաշտպանության ժամանակահատվածն է: Այսպիսով, կատարման անհնարինությունը ուղղված է պայմանագրի կատարման իրագործելիության, իսկ երկրորդը՝ դատական գործողությունների նախաձեռնման ժամանակի վրա: Հետևաբար, երբ լրանում է հայցային վաղեմության ժամկետը, չի առաջանում կատարման անհնարինություն, այլ դատական կարգով ներկայացված պահանջի իրավունքը դադարում է հենց հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստով»:

3.3. Պատասխանողը պնդում է, որ կատարման անհնարինությունը և հայցային վաղեմությունը երկու տարբեր ինստիտուտներ են, որոնք ապահովում են իրավական համակարգի արդյունավետությունը՝ նպաստելով սեփականության, արդարության և իրավական որոշակիության ապահովմանը, հետևաբար՝ Պատասխանողն արձանագրում է, որ հայցային վաղեմության ժամկետի լրանալը պարտավորությունների դադարման օրենքով նախատեսված հիմք հանդիսանալու վերաբերյալ տրված մեկնաբանությունը չի բխում վիճարկվող հոդվածների տրամաբանությունից:

3.4. Պատասխանողը խնդրում է սույն գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն դիմումով վիճարկվող օրինադրույթների սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, որի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալը մեկնաբանվել է որպես պայմանագրով սահմանված հիմնական պարտավորությունների՝ օրենքով նախատեսված դադարման հիմք, որպիսի պայմաններում դրանցից բխող ածանցյալ պարտավորությունները դադարած են ճանաչվել կատարման անհնարինությամբ, համահունչ է Սահմանադրությամբ ամրագրված՝ տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ազատությանը և սեփականության իրավունքին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության՝ «Տնտեսական կարգը» վերտառությամբ 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Սույն սահմանադրական կարգավորումն իր տրամաբանական շարունակությունն է ստացել Սահմանադրության՝ «Տնտեսական գոր-

ծունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը» վերտառությամբ 59-րդ հոդվածում.

«1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են»:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է տնտեսական գործունեության ազատության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը: Այսպես.

Սահմանադրական դատարանի՝ 1999 թվականի հունվարի 27-ի ՍԴՈ-152 որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Ազատ տնտեսական մրցակցության սկզբունքն իր հերթին բխում է տնտեսական ազատության և հավասարության սկզբունքներից և նշանակում է շուկայական տնտեսության ներսում բոլոր տնտեսավարող սուբյեկտների հավասարություն, պետության կողմից նրանց համար հավասար պայմանների և հնարավորությունների ապահովում»:

Մեկ այլ որոշմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցությունը պետության զարգացման կարևոր նախապայմաններն ու անկյունաքարերն են՝ հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուրին՝ ազատ, բարեխիղճ, հավասար և մրցակցային պայմաններում իրականացնելու տնտեսական գործունեություն» (2023 թվականի ապրիլի 25-ի ՍԴՈ-1685 որոշում):

Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ **տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեությունն իրավական առումով քաղաքացիաիրավական հարաբերությունների շղթա է, որը կառուցվում է տնտեսավարող սուբյեկտների միջև, ի թիվս այլնի, փոխադարձաբար պարտավորական իրավահարաբերություններ հաստատելու միջոցով, որոնց բարեխիղճ կենսագործումը պետության տնտեսական զարգացման անվերապահ առավելագույն է:**

Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեության ազատությունը քաղաքացիաիրավական հարաբերությունների համատեքստում ունի առանձնահատուկ կարևորություն: Այսպես՝ ի երաշխավորումն նշված սահմանադրական իրավունքի՝ պետությունն օրենսդրորեն ամրագրում է.

1) քաղաքացիաիրավական, այդ թվում՝ պարտավորական հարաբերությունների շրջանակներում կամքի ինքնավարության սկզբունքը, որը, ի թիվս այլնի, ենթադրում է, որ տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտները պարտավորական հարաբերությունների մեջ են մտնում իրենց կամքով և ի շահ իրենց,

2) պայմանագրի ազատության սկզբունքը, որը, ի թիվս այլնի, ենթադրում է, որ տնտեսվարող սուբյեկտներն ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման,

3) մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքը, որը, ի թիվս այլնի, պաշտպանում է տնտեսվարողներին պետության անհարկի միջամտությունից՝ կաշկանդելով պետությանը նշված ոլորտում տնտեսվարողների իրավունքներին միջամտել սահմանադրորեն ամրագրված բացառիկ հիմքերով,

4) քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության սկզբունքը, որը, ի թիվս այլնի, ուղղակիորեն փոխկապակցված է պարտավորական հարաբերությունների կայունության հետ և ուղղված է պարտավորական հարաբերությունների դադարման հիմքերի բացակայության պարագայում տվյալ հարաբերությունների պահպանմանը,

5) պարտավորական հարաբերությունների շրջանակներում խախտված իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ դատական պաշտպանության սկզբունքը:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ի երաշխավորումն Սահմանադրությամբ ամրագրված փոփոխական գործունեության ազատության՝ առանցքային կարևորություն է ներկայացնում ոչ միայն օրենսդրական, այլ նաև իրավակիրառ մակարդակում փոփոխական գործունեության իրականացման իրավական հիմքերի կայունության ապահովումը, մասնավորապես՝ փոփոխվարող սուբյեկտների համար իրենց գործու-

նեության կայունության և որոշակիության համար այնպիսի իրավական հարթության ապահովումը, որի շրջանակներում պարտավորական հարաբերությունները կդադարեն օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հստակ հիմքերով, որոնք բավարար որոշակի և կանխատեսելի կլինեն պարտավորական հարաբերությունների սուբյեկտների համար:

5.2. Սահմանադրության՝ «Սեփականության երաշխավորումը» վերտառությամբ 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը»:

Սահմանադրության՝ «Սեփականության իրավունքը» վերտառությամբ 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով ամրագրված է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ փրկապետելու, օգտագործելու և փնօրինելու իրավունք:

(...)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-92, ՍԴՈ-630, ՍԴՈ-649, ՍԴՈ-650, ՍԴՈ-667, ՍԴՈ-669, ՍԴՈ-735, ՍԴՈ-815, ՍԴՈ-901, ՍԴՈ-903, ՍԴՈ-1009, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1073, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1189, ՍԴՈ-1203, ՍԴՈ-1210 և այլն) անդրադարձել է սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, այդ իրավունքի պաշտպանության, հնարավոր սահմանափակման խնդիրներին՝ իրավական դիրքորոշումներ արտահայտելով սեփականության իրավունքի էության, այդ իրավունքի սահմանափակման, դադարման հետ կապված իրավակարգավորումների սահմանադրականության վերաբերյալ՝ կարևորելով այդ բնագավառում սահմանադրական կարգի սկզբունքներից բխող իրավական միջոցների գործադրման անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ-1432 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սեփականության իրավունքը որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութա-

գրիչ, միաժամանակ նաև՝ որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն»:

Սահմանադրական դատարանը վերոնշյալ որոշմամբ նաև արձանագրել է, որ «(...) ինչպես միջազգային իրավական, այնպես էլ սահմանադրական մակարդակներով հաստատված է հանրային իշխանության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքներ, մասնավորապես.

առաջին՝ առանց որևէ խտրականության ճանաչել և պաշտպանել սեփականության իրավունքն անկախ դրա դրսևորման ձևերի,

երկրորդ՝ երաշխավորել սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պարկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար,

երրորդ՝ Սահմանադրությամբ կանխորոշված նպատակով սահմանել սեփականության իրավունքի իրացման ազատության օրենքով թույլատրելի շրջանակը,

չորրորդ՝ երաշխավորել օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով անձին սեփականությունից զրկելու, ինչպես նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունը հարկադիր օտարելու և նախնական ու համարժեք փոխհատուցում ապահովելու վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջների կատարումը»:

Վերահաստատելով և զարգացնելով սեփականության իրավունքի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև դիտարկելով դրանք հայցային վաղեմության ինստիտուտի համատեքստում՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-1611 որոշմամբ փաստել է. «(...) սեփականության իրավունքի հետ առնչակցություն ունեցող ցանկացած օրենսդրական կարգավորում, դրա մեկնաբանություն և կիրառում պետք է համապատասխանեն նշյալ իրավունքի առնչությամբ Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումներին և Սահմանադրական դատարանի՝ ներկայացրած իրավական դիրքորոշումներին, մասնավորապես՝ դրանք պետք է երաշխավորեն սեփականության իրավունքի պաշտպանու-

թյունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար, պետք է երաշխավորեն օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով անձին սեփականությունից զրկելու վերաբերյալ սահմանադրահրավական պահանջների կատարումը, **ինչպես նաև երաշխավորեն սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանությունը**»:

Բացի դրանից, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նշելով, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (“Trgo v. Croatia”, Application no. 35298/04, 11.06.2009, Final 11.09.2009, § 44):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է նաև, որ «գույքը» կարող է լինել «գոյություն ունեցող սեփականությունը» կամ «ակտիվները», ներառյալ՝ պահանջները, որոնց առնչությամբ դիմումատուն կարող է վիճարկել, որ առնվազն ունի սեփականության իրավունքից անարգել օգտվելու «իրավաչափ ակնկալիք» (“J. A. Pye (Oxford) Ltd and J. A. Pye (Oxford) Land Ltd v. United Kingdom”, Application no. 44302/02, 30.08.2007, § 61): «Ակնկալիքը» համարվում է իրավաչափ, եթե այն հիմնված է օրենսդրական դրույթի կամ քննարկվող գույքի վերաբերյալ իրավական ակտի վրա (“Saghinadze and others v. Georgia”, Application no. 18768/05, 27.05.2010, Final 27.08.2010, § 103):

Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ տնտեսական գործունեության ազատությունը սերտորեն փոխկապակցված է սեփականության իրավունքի հետ և ուղղակիորեն առնչվում է յուրաքանչյուրի սեփականության սահմանադրական իրավունքին:

Սահմանադրական դատարանն իր՝ 2023 թվականի ապրիլի 25-ի ՍԴՈ-1685 որոշմամբ արձանագրել է. «Տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման ու սեփականության իրավունքի փոխկապակցվածությունը դրսևորվում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

է նրանում, որ ազատ տնտեսական գործունեության և տնտեսական մրցակցության արդյունքում սեփականության ծավալն ավելացնելու նոր նախադրյալներ են ստեղծվում, ինչն, իր հերթին, իրական հնարավորություն է ընձեռում նաև ազատ տնտեսական գործունեության շրջանակն ընդլայնելու համար»:

Վերոգրյալի համարեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ տնտեսական գործունեության շրջանակներում պարտավորական հարաբերությունների հաստատման նպատակը, ի թիվս այլնի, հանգում է պարտավորական հարաբերությունների մասնակիցների՝ սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիքի ձևավորմանը, և այդ հարաբերությունների դադարումն ուղեկցվում է սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիքի վերացմամբ՝ առանձնակի կարևորելով ինչպես օրենսդրորեն, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում պարտավորությունների դադարման ինստիտուտի համարեքստում սեփականության իրավունքի ապահովման երաշխավորումը:

5.3. Վերոգրյալ սահմանադրաիրավական կարգավորումների և Սահմանադրական դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության հարցին՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ թիվ ԵԴ/32029/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանության պայմաններում ստացվում է, որ այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված հիմնական պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջը դատարանի կողմից մերժվում է հայցային վաղեմության կիրառմամբ, պայմանագրով նախատեսված ածանցյալ պարտավորությունները դատարանի կողմից ճանաչվում են դադարած՝ օրենքով նախատեսված՝ պարտավորությունների կատարման անհնարինության հիմքով, ընդ որում՝ անհնարինության հանգամանք է դիտարկվում հիմնական պարտավորությունների մասով դատարանի կողմից հայցային վաղեմություն կիրառելը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ըստ էության, սույն սահմանադրաիրավական վեճն ուղղակիորեն հանգում է մասնավոր հարաբերություններին պետության միջամտության սահմանադրաիրավական կանոնակարգման համատեքստում անձի կողմից հայցային վաղեմության օրենսդրական ժամկետը չպահպանելու դեպքում անձի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՆՏՈՒՄ 5(117)2024

համար առաջացող անմիջական բացասական իրավական հետևանքների ծավալի խնդրին: Այս առումով Սահմանադրական դատարանը փաստում է, որ մասնավոր իրավահարաբերությունները՝ առհասարակ, և քաղաքացիաիրավական իրավահարաբերությունները՝ մասնավորապես, ենթադրում են պետության նվազագույն միջամտություն, և պետության իրավակարգավորիչ գործառույթի դրսևորման նման մոտեցումը պայմանավորված է քաղաքացիաիրավական մի շարք սկզբունքներով, որոնք են՝ կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության և քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության սկզբունքները (Օրենսգրքի 3-րդ հոդված):

Սահմանադրական դատարանը փաստում է նաև, որ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում պարտավորական հարաբերություններին պետության միջամտությունը, ի թիվս այլնի, արտահայտվում է նրանով, որ օրենսդրորեն ամրագրվել են պարտավորությունների դադարման ինստիտուտին առնչվող հետևյալ կարգավորումները.

1) պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով (Օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին մաս),

2) պարտավորության՝ Օրենսգրքով նախատեսված դադարման հիմքերն են՝ կատարումը, հրաժարագինը, հաշվանցը, պարտապանի և պարտատիրոջ համընկնումը, նորացումը, պարտքը ներելը, կատարման անհնարինությունը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտը, քաղաքացու մահը, իրավաբանական անձի լուծարումը (Օրենսգրքի 424-426-րդ և 429-435-րդ հոդվածներ):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քաղաքացիաիրավական պարտավորությունների նկատմամբ հայցային վաղեմության ժամկետ կիրառելը ոչ մի կերպ չի դադարեցնում այդ պարտավորությունները, այլ սույն դադարում է այդ պարտավորական իրավահարաբերությունների շրջանակներում հայցով քաղաքացիական իրավունքների պաշտպանության հնարավորությունը: Ավելին, այն չի զրկում անձին նաև օրենսդրությամբ սահմանված այլ թույլատրելի եղանակներով իր խախտված իրավունքի պաշտպանության հնարավորությունից, ինչ-

պիսիք են Օրենսգրքի 14-րդ հոդվածով սահմանված իրավունքի պաշտպանության հնարավոր եղանակները:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատական պաշտպանության իրավունքի իրացման ժամկետի լրանալն անձի համար կարող է ուղղակիորեն առաջացնել միայն մեկ բացասական իրավական հետևանք, այն է՝ անձի խախտված իրավունքի դատական պաշտպանության իրացման հնարավորության բացակայությունը: Դատարանի կողմից պարտավորության կատարման վերաբերյալ հայցի մերժումը՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով, չի ենթադրում պարտավորության դադարում: Ավելին, հայցային վաղեմության ժամկետի կիրառումը չի զրկում հայցվորին իր նյութաիրավական պահանջից, իր խախտված իրավունքի պաշտպանությունն այլ իրավական եղանակներով իրականացնելու հնարավորությունից: Այլապես ստացվում է, որ հայցային վաղեմության ինստիտուտը ոչ միայն հայց ներկայացնելու հնարավորության ժամկետային սահմանափակում է, այլ նյութաիրավական պահանջի «գոյության» ժամկետ: Նշված մոտեցումն ուղղակիորեն հակասում է հայցային վաղեմության ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող Սահմանադրական դատարանի, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումներին.

1) Սահմանադրական դատարանը, 2019 թվականի դեկտեմբերի 6-ի ՍԴՈ-1495 որոշմամբ վաղեմության ժամկետի ինստիտուտը դիտարկելով իրավունքի իրականացման ժամկետային սահմանափակման համատեքստում, արձանագրել է. «(...) քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ժամկետներն (...) նպատակ ունեն ոչ միայն ժամանակի առումով կանոնակարգելու քաղաքացիական շրջանառությունը, այլ նաև ապահովելու քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտների կողմից իրենց իրավունքների իրացման հնարավորությունը, դրդելու անձանց կատարելու իրենց պարտականությունները, ինչպես նաև խթանելու խախտված իրավունքների ժամանակին պաշտպանությունը»:

2) Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-1611 որոշմամբ արձանագրել է.

- «(...) հայցային վաղեմության ինստիտուտը կողմերից մեկի դիտանկյունից հանդես է գալիս որպես դատարան դիմելու իրավունքի սահմանափակում՝ դատավարական կոնկրետ կանոնի հիմքով, որը, միևնույն ժամանակ, համապատասխանում է իրավունքի սահմանափակման իրավաչափության (...) չափանիշներին: Ուստի,

նշյալ ինստիտուտի և իրավակարգավորումների՝ այդ հանգամանքին հակասող որևէ եղանակով մեկնաբանություն և կիրառում կհակասի վերջիններիս սահմանադրաիրավական բովանդակությանը»:

- «(...) հայցային վաղեմության ինստիտուտն ինքնին ուղղված է քաղաքացիական շրջանառության մեջ սեփականության, տնտեսական գործունեությամբ զբաղվելու, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքներին և մյուս սահմանադրական արժեքներին առնչվող քննարկված նպատակների երաշխավորմանն ու դրա միջոցով քաղաքացիական շրջանառության կայունության, իրավահարաբերությունների որոշակիության, դրանց մասնակիցների բարեխղճության, իրավունքների պաշտպանության գործիքակազմերի բարեխիղճ օգտագործման, արդյունքում նաև՝ իրավահարաբերությունների ոչթեմեկ, այլբոլոր սուբյեկտների հիմնարար իրավունքների պաշտպանության ապահովմանը: Նշված նպատակները բացառիկ կարևորություն ունեն իրավական պետության կայացման տեսանկյունից և պետք է ընկած լինեն հայցային վաղեմությանն առնչվող ցանկացած իրավակարգավորման և իրավակիրառական պրակտիկայի հիմքում»:

Վերոգրյալի լույսի ներքո՝ անդրադառնալով պարտավորությունների կատարման անհնարինության հիմքով պարտավորությունների դադարման ինստիտուտին՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ անհնարինության հանգամանքն օրենսդրի կողմից որակվում է որպես օբյեկտիվ հանգամանք, որը պայմանավորված չէ կողմերի կամքով: Այս առումով օրենսդրի կամքը հստակ է. պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննարկման առարկա մեկնաբանությունը խեղաթյուրում է նաև տվյալ ինստիտուտի իրավական բովանդակությունը, քանի որ հայցային վաղեմության ժամկետը կիրառվում է՝ անկախ պարտավորական հարաբերությունների կողմի կամքից՝ դատարանի կողմից, սույն ինստիտուտի կիրառումն իրավահարաբերության համապատասխան կողմի անգործության արդյունք է, որն արտահայտվում է օրենքով սահմանված ժամկետում հայց չներկայացնելով: Մինչդեռ հայցային վաղեմությունը, որպես պարտավորությունների դադարման օրենքով նախատեսված փաստացի հիմք դիտարկելով՝ հիմնական պարտավորությունը դադարած ճանաչելը, հանգեցրել է հիմնական պարտավորությունը դադարած

ճանաչելու պայմաններում դրանից բխող ածանցյալ պարտավորությունը կատարման անհնարինությամբ դադարած ճանաչելուն՝ խախտելով քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում պարտավորական հարաբերությունների կողմերի իրավունքների հավասարակշռված պաշտպանության ապահովման վերաբերյալ սահմանադրաիրավական և օրենսդրական հրամայականները:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, որի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալը մեկնաբանվել է որպես պայմանագրով սահմանված հիմնական պարտավորությունների՝ օրենքով նախատեսված դադարման հիմք, որպիսի պայմաններում դրանցից բխող ածանցյալ պարտավորությունները դադարած են ճանաչվել կատարման անհնարինությամբ, խնդրահարույց է Սահմանադրությամբ ամրագրված՝ անձի՝ տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և սեփականության իրավունքների երաշխավորման համատեքստում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածը և 432-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ պայմանագրային պարտավորությունների, այդ թվում՝ կատարման անհնարինության հիմքով դադարումը չի կարող պայմանավորվել հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հանգամանքով:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածը և 432-րդ հոդվածի 1-ին մասը Դիմողի

նկատմամբ կիրառվել են սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

8 հոկտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1756



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ 52-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 5(117)2024

Քաղ. Երևան

15 հոկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ Վճռաբեկ դատարանի (այսուհետ նաև՝ Դիմող),

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող) ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի հուլիսի 3-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի հուլիսի 30-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի հունվարի 1-ին:

Օրենքի՝ «Կոչման շնորհումը և ծառայության ժամկետի հաշվարկը ծառայության վերականգնումից հետո» վերտառությամբ 52-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է.

«2. Ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատված, կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողներին մինչև դրանց վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում նրան չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար:

Այն ծառայողներին, ովքեր ազատման պահից մինչև վերականգնվելն աշխատել են այլ կազմակերպություններում կամ զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ՝ հատուցումը վճարվում է նրանց՝ զբաղեցրած ոստիկանության վերջին պաշտոնի պաշտոնեական դրույքաչափի և ոստիկանությունում ծառայությունից ազատված ժամանակահատվածում ստացած ամսական եկամտի միջև եղած տարբերության չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար»:

Գործի քննության առիթը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է՝ թիվ ՎԴ2/0189/05/20 վարչական գործով «ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշման հիման վրա:

Ուսումնասիրելով դիմումը, Պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով վիճարկվող ու վերաբերելի այլ օրինադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. Գործի դատավարական նախապատմությունը

1.1. Վարչական դատարանը (այսուհետ նաև՝ դատարան), քննության առնելով Մելիք Մարտունի Հակոբյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ՀՀ ոստիկանության պետի 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 2334-Ա հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում՝ պաշտոնում վերականգնելուն և որպես հետևանք՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 5(117)2024
 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

գումարը վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին (թիվ ՎԴ2/0189/05/20 վարչական գործ), 2022 թվականի փետրվարի 16-ին վճռել է.

«Մելիք Մարտունի Հակոբյանի հայցը բավարարել:

Անվավեր ճանաչել ՀՀ ոստիկանության պետի 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 2334-Ա հրամանը [2022 թվականի փետրվարի 22-ին դատարանը որոշել է. «Ուղղել ՀՀ վարչական դատարանի 2022 թվականի փետրվարի 16-ի թիվ ՎԴ2/0189/05/20 վճռի վրիպակը.

Վճռի եզրափակիչ մասում «Անվավեր ճանաչել ՀՀ ոստիկանության պետի 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 2334-Ա հրամանը:»-ի փոխարեն կարդալ «Անվավեր ճանաչել ՀՀ ոստիկանության պետի 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 2334-Ա հրամանի 1-ին կետը:»: (...)]:

ՀՀ ոստիկանությանը պարտավորեցնել Մելիք Մարտունի Հակոբյանին վերականգնել նախկին՝ ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչի պաշտոնում:

ՀՀ ոստիկանությանը պարտավորեցնել Մելիք Մարտունի Հակոբյանին հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

(...):»:

1.2. Վերաքննիչ վարչական դատարանը 2023 թվականի հուլիսի 7-ին որոշել է.

«1. ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության [ՀՀ ոստիկանության իրավահաջորդ] վերաքննիչ բողոքը բավարարել:

2. Թիվ ՎԴ2/0189/05/20 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2022 թվականի փետրվարի 16-ի վճիռը՝ հարկադիր պարապորդի մասով, բեկանել և փոփոխել հետևյալ կերպ.

Պարտավորեցնել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանությանը Մելիք Հակոբյանին վճարելու դրամական հատուցում չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար:

(...):»:

1.3. Վճռաբեկ դատարանի վարչական պալատի 2023 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ վարույթ է ընդունվել թիվ ՎԴ2/0189/05/20 վարչական գործով Վերաքննիչ վարչական դատարանի 2023 թվականի հուլիսի 7-ի որոշման դեմ Մելիք Հակոբյանի բերած վճռաբեկ բողոքը:

1.4. Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ՎԴ2/0189/05/20 վարչական գործով Սահմանադրական դատարան դիմելու հարցը, 2024 թվականի փետրվարի 9-ին որոշել է.

«1. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ և 60-րդ հոդվածներին համապատասխանության հարցի վերաբերյալ դիմել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան:

(...):

1.5. Վճռաբեկ դատարանը, քննարկելով թիվ ՎԴ2/0189/05/20 վարչական գործի վարույթը կասեցնելու հարցը, 2024 թվականի փետրվարի 9-ին որոշել է.

«1. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ և 60-րդ հոդվածների համապատասխանության հարցը որոշելու խնդրանքով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու կապակցությամբ, կասեցնել սույն վարչական գործի վարույթը մինչև ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշման ուժի մեջ մտնելը:

(...):

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը, ընդունելի համարելով Վերաքննիչ վարչական դատարանի դիրքորոշումն առ այն, որ թիվ ՎԴ2/0189/05/20 վարչական գործով հարկադիր պարապորդի համար դրամական փոխհատուցում ստանալու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է հատուկ օրենքը, և ելնելով «հատուկ օրենքը վերացնում է ընդհանուրի գործողությունը» սկզբունքից (ըստ Դիմողի՝ տվյալ դեպքում հատուկ օրենք է համարվում Օրենքի վիճարկվող դրույթը, իսկ ընդհանուր՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը), նշում է, որ նշված վարչական գործով կիրառման ենթակա Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ իր մոտ ձևավորվել է հիմնավոր կասկած:

Դիմողն Օրենքի վիճարկվող դրույթը դիտարկել է «ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) նախատեսված խտրականության արգելքի սկզբունքի և սեփականության իրավունքի ձեռքբերման նկատմամբ լեզիտիմ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

ակնկալիքի իրավունքի սահմանափակման տեսանկյունից՝ բարձրացնելով ներքոնշյալ հարցադրումները.

«1. Արդյո՞ք այլ պետական ծառայողների համեմատ ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատված, կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողներին մինչև դրանց վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար միայն 3 ամսվա համար չվճարված աշխատավարձի չափով դրամական փոխհատուցում ստանալու սահմանափակումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված խտրականության արգելքի սկզբունքին:

2. Արդյո՞ք ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատված, կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողների համար երաշխավորվում է աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար դրամական փոխհատուցում ստանալու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված լեգիտիմ ակնկալիքի իրավունքն իրացնելու հնարավորությունը»:

Առաջին հարցադրման առնչությամբ Դիմողը «Հանրային ծառայության մասին» օրենքով և Օրենքով ամրագրված մի շարք իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքներով, մասնավորապես, նշում է. «(...) ոստիկանությունում ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով: Այդուհանդերձ՝ պետական ծառայության բոլոր տեսակի ծառայողների համար օրենսդրությամբ պետք է սահմանվեն միատեսակ սոցիալ-իրավական պայմաններ, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ տարբերակված մոտեցման համար: Ընդ որում, պետական ծառայության բոլոր տեսակի ծառայողների սոցիալ-իրավական կարգավիճակը նույնասեռ է, քանի որ նրանք բոլորն իրականացնում են հանրային ծառայություն, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմինների կերպարաված լիազորությունների իրականացմանը»:

Դիմողը, վկայակոչելով պետական ծառայության այլ տեսակների առնչությամբ մի շարք օրենքների վերաբերելի իրավանորմերը, դրանք համադրելով Օրենքի վիճարկվող դրույթի հետ, եզրահանգում է. «(...) օրենսդիրը խտրական մոտեցում է ցուցաբերել մի կողմից՝ ոստիկանության ծառայողների և մյուս կողմից՝ այլ պետական ծառայողների (մասնավորապես՝ հարկադիր կատարումն ապահովող

ծառայության և քրեակատարողական ծառայության ծառայողների) միջև հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար դրամական փոխհատուցում ստանալու հարցում: Մասնավորապես, ոստիկանության ծառայողները թվարկված մյուս ծառայողների հանդեպ ավելի բացասական իրավական դրության մեջ են, քանի որ նրանց նման հատուցումը սահմանափակված է եռամսյա ժամկետով, իսկ մյուս ծառայողներինը՝ ոչ: Հետևապես Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկադիր պարապուրդի հատուցման հարցում ոստիկանության ծառայողների առնչությամբ օրենսդիրը դրսևորել է տարբերակված մոտեցում՝ չունենալով որևէ օբյեկտիվ հիմք և ողջամիտ արդարացում»:

Երկրորդ հարցադրման առնչությամբ Դիմողը, մասնավորապես, գտնում է, որ ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատված ծառայողն աշխատանքում վերականգնվելու դեպքում ունի հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար դրամական փոխհատուցում ստանալու՝ Սահմանադրությամբ երաշխավորված լեգիտիմ ակնկալիք, որը ևս ենթակա է որակման որպես սեփականություն, և դրա պաշտպանությունը պետք է ունենա պաշտպանության այնպիսի աստիճան, որը հնարավորություն կտա դրա իրավատիրոջն իր իրավաչափ ակնկալիքը կյանքի կոչել:

Դիմողը եզրահանգում է. «(...) «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը խնդրահարույց է սահմանադրականության տեսանկյունից այնքանով, որքանով ոստիկանության ծառայողի համար՝ ի տարբերություն այլ պետական ծառայողների չի երաշխավորում հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար դրամական փոխհատուցում ստանալու իրավունքի իրացումը, որը հանգեցնում է խտրականության արգելքի սկզբունքի և օրինական ակնկալիքի նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանության իրավունքի խախտման»:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը, վկայակոչելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Կոնվենցիայի համապատասխան դրույթները և այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, մասնավորապես, նշում է, որ անձը ձեռք է բերում սեփականության իրավունքի պաշտպանություն միայն այն դեպքում, երբ սեփականության իրավունքն արդեն իսկ ճանաչված է օրենքով սահմանված կարգով կամ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024
97

օրենքի ուժով անձն ունի սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Պատասխանողը նշում է. «(...) աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում աշխատողների խախտված իրավունքների վերականգնման դեպքում **աշխատողը վերականգնվում է իր նախկին աշխատանքում**՝ ստանալով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար **միջին աշխատավարձ**, ինչը իրենից ներկայացնում է **սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք**: Այն չի կարելի նույնականացնել Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատված, կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողներին մինչև դրանց վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվող **դրամական փոխհատուցման հետ**, որը տրվում է **նրան չվճարված աշխատավարձի չափով**, բայց ոչ ավելի, քան **3 ամսվա համար**:

Նշյալ նորմը չի վերացնում Օրենսգրքի [ՀՀ աշխատանքային օրենսգրքը] 265-րդ հոդվածի 1-ին մասի գործողությունը, քանի որ այդ նորմով սահմանված է **լրացուցիչ փոխհատուցում** ստանալու իրավունքը, որը չի հանդիսանում հարկադիր պարապուրդի գումար:

Աշխատանքային օրենսգիրքը գործատուին պարտավորեցնում է հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, Օրենքի համապատասխան նորմը նախատեսել է անօրինականորեն ազատված ոստիկանության ծառայողի իրավունքի պաշտպանությունը փոխհատուցման վճարմամբ ապահովելու հնարավորություն՝ տրվող **դրամական փոխհատուցման միջոցով**, որը տրվում է նրան **առավելագույնը 3 ամսվա աշխատավարձի չափով**:

(...)

Հետևաբար՝ դիմողի այն պնդումը, որ խախտվել է վերջինիս սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ **լեգիտիմ ակնկալիքները անհիմն է, իսկ** վիճարկվող դրույթը լիովին համապատասխանում է Սահմանադրության 60-րդ հոդվածին»:

Օրենքի վիճարկվող դրույթի՝ Դիմողի կարծիքով՝ Սահմանադրության 29-րդ հոդվածով ամրագրված խտրականության արգելքի սկզբունքին համապատասխանության առումով խնդրահարույց լինելու հարցի առնչությամբ Պատասխանողը, մասնավորապես, գտնում է. «Ոստիկանության ծառայողներին, ինչպես նաև այլ իրավապահ մարմինների ծառայողներին, կամ հանրային ծառայություն իրականացնող անձանց

որպես «միևնույն կատեգորիայի անձինք» դիտարկելը չի բխում ՀՀ օրենսդրական կարգավորումներից: Հետևաբար օրենսդրական կարգավորմամբ առկա չէ խտրական վերաբերմունք ոստիկանության ծառայողների և հանրային ծառայություն իրականացնող այլ անձանց միջև, քանի որ նրանք չեն կարող համարվել էապես նույն իրավիճակում գտնվող անձինք:

(...)

Օրենսդիրն իրավասու է աշխատանքային բնույթի հարաբերությունների մեջ գտնվող բոլոր անձանց համար նախատեսված սոցիալական երաշխիքը որոշ կատեգորիայի ծառայողների համար սահմանել այլ ծավալով:

Պատասխանողը խնդրում է սույն գործով ընդունել որոշում՝ Օրենքի վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Օրենքի վիճարկվող իրավադրույթի սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրմանը.

- Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում ամրագրված դրույթն առ այն, որ ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատված ծառայողներին մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվող դրամական փոխհատուցման հաշվարկն իրականացվում է նրանց չվճարված աշխատավարձի չափով, *բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար*, համապատասխանում է արդյոք Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ՝ *հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի բաղադրիչ հանդիսացող՝ հանրային ծառայության սրանձնած պաշտոնում պաշտոնավարման իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովող կանխարգելիչ և պաշտպանական անհրաժեշտ օրենսդրական կառուցակարգ սահմանելու մասով:*

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը, որի համաձայն՝ «Այն ծառայողներին, ովքեր ազատման պահից մինչև վերականգնվելն աշխատել են այլ կազմակերպություններում կամ զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ՝ հատուցումը վճարվում է նրանց՝

զբաղեցրած ոստիկանության վերջին պաշտոնի պաշտոնեական դրույքաչափի և ոստիկանությունում ծառայությունից ազատված ժամանակահատվածում ստացած ամսական եկամտի միջև եղած տարբերության չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար:», ենթակա չէ կիրառման Վճռաբեկ դատարանում քննվող գործով, և Դիմողը, թեև վիճարկել է նաև նշված դրույթի սահմանադրականությունը, սակայն այդ մասով հիմնավորումներ չի ներկայացրել:

Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը վերաբերում է այն դեպքերին, երբ ոստիկանությունից ոչ իրավաչափորեն ազատված ծառայողները համապատասխան ժամանակահատվածում աշխատել են այլ կազմակերպություններում կամ զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ, և օրենսդիրը սահմանափակում է նրանց վճարվելիք հատուցումը նաև ժամանակագրական առումով, հետևաբար՝ այդ առումով Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթների միջև համակարգային կապն ակնառու է:

Այդ առնչությամբ հաշվի առնելով, որ Դիմողը վիճարկում է Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, իսկ այդ մասի առաջին և երկրորդ պարբերությունները համակարգային առումով փոխկապակցված են, Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 10-րդ մասը՝ համակցված 68-րդ հոդվածի 10-րդ մասի հետ, անհրաժեշտ է համարում վերոնշյալ հարցադրման համատեքստում անդրադառնալ Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի նաև երկրորդ պարբերության սահմանադրականության հարցին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության՝ «Հանրային ծառայության անցնելու իրավունքը» վերտառությամբ 49-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով»:

Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ անդրադարձել է Սահմանադրության 49-րդ հոդվածի առաջին նախադասությամբ ամրագրված՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ այդ առնչությամբ արտահայտելով, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

«(...) ընդհանուր հիմունքներով *հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ծավալի մեջ ներառվում է նաև անձի կողմից ընդհանուր հիմունքներով զբաղեցված հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունքը*, որը, իր հերթին, ենթադրում է օրենքով չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատվելու արգելք»:

«(...) Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի, ընդհանուր հիմունքներով անցնելով հանրային ծառայության, ունի նաև *պաշտոնավարման և կամայական հիմքերով պաշտոնից չազատվելու իրավունք*»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ *հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնավարման իրավունքի արդյունավետ իրացման համար օրենսդիրը որպես անհրաժեշտ կառուցակարգ ոչ միայն պետք է սահմանի նաև անհիմն/անօրինական ազատման դեպքում փոխհատուցման իրավունքը*, այլև նշված ոչ իրավաչափ հիմքով պաշտոնից ազատման պահից մինչև վերականգնվելը փոխհատուցման ծավալը կանխորոշող ժամանակահատվածի առումով այնպիսի կառուցակարգ, որի գործողության պայմաններում, փոխհատուցման առավելագույն ժամկետով պայմանավորված, փոխհատուցման ծավալն էականորեն չի սահմանափակվի:

Հակառակ դեպքում՝ ի հայտ է գալիս հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձին փաստացի պատասխանատվության ենթարկելու հակասահմանադրական կարգ, քանզի նա, առանց իր մեղքի, ավելին՝ պետության կամ համայնքի «մեղքով», մի կողմից՝ փաստացի ենթարկվում է պատասխանատվության՝ ազատվելով պաշտոնից (արձակվելով ծառայությունից), մյուս կողմից՝ զրկվում է այն ֆինանսական միջոցներից, որոնք նրան կտրամադրվեին, եթե պետությունը կամ համայնքը գործեր իրավաչափ այն դեպքում, երբ Օրենքով սահմանված է դրամական փոխհատուցում տալու (հատուցում վճարելու) առավելագույն՝ եռամսյա ժամկետ, որը, ներառված լինելով ազատման պահից մինչև վերականգնվելն ընկած ժամանակահատվածում, այդուհանդերձ, վերջինից կարճ է:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրության 49-րդ հոդվածի երկրորդ նախադասությանը համապատասխան՝ օրենքով հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի մանրամասները կանոնակարգելու նպատակը հանրային և հանրային

ծառայության պաշտոնների առանձնահատկությունները և տեսակները հաշվի առնելն է (mutatis mutandis, 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488, կետ 4.1): Միննույն ժամանակ, *Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի հայեցողությունը չի կարող վերաբերել պաշտոնից ոչ իրավաչափորեն ազատված անձանց փոխհատուցման իրավունքի սահմանափակմանը՝ դրամական փոխհատուցում տալու (հատուցում վճարելու) ժամանակահատվածի որոշակիացված լինելու՝ ազատման պահից մինչև վերականգնվելը, պայմաններում դրամական փոխհատուցում տալու (հատուցում վճարելու) առավելագույն ժամկետ՝ բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար, սահմանելու և, որպես վերջինիս հետևանք, փոխհատուցման ծավալը սահմանափակելու առումով:*

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ *աշխատավարձը կազմում է Սահմանադրության 49-րդ հոդվածով ամրագրված՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի, այդ թվում՝ հանրային ծառայության պաշտոնում պաշտոնավարման իրավունքի անբաժանելի և կարևոր տարրը, իսկ կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատելու արգելքն առնչվում է նաև հանրային ծառայության հետ փոխկապակցված վարձատրությանը:*

Հիշատակված հիմնական իրավունքի իրացմանն ուղղված օրենսդրական կարգավորումները Սահմանադրության 75-րդ հոդվածի առումով *կարող են արդյունավետ լինել, եթե երաշխավորեն ոչ միայն համապատասխան պաշտոնում վերականգնվելը, այլև ոչ իրավաչափ հիմքով պաշտոնից ազատման հետևանքով չստացված եկամուտները. պետության կամ համայնքի «մեղքով» ազատման պահից մինչև վերականգնվելը ժամանակահատվածի շրջանակում դրամական փոխհատուցում տալու (հատուցում վճարելու) առավելագույն ժամկետի սահմանումը, թեև օրենսդիր մարմնի հայեցողության տիրույթում է, այդուհանդերձ, չպետք է հանգեցնի փոխհատուցման ծավալների էական սահմանափակման:*

Հանրային ծառայողին պաշտոնից ապօրինի ազատելու հետևանքները պետության կամ համայնքի համար պետք է լինեն այնքան առարկայական, որ կաշկանդեն, ընդհուպ՝ բացառեն հանրային ծառայողի կամայական ազատումը: Հանրային ծառայությունից անհիմն/ապօրինի ազատված անձանց վերականգնման դեպքում տրամադրվելիք դրամական փոխհատուցման (հատուցում վճարելու) կառուցակարգն իրավական պետության հիմնարար սահմանադրական սկզբունքին համապատասխան երաշխավորում է հանրային ծառայության հարա-

բերություններում օրինականությունը, կայունությունը և վստահությունը, ինչպես նաև կոչված է էականորեն կրճատելու հանրային ծառայությունից ապօրինի ազատման դեպքերը:

Սահմանադրության՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը» վերտառությամբ 75-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»: Նշված պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ ու իրական կենսագործմանը, քանզի իրավունքի կամ ազատության սոսկ ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար. ուստի՝ **համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական մակարդակում ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու համար:**

Սահմանադրական դատարանը, 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման շրջանակներում անդրադառնալով Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությանը, արձանագրել է. «(...) ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) արդյունավետ իրականացման համար (2) անհրաժեշտ (3) կազմակերպական (4) կառուցակարգեր և (5) ընթացակարգեր: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը» (կետ 4.5):

Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշմամբ արձանագրված է. «Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի

կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները» (կետ 4.1):

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հանրային ծառայությունից ազատման հետ կապված վեճերով դատարանում գործի քննության առավելագույն (կոնկրետ) ժամկետ սահմանված չէ, իսկ գործնականում դրանց քննությունը, որպես կանոն, փակակն գործընթաց է, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությամբ և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությամբ ամրագրված դրույթները դրամական փոխհատուցում տալու (հատուցում վճարելու) ժամանակահատվածի որոշակիացված լինելու՝ ազատման պահից մինչև վերականգնվելը, պայմաններում դրամական փոխհատուցում տալու (հատուցում վճարելու) առավելագույն ժամկետ՝ բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար, սահմանելու և, որպես վերջինիս հետևանք, փոխհատուցման ծավալները սահմանափակելու առումով, չեն բովանդակում հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի բաղադրիչ հանդիսացող՝ հանրային ծառայության ստանձնած պաշտոնում պաշտոնավարման իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովող կանխարգելիչ և պաշտպանական անհրաժեշտ օրենսդրական կառուցակարգեր:

Այսպիսով, Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության՝ «բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար» ձևակերպումը Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, համապատասխանության առումով խնդրահարույց է:

5.2. Սույն գործով վիճարկվող օրինադրույթի՝ Սահմանադրության 29-րդ հոդվածին ենթադրյալ հակասության առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է.

Սահմանադրության՝ «Խտրականության արգելքը» վերտառությամբ 29-րդ հոդվածի համաձայն՝ «Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամու-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

թյունից, փարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Սահմանադրական դատարանը, իր մի շարք որոշումներում անդրադառնալով խտրականության արգելքի սկզբունքին, արտահայտել է, մասնավորապես, ներքոնշյալ իրավական դիրքորոշումները.

1) «(...) պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները» (2008 թվականի հունվարի 29-ի ՍԴՈ-731 որոշում, կետ 10):

2) «(...) Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից» (2010 թվականի մայիսի 4-ի ՍԴՈ-881 որոշում, կետ 5):

3) «(...) աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու և իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն: Միաժամանակ, այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել անձանց իրավական տարբեր կարգավիճակներ՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, և նույնիսկ նախատեսել առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքեր, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են և ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում» (2011 թվականի հոկտեմբերի 11-ի ՍԴՈ-991 որոշում, կետ 5):

4) «(...) խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի

կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ» (2015 թվականի հուլիսի 7-ի ՍԴՈ-1224 որոշում, կետ 22):

5) «Սահմանադրության 29-րդ հոդվածում թվարկված են խտրականության սահմանադրական արգելքով պաշտպանված հիմքերը, որոնք ունեն հստակ և որոշակի բովանդակություն, բացառությամբ նույն հոդվածում պաշտպանվող հիմքերի թվարկման համար օգտագործված «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպման, որոնք, ի տարբերություն պաշտպանվող հիմքերի մնացած մասի, բաց ցանկ են նախատեսում:

Այնուամենայնիվ, թեպետ «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպումը խտրականության արգելքով պաշտպանվող բաց ցանկ է նախատեսում, այն խիստ որոշակիորեն սահմանում է այդ ցանկով հնարավոր հիմքերի բնույթը, որոնցից որևէ մեկը Սահմանադրության 29-րդ հոդվածով պաշտպանվող հիմք հանդիսանալու համար պետք է լինի «անձնական» կամ «սոցիալական» բնույթի» (2023 թվականի ապրիլի 25-ի ՍԴՈ-1685 որոշում, կետ 4.4.1.2):

Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ Դիմողի կողմից սույն գործով ներկայացված չէ որևէ հիմնավորում առ այն, որ համապատասխան սուբյեկտների նկատմամբ տարբերակված վերաբերմունքը դրսևորվել է Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկով կամ պայմանավորված է «անձնական» կամ «սոցիալական» բնույթի որևէ հանգամանքով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված՝ խտրականության սահմանադրական արգելքով պաշտպանված որևէ հիմք առկա չէ: Հետևաբար՝ առանց անդրադառնալու խտրականության արգելքի մյուս պայմանների առկայությանը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Օրենքի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրության 29-րդ հոդվածին հակասության հարկանիշներ առկա չեն:**

5.3. Սույն գործով վիճարկվող օրինադրույթի՝ Սահմանադրության 60-րդ հոդվածին ենթադրյալ հակասության առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է.

Սահմանադրության՝ «Սեփականության իրավունքը» վերտառությամբ 60-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով

ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

(...)

3. *Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

(...)»:

Սահմանադրական դատարանը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս անդրադարձել են սեփականության իրավունքին, դրա բովանդակությանը, այդ համատեքստում՝ «օրինական ակնկալիք» եզրույթի բովանդակության բացահայտմանը:

Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-741 որոշման մեջ արձանագրված է. «(...) Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք» (կետ 8):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (տես *Trgo v. Croatia*, գանգատ թիվ 35298/04, 11.06.2009, Final 11.09.2009, § 44): Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «գույքը» կարող է լինել «գոյություն ունեցող սեփականությունը» կամ «ակտիվները», ներառյալ՝ պահանջները, որոնց առնչությամբ դիմումատուն կարող է վիճարկել, որ առնվազն ունի սեփականության իրավունքից անարգել օգտվելու «օրինական ակնկալիք» (տես *J. A. Pye (Oxford) Ltd and J. A. Pye (Oxford) Land Ltd v. The United Kingdom*, գանգատ թիվ 44302/02, 30.08.2007, § 61): «Ակնկալիքը» համարվում է օրինական, եթե այն հիմնված է օրենսդրական դրույթի կամ քննարկվող գույքի վերաբերյալ իրավական ակտի վրա (տես *Saghinadze and others v. Georgia*, գանգատ թիվ 18768/05, 27.05.2010, Final 27.08.2010, § 103):

Վերոնշյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի վիճարկվող դրույթի առաջին պարբերությամբ նախատեսված՝ *ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատման պահից մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի*

համար համապատասխան ծառայողին տրվող **դրամական փոխհատուցումը** (բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար) ունի ինքնավար բովանդակություն, հետևաբար՝ չի նույնանում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1.1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում աշխատողի խախտված իրավունքները վերականգնվելիս աշխատողի օգտին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար գործատուից գանձվող գումարի հետ:

Սույն գործով զեկուցող դատավորի՝ 2024 թվականի հուլիսի 3-ի գրությանն ի պատասխան՝ 2024 թվականի հուլիսի 9-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահի ստորագրությամբ գրությունը՝ առդիրով (թիվ ՎԴ2/0189/05/20 վարչական գործը՝ 5 հատորից, կից՝ ծառայողական քննության նյութերի պատճենները):

Վերոնշյալի առնչությամբ Վերաքննիչ վարչական դատարանի՝ 2023 թվականի հուլիսի 7-ի որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «(...) հայցվորը, 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 2334-Ա հրամանի 1-ին կետն անվավեր ճանաչված լինելու պայմաններում, պահպանում է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրամական հատուցում ստանալու իրավունքը, սակայն ոչ թե հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի, այլ չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար:

Ըստ այդմ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հայցը՝ հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար դրամական հատուցում տրամադրելուն Ոստիկանությանը պարտավորեցնելու մասով, հիմնավոր չէ և ենթակա է մերժման՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնակարգման հաշվառմամբ և դրանով հատկորոշված ժամանակային տիրույթի կտրվածքով» (3-րդ կետ):

Սույն գործով Դիմողի (Վճռաբեկ դատարան) թիվ ՎԴ2/0189/05/20 վարչական գործով «ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշման մեջ նշված է. «Վճռաբեկ դատարանը, ընդունելի համարելով Վերաքննիչ դատարանի դիրքորոշումներն առ այն, որ սույն գործով առկա հարկադիր պարապուրդի համար դրամական փոխհատուցում ստանալու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է հատուկ օրենքը և ելնելով «հատուկ օրենքը վերացնում է ընդհանուրի գործո-

դուրյունը» (*lex specialis derogat legi generali*) հանրաճանաչ սկզբունքի բովանդակությունից, գտնում է, որ սույն գործով ոստիկանությունից անհիմն ազատված ծառայողի վերականգնման դեպքում հարկադիր պարապուրդի համար վճարման ենթակա դրամական փոխհատուցման իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը» (2-րդ կետ):

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ Դիմողի կողմից բարձրացված՝ «Արդյո՞ք ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատված, կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողների համար երաշխավորվում է աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար դրամական փոխհատուցում ստանալու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված լեգիտիմ ակնկալիքի իրավունքն իրացնելու հնարավորությունը» հարցադրման առնչությամբ (Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք ակտերում արտացոլված իրավական դիրքորոշումների վկայակոչմամբ) Սահմանադրական դատարանը նկատում է, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի ներքո ներկայացվող սեփականության իրավունքի ձեռքբերման օրինական ակնկալիքը թիվ ՎԴ2/0189/05/20 վարչական գործով Վերաքննիչ վարչական դատարանի կողմից 2023 թվականի հուլիսի 7-ի որոշման հիմնավորումների և եզրահանգման շրջանակներում համապատասխան օրինադրույթների մեկնաբանման և կիրառման արդյունքում առհասարակ բացակայել է, իսկ Դիմողը, ինչպես վերը նշվեց, ընդունելի համարելով Վերաքննիչ վարչական դատարանի դիրքորոշումներն առ այն, որ սույն գործով դրամական փոխհատուցում ստանալու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է հատուկ օրենքը, և ելնելով «հատուկ օրենքը վերացնում է ընդհանուրի գործողությունը» հանրաճանաչ սկզբունքի բովանդակությունից՝ գտել է, որ սույն գործով ոստիկանությունից անհիմն ազատված ծառայողի վերականգնման դեպքում վճարման ենթակա դրամական փոխհատուցման իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **Օրենքի վիճարկվող դրույթի առաջին պարբերությունում հիշատակված է դրամական փոխհատուցման մասին, կոնկրետացված է վերջինիս**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

տրամադրման ժամանակահատվածը՝ ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատման պահից մինչև վերականգնումը (բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար), **ինչպես նաև չափը՝** չվճարված աշխատավարձի չափով: Նման պայմաններում ինքնին գույքային շահը կամ հավակնությունը, որը զուրկ է իրավական հիմքից, չի կարող հանդես գալ որպես Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի պաշտպանության երաշխիքների ներքո «օրինական ակնկալիք»:

Սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի առնչությամբ վերոնշյալ մոտեցումը վերաբերելի է նաև Օրենքի վիճարկվող դրույթի երկրորդ պարբերությանը:

Ուստի՝ սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Օրենքի վիճարկվող դրույթի (սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի մասով)՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին ենթադրյալ հակասության վերաբերյալ պնդումները հիմնավոր չեն:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության «բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար» ձևակերպումը ճանաչել Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

15 հոկտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1757



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 հոկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղակալ Է. Հակոբյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի հունիսի 26-ին ստորագրված «Հայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի սեպտեմբերի 5-ի N 1411-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի հունիսի 26-ին ստորագրված ««Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հոկտեմբերի 7-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ արձանագրությունը, հետազոտելով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ««Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2024 թվականի հունիսի 26-ին Աստանայում՝ Պայմանագրում Արձանագրությամբ սահմանված խմբագրությամբ փոփոխություններ կատարելու նպատակով:

2. Արձանագրությունը ստորագրվել է Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև, որոնք հանդիսանում են Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի (այսուհետ՝ ԿԶԵՀ կամ Հիմնադրամ) հիմնադիր պետություններ:

3. Արձանագրությանը կից ներկայացված ԿԶԵՀ կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն) Պայմանագրի անբաժանելի մասն է:

ԿԶԵՀ-ն իր գործունեությունն իրականացնում է՝ առանց վսաս հասցնելու Հիմնադրամի մասնակից պետությունների ինքնիշխանությանը՝

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 5(117)2024

դրանց կողմից սեփական ազգային տնտեսությունների կառավարման հարցերում: ԿԶԵՀ-ը Հիմնադրամի յուրաքանչյուր մասնակից պետության նկատմամբ արդար վերաբերմունք է ապահովում Պայմանագրի, Կանոնադրության և ԿԶԵՀ մարմինների կողմից հաստատված փաստաթղթերի հիման վրա, և իր գործունեությունն իրականացնելիս ԿԶԵՀ-ն առաջնորդվում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով և նորմերով, կիրառելի միջազգային պայմանագրերով, Պայմանագրով և Կանոնադրությամբ:

4. Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն Արձանագրությունն ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

5. Արձանագրության 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Արձանագրությունը Կողմերը ժամանակավորապես կիրառում են ստորագրման օրվանից 30 օր հետո՝ բացառությամբ այն Կողմի, որն իր նկատմամբ տվյալ դրույթը չկիրառելու մասին վերապահում է կատարել:

Հայաստանի Հանրապետությունն Արձանագրության առնչությամբ կատարել է վերապահում՝ հետևյալ բովանդակությամբ. «Հայաստանի Հանրապետությունը սույն Արձանագրությունը կկիրառի մինչև սույն Արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն դրա ուժի մեջ մտնելը միայն Հայաստանի Հանրապետության կողմից համապատասխան ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցման օրվանից»:

6. Արտաքին գործերի նախարարության՝ Արձանագրության վավերացման նպատակահարմարության վերաբերյալ եզրակացության համաձայն՝ «Արձանագրությամբ նախատեսված փոփոխությունների արդյունքում Հիմնադրամին շնորհվում է միջազգային ֆինանսական կազմակերպության կարգավիճակ, և վերջինս ճանաչվում է Հիմնադրամի միջոցների կառավարիչ գործողություններ իրականացնելիս Եվրասիական զարգացման բանկի կողմից ընդունված կամ ձեռք բերված իրավունքների, պարտավորությունների, ակտիվների և այլ գույքի լիիրավ իրավահաջորդ:

Արձանագրությամբ նաև սահմանվում է մասնակից պետությունների ազգային արժույթներով նախագծերի և ծրագրերի ֆինանսավորման հնարավորություն:

Ընդհանուր առմամբ Արձանագրության ստորագրումը միտված է մասնակից երկրներում ֆինանսական կայունության ապահովման հարցում Հիմնադրամի դերի ամրապնդմանը և վերջինիս ներդրումային հնարավորությունների արդյունավետ օգտագործմանը»:

7. Արձանագրությամբ փոփոխվում է Պայմանագրի 1-ին հոդվածի առաջին պարբերությունը, լրացվում է 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, փոփոխվում են 5-րդ հոդվածի առաջին և երկրորդ պարբերությունները, 7-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը, հանվում են 2-րդ, 3-րդ, 4-րդ հոդվածները, Պայմանագրի՝ «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի մասին հիմնադրույթ» հավելվածը փոխարինվում է «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի կանոնադրություն» հավելվածով՝ Արձանագրությանը կից ներկայացվող խմբագրությամբ, ինչպես նաև Պայմանագրի տեքստում «Հիմնադրամի մասին հիմնադրույթ» բառերը փոխարինվում են «Հիմնադրամի կանոնադրություն» բառերով՝ համապատասխան հղովներով:

Արձանագրությամբ կատարված փոփոխությունների արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությունը՝ ի հավելումն նախկինում ստանձնած պարտավորությունների, ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- ապահովել, որ որպես Հիմնադրամի մասնակից պետություն՝ Հայաստանի Հանրապետության կատարած յուրաքանչյուր ներդրում կազմի այնպիսի գումար, որը Կառավարիչների խորհուրդը կորոշի՝ որպես ԿԶԵՀ-ի հաշվարկային միավորով արտահայտված կատարվող ներդրման գումարին համարժեք (Կանոնադրության գլուխ 3, հոդված 9, կետ 6, ենթակետ 2),

- վճարված արժույթների՝ ԿԶԵՀ-ի հաշվարկային միավորներով արտահայտված արժեքի նվազման դեպքում, որպես այդ արժույթները ԿԶԵՀ-ի կապիտալ վճարած պետություն, ԿԶԵՀ-ին վճարել այդ արժույթներով լրացուցիչ գումար, որն անհրաժեշտ է ԿԶԵՀ-ի կապիտալում այդ արժույթներով Հայաստանի Հանրապետության վճարած ներդրումների բոլոր գումարների արժեքները պահպանելու համար՝ Կառավարիչների խորհրդի կողմից հաստատվող կարգին համապատասխան (Կանոնադրության գլուխ 3, հոդված 9, կետ 6, ենթակետ 3),

- անհապաղ միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետության տարածքում Կանոնադրության 7-րդ գլխում շարադրված դրույթներին

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՊՏՈՒՄ 5(117)2024

իրականացնելու համար, և տեղեկացնել ԿԶԵՀ-ին՝ ձեռնարկված գործողությունների մասին (Կանոնադրության գլուխ 7, հոդված 21, կետ 2),

- ԿԶԵՀ-ի պաշտոնական հաղորդագրություններին տրամադրել Հիմնադրամի ցանկացած այլ անդամ պետության պաշտոնական հաղորդագրություններին նույնանման ռեժիմ՝ ներառյալ դրա դիվանագիտական ներկայացուցչությունները (Կանոնադրության գլուխ 7, հոդված 22, կետ 6),

- չսահմանել որևէ արժույթային սահմանափակում՝ ներառյալ ԿԶԵՀ-ի միջոցների մուտքը, դրանց տիրապետումը, օգտագործումը կամ փոխանցումը ԿԶԵՀ-ի ֆինանսավորման ցանկացած ստացողի կողմից՝ ցանկացած երկրում վճարումների կատարման համար (Կանոնադրության գլուխ 7, հոդված 22, կետ 7),

- երաշխավորել Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս Ղեկավար տնօրենի, Ղեկավար տնօրենի տեղակալների, Վարչության անդամների և ԿԶԵՀ-ի աշխատակիցների՝ դատական և վարչական հետապնդումից՝ իրենց ծառայողական պարտականությունները կատարելու շրջանակներում իրենց կողմից կատարված գործողությունների համար անձեռնմխելիությունը, որը չի կիրառվում քաղաքացիական պատասխանատվության նկատմամբ՝ ճանապարհատրանսպորտային պատահարների ժամանակ վնաս պատճառելու դեպքում (Կանոնադրության գլուխ 7, հոդված 22, կետ 8, ենթակետ 1),

- երաշխավորել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ ընտանիքների անդամներ ճանաչված անձանց հետ միասին (այսուհետ՝ ընտանիքի անդամներ) հայրենադարձության մասով այնպիսի արտոնությունները, որոնցից օգտվում են Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցները (Կանոնադրության գլուխ 7, հոդված 22, կետ 8, ենթակետ 2),

- Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս Ղեկավար տնօրենին, Ղեկավար տնօրենի տեղակալներին, Վարչության անդամներին և ԿԶԵՀ-ի աշխատակիցներին ազատել անձնական օգտագործման համար նախատեսված ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսային մարմինների կողմից գանձվող մաքսային տուրքերը, հարկերը և վճարները վճարելուց (Կանոնադրության գլուխ 7, հոդված 22, կետ 8, ենթակետ 3),

- Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս Ղեկավար տնօրենին, Ղեկավար տնօրենի տեղակալներին, Վարչության անդամներին և ԿԶԵՀ-ի աշխատակիցներին ազատել պետական ծառայության պարտականություններից (Կանոնադրության գլուխ 7, հոդված 22, կետ 8, ենթակետ 4),

- Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս Ղեկավար տնօրենին, Ղեկավար տնօրենի տեղակալներին, Վարչության անդամներին և ԿԶԵՀ-ի աշխատակիցներին ընտանիքի անդամների հետ միասին ազատել ներգաղթի մասով սահմանափակումներից և որպես օտարերկրացիներ գրանցվելուց (Կանոնադրության գլուխ 7, հոդված 22, կետ 8, ենթակետ 5),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս Ղեկավար տնօրենը, Ղեկավար տնօրենի տեղակալները, Վարչության անդամները և ԿԶԵՀ-ի աշխատակիցները արժույթային գործառնությունների ոլորտում օգտվեն նույնպիսի առանձնաշնորհումներից, որոնք տրամադրվում են տվյալ պետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցներին (Կանոնադրության գլուխ 7, հոդված 22, կետ 8, ենթակետ 6),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս Ղեկավար տնօրենը, Ղեկավար տնօրենի տեղակալները, Վարչության անդամները և ԿԶԵՀ-ի աշխատակիցները տեղաշարժումների պայմանների և ազատության մասով օգտվեն նույնանման առանձնաշնորհումներից, ինչպես դա կիրառելի է այլ մասնակից պետությունների ներկայացուցիչների, պաշտոնատար անձանց և համադրելի աստիճանի աշխատակիցների նկատմամբ (Կանոնադրության գլուխ 7, հոդված 22, կետ 8, ենթակետ 7),

- ԿԶԵՀ-ը, դրա եկամուտները, գույքը և այլ ակտիվներ, ինչպես նաև դրա գործառնություններն ու գործարքները, որոնք, Կանոնադրությանը համապատասխան, իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, ազատել ցանկացած հարկից, վճարից, տուրքից և այլ վճարումից՝ բացառությամբ այն վճարների, որոնք վճարներ են սպասարկման կոնկրետ տեսակների դիմաց (Կանոնադրության գլուխ 7, հոդված 23, կետ 1),

- Հայաստանի Հանրապետության տարածքում ազատել ԿԶԵՀ-ին իր պաշտոնական գործունեության շրջանակներում մաքսային տուրքերից, հարկերից և վճարներից՝ ԿԶԵՀ-ի ծառայողական օգտագործման համար նախատեսված ապրանքները ներմուծելիս և արտահանելիս (Կանոնադրության գլուխ 7, հոդված 23, կետ 2, պարբերություն 1),

- չգանձել որևէ հարկ, պարտադիր ներդրում և վճար, տուրք և (կամ) այլ ցանկացած վճարում աշխատավարձից և այլ վարձատրություններից, փոխհատուցումներից, կրած ծախսերից կամ ԿԶԵՀ-ի կողմից Ղեկավար տնօրենին, Ղեկավար տնօրենի տեղակալներին, Վարչության անդամներին և ԿԶԵՀ-ի աշխատակիցներին վճարվող այլ վճարումների կապակցությամբ (Կանոնադրության գլուխ 7, հոդված 23, կետ 3),

- ազատել ԿԶԵՀ-ին ցանկացած հարկի, տուրքի, պարտադիր վճարի հաշվարկման, գանձման, պահման և վճարման մասով պարտավորություններից, այդ թվում՝ այն դեպքերում, երբ հարկերի պահումը և վճարումն իրականացվում է եկամուտ ստանալու աղբյուրին կից հարկային գործակալի կողմից (Կանոնադրության գլուխ 7, հոդված 23, կետ 4),

- ԿԶԵՀ-ին տրամադրել հիմնավորված հարցվող տեղեկատվություն՝ ԿԶԵՀ-ի նպատակի իրագործմանը և գործառույթների կատարմանն աջակցելու նպատակներով (Կանոնադրության գլուխ 8, հոդված 29, կետ 5):

8. Այն օրվանից, երբ պետությունը դադարում է լինել Հիմնադրամի մասնակից պետություն, այն շարունակում է պատասխանատվություն կրել՝ ԿԶԵՀ-ի նկատմամբ իր պարտավորությունների մասով այնքան ժամանակ, քանի դեռ փոխառությունների կամ ֆինանսավորման այլ ձևերի որևէ մաս Կանոնադրության 10-րդ հոդվածին համապատասխան, որոնց մասով համաձայնագրերը կնքվել են նախքան պետության՝ Հիմնադրամի մասնակից լինելու դադարելը, մնում է չմարված, բայց այն պարտավորություններ չի կրում ԿԶԵՀ-ի կողմից ավելի ուշ տրված փոխառությունների կամ այլ ֆինանսավորման մասով և չի մասնակցում ԿԶԵՀ-ի մաքուր եկամտի բաշխմանը կամ ծախսերի ծածկմանը (Կանոնադրության գլուխ 6, հոդված 18, կետ 9):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի

մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2024 թվականի հունիսի 26-ին ստորագրված ««Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

18 հոկտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1758

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2024 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԿԱՅՈՒՆԱԳՄԱՆ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
18-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1758 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2024 թվականի հունիսի 26-ին ստորագրված «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-1758 որոշմամբ որոշել է, որ 2024 թվականի հունիսի 26-ին ստորագրված՝ «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-1758 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությանը 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-1758 որոշմամբ 2024 թվականի հունիսի 26-ին ստորագրված՝ «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի

հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ են համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեն համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում են, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը¹:

Միաժամանակ Սահմանադրության 152-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից հետևում է, որ Կառավարության գործունեությունը ղեկավարում է վարչապետը, իսկ նրա բացակայության ժամանակ վարչապետի սահմանած կարգով վարչապետին փոխարինում է փոխվարչապետներից մեկը:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

Սահմանադրության վերոնշյալ դրույթները և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված: Ընդ որում, վերը նշված կարգավորումները հնարավոր են համարում այդ հարցով դիմումի ստորագրումը նաև վարչապետի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինող փոխվարչապետի կողմից: Միաժամանակ իմ գնահատմամբ, եթե դիմումը ստորագրվում է ոչ թե վարչապետի, այլ վերջինիս փոխարինող փոխվարչապետի կողմից, Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին պետք է կցվի այդ փոխվարչապետի կողմից վարչապետին փոխարինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթը (դրա պատճենը), քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինի փաստել նրա՝ որպես վարչապետին փոխարինող անձի՝ Սահմանադրական դատարանում Կառավարությանն ի պաշտոնե ներկայացնելու լիազորության առկայությունը:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է Հայաստանի Հանրապետության վարչապետի գրության ձևաթղթի վրա կազմված, Միեր Գրիգորյանի կողմից Սահմանադրական դատարանին հասցեագրված գրություն², որով նա, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասով, դիմել է Սահմանադրական դատարան՝ 2024 թվականի հունիսի 26-ին ստորագրված՝ «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

² Ինչպես 2024 թվականի հոկտեմբերի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված գրության, այնպես էլ դրան կից ներկայացված՝ Կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 1411-Ա որոշման վրա առկա չէ ստորագրություն, ինչին անդրադարձ կկատարվի ստորև:

Մինչդեռ սույն գործի նյութերը հնարավորություն չեն տալիս եզրահանգում կատարել այն մասին, որ Սահմանադրական դատարանն ղիմած անձն իրավասու էր միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով Կառավարության անունից ղիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Մասնավորապես՝ գործի նյութերից պարզ չէ, թե Սահմանադրական դատարանն ղիմած անձն ինչ կարգավիճակով է Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ղիմել Սահմանադրական դատարան, արդյոք նա եղել է վարչապետի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինող փոխվարչապետ, թե՛ ոչ, այն դեպքում, երբ ըստ սույն գործի նյութերի՝ նշված ղիմումը ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետ Միեր Գրիգորյան»-ի կողմից:

Գտնում եմ, որ ղիմողի կողմից ներկայացված՝ գործի նյութերի հիման վրա նշված հարցերը պարզելու հնարավորության բացակայության պայմաններում ղիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ինչը հիմք էր «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման, այն է՝ եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից ղիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին ղիմողին տեղեկացնելու համար:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները 24-րդ հոդվածի 1-ին մասի և 88-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումներից հետևում է, որ ղիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների, իսկ էլեկտրոնային եղանակով ղիմումի ներկայացումը Սահմանադրական դատարան թույլատրելի է միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734,

ՍԱՀԱՄԱՆԱՐԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

ՍԴԴ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրեն-

քի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում

նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շփոթելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«18» հոկտեմբերի 2024թ.

ՍԱՀՄԱՆԱՌՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 5(117)2024 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ
ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 նոյեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի,
Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հ. Հարությունյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի
Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային
բանկի միջև «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր»
վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու
վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 5(117)2024

Կառավարությունն իր՝ 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N 1461-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի օգոստոսի 6-ին և օգոստոսի 8-ին՝ Համաձայնագրի 1-ին հավելվածում սահմանված Ծրագրին աջակցելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

2. Համաձայնագրով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնում է Համաձայնագրի 1-ին հավելվածում նկարագրված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու համար Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 40.000.000 ԱՄՆ դոլար գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով: Ծրագրի փակման ամսաթիվն է 2029 թվականի հունիսի 30-ը:

Ծրագրի նպատակներն են՝ ապահովել ավելացված վերականգնվող էներգետիկ կարողությունների ինտեգրումն էլեկտրահաղորդման ցանցում և ընդլայնել էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակությունը:

Ծրագիրը ԲԾՄ ծրագրի¹ փուլ է և կազմված է երկու ոլորտներից. Արդյունքային ոլորտ 1. «Էլեկտրահաղորդման ցանցում ավելացված

¹ «ԲԾՄ ծրագիր» նշանակում է Բազմափուլ ծրագրային մոտեցման ծրագիր, որը մշակվել է ավելացնելու համար վերականգնվող էներգետիկ կարողությունները Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի մասնակից երկրներում:

վերականգնվող էներգետիկ կարողությունների ինտեգրման ապահովում» և Արդյունքային ոլորտ 2. «Էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակության ընդլայնում»: Վերջիններս էլ ներառում են մի շարք միջոցառումներ՝ ինչպես նշված է Համաձայնագրի 1-ին հավելվածում:

Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս կազմող երեք հավելված և մեկ առդիր՝ Հավելված 1. «Ծրագրի նկարագրությունը», Հավելված 2. «Ծրագրի կատարումը», Հավելված 3. «Հանձնառությամբ պայմանավորված աստիճանական մարման ժամանակացույց» և Առդիր. «Սահմանումներ»:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

3.1. վճարել Միանվագ կոմիսիոն վճար՝ Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25%) հավասար չափով (Հոդված II, բաժին 2.03),

3.2. վճարել Պարտավորավճար՝ տարեկան Վարկի չառհանված մնացորդի մեկ քառորդ տոկոսին (0.25%) հավասար չափով (Հոդված II, բաժին 2.04),

3.3. վճարել տոկոսադրույք, որն Ելակետային տոկոսադրույքն է՝ գումարած Լողացող սպրեդը կամ այնպիսի տոկոսադրույքը, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ համաձայն Ընդհանուր պայմանների 3.02 «ե» բաժնի (Հոդված II, բաժին 2.05),

3.4. սկսած 2039 թվականի հուլիսի 15-ից մինչև 2049 թվականի հունվարի 15-ը՝ կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին վերադարձնել Վարկի մայր գումարը 5% մասնաբաժնով (Հոդված II, բաժիններ 2.06, 2.07 և Հավելված 3),

3.5. հայտարարել Ծրագրի նպատակների և Բազմափուլ ծրագրային մոտեցման (այսուհետ՝ ԲԾՄ) ծրագրի մասով Հայաստանի Հանրապետության պարտավորությունը և այդ նպատակով ապահովել, որ Ծրագիրն իրականացվի Ծրագիրն իրականացնող մարմնի կողմից՝ Ընդհանուր պայմանների V հոդվածի, Համաձայնագրի 2-րդ հավելվածի և Ծրագրային համաձայնագրի համաձայն (Հոդված III, բաժին 3.01),

3.6. Ծրագրի իրականացման ընթացքում մշտապես ապահովել, որ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ ՏԿԵՆ) պատասխանատու լինի Ծրագրի ընդհանուր համակարգման համար և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ ՀԾԿ) հետ միասին պատասխանատու լինի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

համապատասխան քաղաքականության վերաբերյալ և կարգավորող որոշումների համար (Հավելված 2, բաժին I, կետ «Ա», ենթակետ 1),

3.7. Ծրագրի իրականացման ընթացքում մշտապես ունենալ Բանկի համար բավարար մանդատով, կազմով և ռեսուրսներով Տեխնիկական աշխատանքային խումբ, որը կնախագահի ՏԿԵՆ-ը, կազմված կլինի համապատասխան բոլոր մարմիններից, պատասխանատու կլինի Ծրագրի համակարգման և Ծրագրի իրականացումը դյուրացնելու համար (Հավելված 2, բաժին I, կետ «Ա», ենթակետ 2),

3.8. Ծրագրի իրականացումը դյուրացնելու համար Վարկի միջոցները հասանելի դարձնել Ծրագիրն իրականացնող մարմնի համար Հայաստանի Հանրապետության և Ծրագիրն իրականացնող մարմնի միջև օժանդակ համաձայնագրի շրջանակներում՝ Բանկի կողմից հաստատված պայմաններով (Օժանդակ համաձայնագիր) (Հավելված 2, բաժին I, կետ «Բ», ենթակետ 1),

3.9. Օժանդակ համաձայնագրով սահմանված Հայաստանի Հանրապետության իրավունքներն իրացնել այնպես, որ պաշտպանվի Հայաստանի Հանրապետության և Բանկի շահերը և հասնի Վարկի նպատակներին, իսկ եթե Բանկն այլ բան չի համաձայնում, չփոխել, չփոփոխել, չհեղարկել Օժանդակ համաձայնագիրը կամ դրա դրույթներից որևիցե մեկը կամ չիրաժարվել դրանցից (Հավելված 2, բաժին I, կետ «Բ», ենթակետ 2),

3.10. ապահովել, որ Ծրագրի գործողությունների ծրագիրը, որը համաձայնեցվել է Բանկի հետ, իրականացվի նշված Ծրագրի գործողությունների ծրագրում սահմանված ժամանակացույցին համապատասխան, Բանկի համար բավարար ձևով, և վարել քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք պատշաճ են նշված Ծրագրի գործողությունների ծրագիրը Բանկի համար բավարար եղանակով և բովանդակությամբ դիտանցելու և գնահատելու հնարավորություն տալու համար (Հավելված 2, բաժին I, կետ «Գ», ենթակետ 1),

3.11. առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության՝ էականորեն և (կամ) զգալիորեն չփոփոխել, չվերանայել Ծրագրի գործողությունների ծրագրի որևէ դրույթ, չիրաժարվել դրանից, չհեղարկել կամ չկասեցնել այն (Հավելված 2, բաժին I, կետ «Գ», ենթակետ 2),

3.12. ապահովել, որ Ծրագիրը բացառի ցանկացած գործողություն, որը, Բանկի կարծիքով, հավանական է, որ շրջակա միջավայրի և (կամ) ազդակիր անձանց վրա զգալի բացասական ազդեցություններ

կունենա, որոնք զգայուն, տարաբնույթ կամ աննախադեպ են, կամ ներառում է աշխատանքների գնումներ, որոնց գնահատված արժեքը կազմում է հարյուր տասնհինգ միլիոն դոլարին (\$115,000,000) համարժեք կամ ավելի գումար մեկ պայմանագրի համար, ներառում է ապրանքների գնումներ, որոնց գնահատված արժեքը կազմում է յոթանասունհինգ միլիոն դոլարին (\$75,000,000) համարժեք կամ ավելի գումար մեկ պայմանագրի համար, ներառում է ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ, որոնց գնահատված արժեքը կազմում է յոթանասունհինգ միլիոն դոլարին (\$75,000,000) համարժեք կամ ավելի գումար մեկ պայմանագրի համար, կամ ներառում է խորհրդատվական ծառայությունների գնումներ, որոնց գնահատված արժեքը կազմում է երեսուն միլիոն դոլարին (\$30,000,000) համարժեք կամ ավելի գումար մեկ պայմանագրի համար (Հավելված 2, բաժին II),

3.13. Ծրագրի յուրաքանչյուր հաշվետվություն Բանկին ներկայացնել ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից մեկ (1) ամիս հետո՝ ներառելով օրացուցային կիսամյակը (Հավելված 2, բաժին III),

3.14. չնայած Համաձայնագրի 2-րդ հավելվածի IV բաժնի «Ա» մասի դրույթներին՝ որևէ առհանում չկատարել ստորագրման ամսաթվից առաջ ապահովված հատկացումների հետ կապված արդյունքների (այսուհետ՝ ՀԿԱ) հիման վրա՝ բացառությամբ նրա, որ մինչև \$5,321,000-ը չգերազանցող հանրագումարի չափով առհանումները կարող են կատարվել ՀԿԱ #1-ի և ՀԿԱ #2-ի հիման վրա, որոնք իրագործվել են նախքան այդ ամսաթիվը, սակայն 2023 թ. փետրվարի 3-ի օրը կամ դրանից հետո, ինչպես նաև Համաձայնագրի 2-րդ հավելվածի IV բաժնի «Ա» մասի 2-րդ կետի աղյուսակում նշված 1-7-րդ կատեգորիաների շրջանակներում որևէ ՀԿԱ-ի համար, մինչև և եթե Հայաստանի Հանրապետությունը Բանկի համար բավարար փաստարկներ չի ներկայացնում առ այն, որ ՀԿԱ-ն իրագործվել է (Հավելված 2, բաժին IV, մաս «Բ», կետ 1):

4. Համաձայնագրի 2-րդ հավելվածի IV բաժնի «Ա» մասի 2-րդ կետի աղյուսակում սահմանվում է Վարկի միջոցների առհանման յուրաքանչյուր կատեգորիա (այդ թվում՝ Հատկացման հետ կապված ցուցանիշները՝ ըստ կիրառելիության) (Կատեգորիա), Կատեգորիաներից յուրաքանչյուրի համար՝ Հատկացումների հետ կապված արդյունքները (ըստ կիրառելիության) և Կատեգորիաներից յուրաքանչյուրի համար՝ Վարկի գումարների հատկացումը:

Համաձայնագրի I հոդվածի 1.01 բաժնի համաձայն՝ «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի Ընդհանուր պայմանները՝ ՎՋՄԲ ֆինանսավորման համար, արդյունքահեն ծրագրի ֆինանսավորում»՝ թվագրված 2018 թվականի դեկտեմբերի 14-ով (վերջին անգամ վերանայված 2023 թվականի հուլիսի 15-ին)՝ ինչպես սահմանված են Համաձայնագրի առդիրում, կիրառվում են Համաձայնագրի նկատմամբ և կազմում են դրա մաս:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

19 նոյեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1759

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՑՈՒՄՆ
ԱՊԱՀՈՎՈՂ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1759
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի նոյեմբերի 19-ի ՍԴՈ-1759 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 19-ի ՍԴՈ-1759 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի նոյեմբերի 19-ի ՍԴՈ-1759 որոշմամբ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ

համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար

հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների,

որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված

փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«19» նոյեմբերի 2024թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ 5(117)2024 ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ
«ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 նոյեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի,
Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Առողջապահության նախարարի
առաջին տեղակալ Լենա Նանուշյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ
հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի
Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային
բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի
իրականացում» վարկային համաձայնագրում ամրագրված պար-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

տավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N 1455-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով սույն գործով զեկուցողի զեկույցը, Կառավարության ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի հուլիսի 25-ին՝ առաջնային առողջապահության որակը բարելավելու, առողջապահության պետական ծախսերի արդյունավետությունը բարձրացնելու և առողջապահական ծառայություններից օգտվելու ֆինանսական խոչընդոտները նվազեցնելու նպատակով:

2. Համաձայնագրով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել հարյուր երկուս միլիոն եվրոյի չափով (102,000,000 եվրո) վարկ, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով (Վարկ)՝ Համաձայնագրի 1-ին հավելվածում նկարագրված ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորելու համար:

3. Համաձայնագիրն ունի երեք հավելված և մեկ առդիր, որոնք դրա անբաժան մասն են կազմում՝ **Հավելված 1.** «Ծրագրի նկա-

րագրությունը», **Հավելված 2.** «Ծրագրի իրականացումը», **Հավելված 3.** «Հանձնառությամբ պայմանավորված աստիճանական մարման ժամանակացույց» և **Առդիր.** «Սահմանումները»:

4. Համաձայնագրին կից ներկայացված՝ Արտաքին գործերի նախարարության՝ Համաձայնագրի վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության մասին եզրակացության և ուժի մեջ մտնելու կարգի վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Ծրագրի իրականացումը կարող է նպաստել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) շրջանակներում և համապատասխան միջկառավարական մարմինների շրջանակներում ընդունված բանաձևերի և հռչակագրերի միջոցով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած հանձնառությունների իրագործմանը, որոնք միտված են Առողջության համապարփակ ծածկույթի (UHC) ներդրմանը:

Համաձայնագրին կից ներկայացված՝ Առողջապահության նախարարության՝ Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Վարկային ծրագիրը արդյունքահեն է, այսինքն՝ վարկային գումարից մասհանումներն իրականացվելու են նախապես համաձայնեցված և սահմանված թիրախներին (մասհանման հետ կապակցված ցուցանիշներ՝ ՄԿՑ) հասնելու դեպքում: Վարկային ծրագրի փաթեթի նախապատրաստումը տևել է շուրջ մեկ տարի, և ցուցանիշները մշակվել են Առողջապահության նախարարության, Ֆինանսների նախարարության և Համաշխարհային բանկի համատեղ աշխատանքի և համաձայնեցման արդյունքում:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները՝

- վճարել միանվագ կոմիսիոն վճար՝ Վարկի գումարի մեկ քառորդ (0.25%) տոկոսին հավասար չափով (Հոդված II, բաժին 2.03),
- վճարել պարտավորավճար՝ Չառհանված Վարկի մնացորդի տարեկան մեկ քառորդ (0.25%) տոկոսին հավասար չափով (Հոդված II, բաժին 2.04),
- վճարել տոկոսադրույք, որը Կողմնորոշիչ տոկոսադրույքն է գումարած Լողացող սպրեդը կամ այնպիսի տոկոսադրույք, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ համաձայն Ընդհանուր պայմանների 3.02 (ե) բաժնի (Հոդված II, բաժին 2.05),

- սկսած 2039 թվականի հուլիսի 15-ից մինչև 2049 թվականի հունվարի 15-ը ներառյալ՝ կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին վերադարձնել Վարկի մայր գումարը՝ 5 % մասնաբաժնով (Հոդված II, բաժիններ 2.06, 2.07 և Հավելված 3),

- հայտարարել Ծրագրի մասով Հայաստանի Հանրապետության հանձնառությունը և այդ նպատակով Ծրագիրն իրականացնել Առողջապահության նախարարության միջոցով՝ Ընդհանուր պայմանների V հոդվածի և Համաձայնագրի 2-րդ հավելվածի դրույթներին համապատասխան (Հոդված III, բաժին 3.01),

- Ծրագրի իրականացման ընդհանուր պատասխանատվությունը վերապահել Առողջապահության նախարարությանը, ոչ ուշ, քան Ուժի մեջ մտնելու ամսաթվից մեկ (1) ամիս հետո ստեղծել Բանկի համար ընդունելի մանդատով, կազմով և ռեսուրսներով Տեխնիկական աշխատանքային խումբ, որը պատասխանատու կլինի Ծրագրի համակարգման և Ծրագրի իրականացման դյուրացման համար, և ոչ ուշ, քան Ուժի մեջ մտնելու ամսաթվից մեկ (1) ամիս հետո, եթե Բանկի և Հայաստանի Հանրապետության միջև այլ համաձայնություն ձեռք չի բերվել, Կառավարության որոշմամբ նշանակել Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ (ԱԾԻԳ) և Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում վարել դրա աշխատանքը, որը պատասխանատու կլինի Ծրագրի իրականացման համար, կունենա համապատասխան անձնակազմ ու ռեսուրսներ և կգործի Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքի համաձայն, պատասխանատու կլինի նաև Ծրագրի գործողությունների ամենօրյա համակարգումն իրականացնելու համար (Հավելված 2, բաժին I, կետ «Ա», ենթակետ 1),

- ապահովել, որ ոչ մի Մասնակից տարածաշրջան իրավասու չլինի Վարկային միջոցներից ֆինանսավորվելու համար, քանի դեռ և եթե Հայաստանի Հանրապետությունը Առողջապահության նախարարության միջոցով յուրաքանչյուր Մասնակից տարածաշրջանի հետ չի կնքել Բանկի համար ընդունելի՝ Մասնակցության մասին համաձայնագիր՝ Հայաստանի Հանրապետությունում Ծրագիրն իրականացնելու պարտավորությունը կատարելու նպատակով Մասնակից տարածաշրջանի համար Ծրագրով նախատեսված հատուկ պահանջներ սահմանելու համար (Հավելված 2, բաժին I, կետ «Ա», ենթակետ 2),

- Առողջապահության նախարարության միջոցով ընդունել Բանկի համար ընդունելի Ծրագրի գործառնությունների ձեռնարկը

և այնուհետև ապահովել, որ Ծրագիրն իրականացվի համաձայն այդ ձեռնարկի, որով սահմանվում են Ծրագրի իրականացման համար ինստիտուցիոնալ, վարչարարական, ֆինանսական, տեխնիկական և գործառնական ուղեցույցները և ընթացակարգերը, ինչպես նաև համաձայնեցված Ծրագրի գործողությունների պլանը, այդ թվում, *inter alia*՝ Ծրագրի գործողությունների և մանրամասն Ծրագրային ծախսերի սահմանումը, Ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի նվազեցման միջոցառումներն ու փաստաթղթերը, Ծրագրի համար կիրառելի ֆինանսական կառավարման, աուդիտի և գնումների արձանագրություններն ու չափորոշիչները, Հակակոռուպցիոն ուղեցույցներին համապատասխանելու արձանագրությունները, Ստուգման արձանագրությունները, որոնք համաձայնեցվել են Բանկի հետ՝ մասհանման հետ կապված ցուցանիշի (այսուհետ՝ ՄՀԿՑ) և դրանց համապատասխան մասհանումների հետ կապված արդյունքների (այսուհետ՝ ՄՀԿԱ) ձեռքբերումը գնահատելու համար, Ծրագրի բողոքարկման մեխանիզմը, ինչպես նաև դրա հետ կապված արձանագրությունները և ընթացակարգերը՝ բողոքների քննարկման և զեկուցման համար, մշտադիտարկման և գնահատման պահանջները, այդ թվում՝ Ծրագրի ստուգման համակարգերը, և ցանկացած այլ տեխնիկական և կազմակերպչական պայմանավորվածություն և ընթացակարգ, որոնք կպահանջվեն Ծրագրի համար (Հավելված 2, բաժին I, կետ «Բ», ենթակետ 1),

- զգալիորեն և (կամ) էականորեն չփոփոխել, չվերանայել, չհրաժարվել, չեղյալ չհամարել կամ չկասեցնել Ծրագրի գործառնությունների ձեռնարկի որևէ դրույթ՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության (Հավելված 2, բաժին I, կետ «Բ», ենթակետ 2),

- ոչ ուշ, քան Ուժի մեջ մտնելու ամսաթվից վեց (6) ամիս հետո նշանակել անկախ ստուգող մարմին և այնուհետև Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում վարել դրա աշխատանքը, որը փորձառու է, որակավորված և գործում է Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքի համաձայն (Անկախ ստուգող մարմին), որպեսզի այն իրականացնի ՄՀԿՑ-ների/ՄՀԿԱ-ների ձեռքբերման ստուգումը Համաձայնագրի հավելված 2-ի IV Ա.2 բաժնի աղյուսակում սահմանված կարգով, և առաջարկի համապատասխան հատկացումներ, որոնք պետք է կատարվեն համաձայն այդ բաժնի, և ապահովի, որ Անկախ ստուգող մարմինը ՄՀԿՑ-ների/ՄՀԿԱ-ների ստուգման գործընթաց(ներ)ն իրականացնի Ստուգման արձանագրություններին

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

համապատասխան, և ժամանակին ու Բանկին բավարարող ձևով ու բովանդակությամբ համապատասխան ստուգման հաշվետվությունները ներկայացնի Բանկ (Հավելված 2, բաժին I, կետ «Գ», ենթակետ 1),

- Ծրագիրն իրականացնելու նպատակով իրականացնել Բանկի հետ համաձայնեցված Ծրագրի գործողությունների պլանը՝ համաձայն նշված Ծրագրի գործողությունների պլանով սահմանված ժամանակացույցի, ինչպես նաև Բանկին բավարարող ձևով ու բովանդակությամբ, վարել քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան Բանկին բավարարող ձևով և բովանդակությամբ վերահսկելու և գնահատելու նշված Ծրագրի գործողությունների պլանի իրականացումը (Հավելված 2, բաժին I, կետ «Դ», ենթակետ 1),

- առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության՝ զգալիորեն և (կամ) էականորեն չփոփոխել, չվերանայել, չհրաժարվել, չեղյալ չհամարել կամ չկասեցնել Ծրագրի գործողությունների պլանի որևէ դրույթ (Հավելված 2, բաժին I, կետ «Դ», ենթակետ 2),

- ապահովել, որ Ծրագրի շրջանակներում բացառվի ցանկացած գործողություն, որը, Բանկի կարծիքով, կարող է ունենալ զգայուն, բազմազան կամ աննախադեպ էական բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի և (կամ) ազդակիր մարդկանց վրա (Հավելված 2, բաժին II, կետ «1»),

- ապահովել, որ Ծրագրի շրջանակներում բացառվի ցանկացած գործողություն, որը կներառի աշխատանքների գնումներ, որոնց արժեքը գնահատվում է յոթանասունհինգ միլիոն դոլարին (75,000,000 դոլար) համարժեք գումար կամ ավելի՝ մեկ պայմանագրի համար, կներառի ապրանքների գնումներ, որոնց արժեքը գնահատվում է հիսուն միլիոն դոլարին (50,000,000 դոլար) համարժեք գումար կամ ավելի՝ մեկ պայմանագրի համար, կներառի ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ, որոնց արժեքը գնահատվում է հիսուն միլիոն դոլարին (50,000,000 ԱՄՆ դոլար) համարժեք գումար կամ ավելի՝ մեկ պայմանագրի համար, կամ կներառի խորհրդատուների ծառայությունների գնումներ, որոնց արժեքը գնահատվում է քսան միլիոն դոլարին (20,000,000) համարժեք գումար կամ ավելի՝ մեկ պայմանագրի համար (Հավելված 2, բաժին II, կետ «2»),

- Ծրագրի յուրաքանչյուր հաշվետվություն Բանկին տրամադրել յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան մեկ ամիս հետո՝ ներկայացնելով օրացուցային կիսամյակը (Հավելված 2, բաժին III),

- անկախ Համաձայնագրի 2-րդ Հավելվածի IV Բաժնի «Ա» մասի դրույթներից՝ որևէ առհասարակ չկատարել նախքան Ստորագրման ամսաթիվը ձեռք բերված ՄՀԿԱ-ների հիման վրա, բացառությամբ, որ մինչև չորս միլիոն վեց հարյուր քառասուն հազար եվրոն (4,640,000 եվրո) չգերազանցող ընդհանուր գումարի առհասարակները կարող են կատարվել մինչև այս ամսաթիվը, սակայն 2023 թվականի դեկտեմբերի 7-ին կամ դրանից հետո ձեռք բերված 6.1-ի ՄՀԿԱ-ների հիման վրա (Հավելված 2, բաժին IV, մաս «Բ», կետ 1, ենթակետ «ա»),

- անկախ Համաձայնագրի 2-րդ Հավելվածի IV Բաժնի «Ա» մասի դրույթներից՝ որևէ առհասարակ չկատարել որևէ ՄՀԿԱ-ի մասով, քանի դեռ և եթե Հայաստանի Հանրապետությունը Բանկին չի ներկայացրել բավարար ապացույցներ առ այն, որ Համաձայնագրի 2-րդ Հավելվածի IV Բաժնի «Ա» մասի աղյուսակում նշված ՄՀԿԱ-ները ձեռք են բերվել (Հավելված 2, բաժին IV, մաս «Բ», կետ 1, ենթակետ «բ»):

6. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Սահմանադրական դատարանն իր նախկին որոշումներում (օր.՝ ՍԴՈ-1273, ՍԴՈ-1283, ՍԴՈ-1284, ՍԴՈ-1328 և այլն), այնպես էլ իր որոշումների կատարման վերաբերյալ նախորդ տարիների հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի հստակության, այդ միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին՝ նշելով, որ նման համաձայնագրերով նախատեսված ծրագրերի ընդհանուր բնույթը պահանջում է համաձայնագրերի կատարման նկատմամբ հստակ մշտադիտարկում, որը թույլ կտա խուսափել վարկային համաձայնագրերի իրագործման պրակտիկայում տեղ գտած թերություններից և բացթողումներից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթների հնարավոր խախտումներից: Սահմանադրական դատարանը, վերահաստատելով նաև 2020 թվականի հոկտեմբերի 2-ի ՍԴՈ-1548 որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումը, ևս մեկ անգամ շեշտադրում է վարկային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման կարևորությունը, ինչպես նաև այդ միջոցների նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրի պաշտոնական հայերեն թարգմանության և դրա

բնօրինակ տեքստերի միջև առկա են մի շարք թարգմանչական անհամապատասխանություններ ու անճշտություններ, որոնք թեև բովանդակային առումով խնդիր չեն հարուցում Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության բացահայտման տեսանկյունից, այդուհանդերձ, կարող են որոշակի խնդիրներ առաջ բերել Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում:

Սահմանադրական դատարանը նաև փաստում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները վերաբերելի են Ազգային ժողովի ու Կառավարության լիազորություններին, և Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության հարցը գտնվում է հիշյալ մարմինների լիազորությունների տիրույթում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

26 նոյեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1760

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԾԱԾԿՈՒՅԹԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1760
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց դատական նիստում բանավոր ընթացակարգով քննության առնելով «2024 թվականի հուլիսի 25-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագրում (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի նոյեմբերի 28-ին ընդունել է ՍԴՈ-1760 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), որով Համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում եմ Որոշման վերաբերյալ հատուկ կարծիք (չհամընկնող)՝ ներքոհիշյալ հիմնավորմամբ:

Սույն գործի նախապատմությունը հետևյալն է.

Սահմանադրական դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴԱՈ-150 աշխատակարգային որոշմամբ Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործն ընդունվել է քննության, գործով զեկուցող է նշանակվել Սահմանադրական դատարանի դատավոր Ս. Սաֆարյանը: Գործով զեկուցողի միջնորդությամբ նույն Որոշմամբ որոշվել է գործի հանգամանքների առավել արդյունավետ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

բացահայտման նպատակով գործի դատաքննությունն իրականացնել բանավոր ընթացակարգով: Ձեկուցող դատավորի միջնորդության հիմքում ընկած է նաև սույն գործով դիմող Կառավարության ներկայացուցչին լսելու անհրաժեշտությունը:

2024 թվականի նոյեմբերի 19-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է Կառավարության ներկայացուցչի հարգելի ճանաչված բացակայության հիմքով:

2024 թվականի նոյեմբերի 26-ին դատական նիստը կայացել է, նիստին մասնակցել է Կառավարության ներկայացուցիչ՝ Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լ. Նանուշյանը:

Նույն օրը սույն գործով դռնփակ խորհրդակցության ժամանակ Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի աշխատակարգի 50-րդ կետի պահանջները, ընդունել է ՍԴԱՈ-183 աշխատակարգային որոշումը՝ գործով զեկուցողին փոխարինելու վերաբերյալ:

Սահմանադրաիրավական վեճն ունի այն բովանդակությունը, թե արդյոք Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներին:

1. Նախ՝ հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված՝ միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը որոշելու՝ Սահմանադրական դատարանի լիազորության առարկայական սահմաններին՝ անհրաժեշտ համարելով որոշակիացնել Սահմանադրության 13-րդ հոդվածով նախատեսված՝ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության գնահատման չափորոշիչների և Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը մշակելու և իրականացնելու՝ Կառավարության լիազորության հարաբերակցության շրջանակը:

Սահմանադրության 13-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Վերոգրյալից հետևում է, որ Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրվել են Հայաստանի Հանրապետության իրավասու պետական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

մարմինների գործունեության հետևյալ հիմնարար սկզբունքները՝ արտաքին քաղաքականության բարիդրացիականություն, այլ պետությունների հետ հարաբերությունների փոխշահավետություն և միջազգային իրավունքի նորմերով կանոնակարգվածություն:

Սահմանադրության 1-ին անփոփոխ հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:*

Սահմանադրության 13-րդ և 1-ին հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է նաև, որ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը՝ որպես սահմանադրաիրավական ինստիտուտ, իրավասու պետական մարմինների կողմից իրացվում է Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ պետության բնույթը կանխորոշող սկզբունքների հիման վրա և միջպետական հարաբերություններում այդ սկզբունքների հետևողական կենսագործման նպատակով:

Արտաքին քաղաքականության ոլորտում իրավունքի գերակայությունն ընդգծելու համար Սահմանադիրը կանխորոշել է արտաքին քաղաքականության ուղենշվածությունը միջազգային իրավունքի նորմերով, ինչը մի կողմից՝ նշանակում է Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների միջև հարաբերությունների կառուցում փոխադարձ իրավական պարտավորությունների հիման վրա, իսկ մյուս կողմից՝ միջազգային պայմանագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվելիք պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրության 13-րդ հոդվածով սահմանված սկզբունքներին:

Միևնույն ժամանակ, արտաքին քաղաքականության մշակումն ու իրականացումը սահմանադրորեն Կառավարության լիազորությունն է, ինչը ենթադրում է պետությունների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման, զարգացման, համագործակցության ոլորտների ընտրության, արտաքին քաղաքականության գերակայությունների սահմանման, միջազգային կազմակերպություններին անդամակցության քաղաքական նպատակահարմարության և բովանդակային ուղղությունների որոշման՝ Կառավարության բացառիկ իրավասություն:

Վերոնշյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության քննությունը պետք է սահմանափակվի հետևյալ

հարցադրմանը համահավաք պատասխան տալով. *արդյոք տվյալ միջազգային պայմանագրով սահմանված պարտավորություններն **ատերևույթ** համապատասխանում են բարիդրացիականության և փոխշահավետության սահմանադրական սկզբունքներին:*

Անդրադառնալով Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության չափանիշների կիրառման առանձնահատկություններին՝ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվելիք միջազգային-իրավական պարտավորությունների սահմանադրաչափության նշյալ չափանիշներից ֆինանսական բնույթի միջազգային պայմանագրերի դեպքում, ինչպիսին է Համաձայնագիրը, առարկայական նշանակություն ունի **փոխշահավետության** սահմանադրական սկզբունքը: Ըստ այդմ՝ ֆինանսական (գույքային) պարտավորությունների սահմանադրաչափությունը գնահատելիս անհրաժեշտ է պարզել՝ արդյոք ատերևույթ ապահովված են հետևյալ պահանջները՝ **ներգրավվող փոխառու միջոցների ստացման նպատակի իրավաչափությունը, վարկի տրամադրման պայմանների որոշակիությունն ու շահավետությունը, վարկային միջոցների ծախսման ուղղությունների որոշակիությունն ու հստակությունը:**

2. Վերոնշյալի լույսի ներքո հարկ են համարում անդրադառնալ Համաձայնագրի՝ որպես նորմատիվ-իրավական ակտի տեքստի համապատասխանությանն իրավաբանական տեխնիկայի առաջնային կանոններին, որոնք ամրագրված են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում (այսուհետ նաև՝ Օրենք): Մասնավորապես՝ **Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝**

«1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրաձայնությամբ հասկացություններ կամ տերմիններ:

2. Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

3. Եթե նորմատիվ իրավական ակտում օգտագործվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, կամ այլ նորմատիվ ակտով տրված է այդ հասկացությունների կամ տերմինների այլ սահմանում, ապա տվյալ ակտով տրվում են այդ ակտի էությունից բխող

դրանց սահմանումները: Սահմանումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը: (...):»:

Ի հակադրություն Օրենքով նախատեսված՝ իրավաբանական տեխնիկայի նշյալ կանոնների՝ Համաձայնագրում մեծ թիվ են կազմում բազմիմաստ և անձանոթ (ընդհանուր կիրառություն չունեցող) եզրույթներ և սահմանումներ: Օրինակ՝ Համաձայնագրի 2.02-րդ կետում օգտագործված է «առհանել» եզրույթը, թերևս վարկառուին, այսինքն՝ Հայաստանի Հանրապետությանը, վարկային միջոցներն օգտագործելու, ներառյալ կանխիկացնելու իմաստով: Մինչդեռ նման եզրույթը ֆինանսական փաստաթղթերում լայն կիրառություն չունի և որոշակիորեն չի արտահայտում Համաձայնագրից բխող և իրեն վերագրվող իմաստը: Ընդ որում՝ նման բազմիմաստ և խրթին ձևակերպումները Համաձայնագրում բավական մեծ թիվ են կազմում՝ և խախտելով **Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի** պահանջը, ըստ որի՝ *արգելվում է նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ:*

Այսպես՝ Համաձայնագրում բազմիցս գործածվել են բառերի և եզրույթների հապավումներ, ինչպես օրինակ՝ ՄՀԿԱ (մասհանումների հետ կապված արդյունք), ՄՀԿՑ (մասհանումների հետ կապված ցուցանիշներ), ԱՆ (Առողջապահության նախարարություն), ՈՎՀ (ոչ վարակիչ հիվանդություններ), ԱՊԳԿ (անկախ պետական գնումների կազմակերպություն), ՖՆ (Ֆինանսների նախարարություն), ՍՄՀԿԾ (սեփական միջոցների հաշվին կատարվող ծախս), ՀՄԴ (հիվանդությունների միջազգային դասակարգիչ), ԱՀԱ (առողջության համապարփակ ապահովագրություն), ԱԲՕ (առաջնային բժշկական օգնություն), ԱԲՕԿ (առաջնային բժշկական օգնության կենտրոն), որոնք դժվարացնում են նաև նյութն ուսումնասիրելու և հասկանալու գործընթացները: Համաձայնագրով ոչ միայն չի պահպանվել Օրենքով սահմանված հապավումների արգելքի պահանջը, այլև հապավումների կիրառումը բացասաբար է ազդել Համաձայնագրի պայմանների նորմատիվ բովանդակության իրավաբանական ամրագրման որոշակիության և հստակության վրա:

Ավելին՝ Համաձայնագրում օգտագործվող եզրույթների և հապավումների բացատրությունը տրված է Համաձայնագրի հիմնական տեքստին հաջորդող առդիրում, ինչն իրավաբանական տեխնիկայի առումով խնդրահարույց է, քանզի, որպես կանոն, սահմանումների բացատրությունը տրվում է նորմատիվ իրավական ակտի սկզբնամասում:

ՍԱՀԱՆԱՆՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

3. Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության մասով հարկ եմ համարում ընդգծել, որ դրանց սահմանադրաչափության հիմնական չափանիշ եմ դիտարկում Սահմանադրության 13-րդ հոդվածով նախատեսված՝ արտաքին քաղաքականության փոխշահավետության սկզբունքը:

3.1. Ըստ այդմ՝ ուսումնասիրելով Համաձայնագիրը, դրան կից ներկայացված փաստաթղթերը և լսելով Կառավարության ներկայացուցիչ Լ.Նանուշյանի բացատրությունները՝ եկել եմ այն եզրահանգման, որ Համաձայնագրով սահմանված վարկավորման նպատակների, վարկավորման ենթակա միջոցառումների ծրագրի և վարկային միջոցների մասհանման համամասնությունների միջև արձանագրվել է ակնհայտ հակասություն, մասնավորապես, մասհանվող գումարների ծախսման ուղղությունների, ակնկալվող արդյունքների և ցուցանիշների վերաբերյալ ենթադրությունների և անորոշությունների մեծ միջակայք, որն առերևույթ բացառում է Համաձայնագրի պայմանների փոխշահավետության հատկանիշը:

Այսպես՝ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.01-ին մասին համապատասխան՝ նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 102,000,000 եվրո վարկ:

Համաձայնագրի 1-ին հավելվածում՝ որպես վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (այսուհետ նաև՝ Բանկ) կողմից վարկավորվող ծրագրի նպատակներ նշված են առաջնային բժշկական օգնության որակի և իրագործման բարելավումը, Հայաստանի Հանրապետության առողջապահական ծախսերի արդյունավետության բարձրացումը և առողջապահական ծառայություններից օգտվելու ֆինանսական խոչընդոտների նվազեցումը: Սույն նպատակները a priori իրավաչափ են և ընդհանուր առմամբ միտված են առողջապահության ոլորտում Հայաստանի Հանրապետության կարողունակության բարձրացմանը: Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ Համաձայնագրի նպատակն ինքնին չի կարող կանխորոշել ստանձնված պարտավորությունների սահմանադրականությունը՝ դրանց փոխշահավետության առումով, քանզի նպատակի գործնականացումը պայմանավորված է դրան հասնելու միջոցներով, որոնք կարող են պիտանի և անհրաժեշտ չլինել տվյալ նպատակին հասնելու համար, և արդյունքում չի հաղթահարվի պարտավորությունների առերևույթ փոխշահավետության սահմանադրական շեմը. նպատակի իրավաչափությունը բավարար չէ դրական եզրահանգումների համար, եթե բացակայում է նպատակ-միջոց-արդյունք կապի հիմնավորումը:

ՍԱՀԱՄԱՆԱՐԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

Մասնավորապես՝ Համաձայնագրի Հավելված 1-ի 4-րդ բաժնից պարզ չէ, թե ինչպես են ձևավորվել վարկային ընդհանուր գումարից կատարվող ոլորտային մասհանումները: Օրինակ՝ Առողջապահության նախարարության կողմից պետականորեն ֆինանսավորվող դեղամիջոցների համար մրցունակ գնագոյացման քաղաքականության ընդունման համար նախատեսվել է 2,320,000 եվրո գումար: Մի կողմից՝ որևէ կերպ չի պարզաբանված, թե Սահմանադրության 11-րդ հոդվածով հռչակված շուկայական տնտեսության պայմաններում պետությունն ինչ գործիքակազմով է ներազդելու դեղորայքի շուկայում գնագոյացման վրա՝ անգամ միայն պետության կողմից ֆինանսավորվող դեղամիջոցների մասով, իսկ մյուս կողմից՝ պարզ չէ, թե այդ քաղաքականությունը ֆինանսական ինչ բաղադրիչներ ունի, և կոնկրետ ինչ միջոցառումների համար է նախատեսված նշյալ գումարը: Կամ բուժքույրերի և ընտանեկան բժիշկների կոմպետենտության բարձրացման նպատակով աշխատանքային վերապատրաստման թարմացված ծրագրերի համար նախատեսվել է 2,320,000 եվրո գումար: Կրկին պարզ չէ ծրագրային միջոցառման ֆինանսական բաղադրիչը, և ավելին՝ Համաձայնագրի տվյալներից հնարավոր չէ որոշարկել՝ արդյոք ծրագրային միջոցառումների զգալի մասում ընդհանրապես առկա է ֆինանսական բաղադրիչ, թե՛ ոչ:

Պարզ չէ նաև, թե ինչպես են բաշխվելու վարկային միջոցները համապատասխան բուժհաստատությունների միջև և ինչ չափորոշիչներով:

Ընդհանուր առմամբ, Համաձայնագրի 4-րդ բաժնում տեղ գտած ծրագրային միջոցառումների ֆինանսավորման հոդվածներն ամբողջությամբ անորոշ են. պարզ չէ՝ ինչ հաշվարկի վրա են հիմնված վարկի մասհանումները, հստակ չէ պատճառահետևանքային կապը միջոցառումների և դրանց ֆինանսավորման միջև: Այլ կերպ՝ առերևույթ հիմնավորված չէ ծրագրային միջոցառումների ծախսատարությունը և ծախսարդյունավետությունը:

Համաձայնագրի 4-րդ բաժնում տեղ գտած ծրագրային միջոցառումների և Բանկի կողմից տրամադրվող վարկի մասհանումների ընդհանուր վերլուծությունից պարզ չէ նաև՝ ղրն է այն հավելյալ արժեքը, որի ստեղծմանն են ուղղված այդ միջոցառումները: Վերջիններիս զգալի մասն Առողջապահության նախարարության՝ որպես առողջապահության կառավարման հանրապետական գործադիր մարմնի իրավասությունից բխող ամենօրյա օպերատիվ գործառնություններն են, որոնց ծախ-

սագրումը յուրաքանչյուր տարի կատարվում է «Պետական բյուջեի մասին» օրենքի շրջանակում: Մասնավորապես՝ Առողջապահության նախարարության կանոնադրության 11-րդ կետի համաձայն՝ Առողջապահության նախարարության գործառույթներն են՝

- առողջապահության զարգացման քաղաքականության, պետական նպատակային ծրագրերի, բնակչության առողջության բարելավման, հիվանդությունների կանխարգելման և բուժման, աշխատանքի վայրում առողջության և անվտանգության պահպանման, հաշմանդամության և մահացության նվազեցմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացման դիտարկումը, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված պետական քաղաքականության և նպատակային ծրագրերի մշակումը և դրանց իրականացման դիտարկումը (3-րդ ենթակետ),

- պետական պատվերի շրջանակներում իրականացվող դեղերի, բժշկական նշանակության ապրանքների և ծառայությունների կենտրոնացված գնումների իրականացումը, գնումների դիմաց ֆինանսական միջոցների հատկացումը (10-րդ ենթակետ),

- առողջապահության ոլորտում կադրային քաղաքականության ծրագրերի մշակումն ու իրականացման նկատմամբ դիտարկումը (11-րդ ենթակետ),

- բարձրագույն, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական բժշկական կադրերի պատրաստման (պատրաստում, մասնագիտացում, վերամասնագիտացում), կատարելագործման, շարունակական մասնագիտական զարգացման, առկա կադրային ներուժի պահպանման, զարգացման և վերարտադրման, կադրերի արդյունավետ վերադասավորման ոլորտներում պետական քաղաքականության ծրագրերի մշակումն ու իրականացման դիտարկումը (12-րդ ենթակետ),

- դեղային պետական քաղաքականության ծրագրերի մշակումը և դրա իրականացման դիտարկումը (16-րդ ենթակետ) և այլն:

Առողջապահության նախարարության նշյալ գործառույթները տարբեր կերպ վերարտադրված են Համաձայնագրի 4-րդ բաժնում՝ որպես վարկային միջոցներով ֆինանսավորման ենթակա միջոցառումներ, ինչը կասկածի տակ է դնում Համաձայնագրում նշված նպատակներին հասնելու համար դրանց պիտանիությունը, անհրաժեշտությունը և, հետևապես՝ համարժեք արդյունքի ակնկալումը: Համաձայնագրի ֆինանսական բաղադրիչի և դրա գոյացման հարցում առկա անհստակությունն ավելանում է Համաձայնագրի 2-րդ հավելվածի 2-րդ

բաժնում տեղ գտած՝ «բացառված գործողությունների» սահմանամբ, որով նախատեսված են մի շարք միջոցառումների ֆինանսավորման առավելագույն սահմանաչափեր, սակայն հստակ չէ այդ միջոցառումների առարկայական բովանդակությունը:

Վերոնշյալի արդյունքում եզրահանգումն այն է, որ Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է վարկ, որի օգտագործման հստակ ուղղություններն ու կարգը Համաձայնագրում առերևույթ բավարար կերպով բացահայտված չեն:

Ընդհանրապես, Համաձայնագրի 4-րդ բաժնի վերլուծությունը հիմք է տալիս առաջ քաշել այն իրավաչափ ենթադրությունը, որ Համաձայնագիրը միտված է բյուջետային կայունության ապահովմանը, այսինքն՝ Առողջապահության նախարարության ամենօրյա գործունեության բյուջետային ֆինանսավորման կարիքներին, ինչն արմատապես փոխում է Համաձայնագրի նպատակային նշանակությունը, որը Համաձայնագրի 1-ին հավելվածում, ինչպես վերը նշվեց, սահմանված է այլ կերպ:

Բացի ծախսային բազմաթիվ ուղղությունների անորոշությունից, Համաձայնագրում առկա են որոշակի, սակայն փոխշահավետության առումով խնդրահարույց ծախսային ուղղություններ: Մասնավորապես՝ Համաձայնագրի ծախսագրվող միջոցառումների շարքում նշված է անկախ պետական գնումների կազմակերպության և ծրագրի իրականացման գրասենյակի ստեղծումը (Համաձայնագրի 2-րդ հավելված, 1-ին բաժին, «Ա» մաս, «գ» կետ, Համաձայնագրի առդիր, 8-րդ կետ): Ըստ էության՝ վարկային միջոցների մի մասը փաստացի ուղղվելու է ծրագրային միջոցառումների հետ չկապված վարչական ծախսերի (ժամանակավոր աշխատատեղերի ստեղծում, ենթակառուցվածքների ձեռք բերում և այլն): Ավելին՝ Հայաստանի Հանրապետության գնումների մասին օրենսդրությամբ, մասնավորապես, «Գնումների մասին» օրենքով և Կառավարության՝ 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ և դրանով հաստատված՝ Գնումների գործընթացի կազմակերպման կարգով, սահմանված է պետական գնումների ինստիտուցիոնալ համակարգ, ուստի՝ պարզորոշ չէ, թե ո՞րն է Համաձայնագրի հետ կապված պետական գնումների կատարման համար նոր մարմին ստեղծելու և այդ ուղղությամբ վարկային միջոցներ ծախսելու անհրաժեշտությունը: Ավելին՝ Համաձայնագրի առդիրի 8-րդ կետի համաձայն՝ գնումների նշյալ անկախ մարմնի գործունեության նպատակն առողջության համապարփակ ապահովագրության ծրագրի ղեկավարումն է, որը նախատեսված է Համաձայնագրի 4-րդ բաժնում:

ՍԱՀԱՄԱՆԱՌՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

Մինչդեռ, 2025 թվականի պետական բյուջեում առողջության համապարփակ ապահովագրության համար ծախս՝ որպես այդպիսին, նախատեսված չէ: Ստացվում է, որ Համաձայնագրով նախատեսված վարկային միջոցների ուղղություններից մեկն արդեն իսկ չեղարկվել է, սակայն ներգրավվող վարկային միջոցների չափը որոշելիս այն հաշվի է առնվել՝ վերջնարդյունքում մեծացնելով վարկի գումարի չափը, և ստեղծվում է մի մարմին, որի նշանակությունը, հաշվի առնելով առողջության համապարփակ ապահովագրության ծրագրի անորոշ ժամանակով հետաձգումը, արդեն իսկ բացակայում է:

Նույնը վերաբերում է նաև Ծրագրի իրականացման գրասենյակի ստեղծմանը: Մասնավորապես՝ Համաձայնագրով վարկային միջոցներով ֆինանսավորվող Ծրագրի իրականացման պատասխանատուն Առողջապահության նախարարությունն է (Հավելված 2, բաժին 1, մաս «Բ» կետ 1, ենթակետեր «ա-ը»), որն օրենսդրորեն ունի անհրաժեշտ իրավասություն իր կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումներով ապահովել Համաձայնագրով նախատեսված ծրագրային միջոցառումների իրականացումը: Փոխարենը՝ ծրագրի իրականացման գրասենյակի ստեղծմամբ վարկային միջոցների մի մասն ուղղվելու է այդ գրասենյակի աշխատակազմի պահման վարչական ծախսերին, գրասենյակի պահպանմանն ուղղված վարչական և կապիտալ ծախսերին այն դեպքում, երբ Ծրագրի իրականացման գրասենյակի գործառնությունը կրկնորդելու են Առողջապահության նախարարության օրենսդրական գործառնությունները, ինչն իմաստազուրկ և չհիմնավորված ծախսատար է դարձնում դրա ստեղծումը:

3.2. Խնդրահարույց են նաև Համաձայնագրով նախատեսված բուն վարկային պայմանները: Մասնավորապես՝ Համաձայնագրի 2.02-րդ կետի համաձայն՝ վարկային հաշվից բոլոր առհանումները Բանկի կողմից ի պահ են հանձնվում Հայաստանի Հանրապետության կողմից սահմանված և Բանկի համար ընդունելի հաշվին: Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությունը և, մասնավորապես, «Բյուջետային համակարգի մասին» օրենքը սահմանում են հանրային ֆինանսների հետ կապված բանկային գործառնությունների իրականացման և հաշվի սպասարկման կարգը, ինչը Հայաստանի Հանրապետության ֆինանսական ինքնիշխանության բաղադրիչ է: Համաձայնագրի կողմերի շահերի հավասարակշռվածության ապահովման առումով պարզ չէ հանրային ֆինանսների շրջանառության ներպետական համակարգից բացառություն անելու

շարժառիթը: Հակառակը՝ Համաձայնագրում կողմերի իրավունքների և պարտավորությունների հավասարակշռված չլինելը՝ հոգուտ Բանկի, ոչ միայն խախտում է կողմերի հավասարության սկզբունքը, այլև անվերահսկելի է դարձնում ներգրավվող դրամական միջոցների շարժը և բաշխումը:

Կառավարության ներկայացուցիչը պարզաբանեց, որ գումարները փոխանցվելու են գանձապետական հաշվին, որի վերաբերյալ, սակայն, Համաձայնագրում նշում չկա: Փոխարենը, ինչպես հետևում է վերոնշյալից, վարկային միջոցների փոխանցման հաշվի նպատակահարմարության որոշման իրավունքը պատկանում է Բանկին:

Համաձայնագրի 2.05-րդ կետով սահմանված է ոչ թե հստակ արձանագրված, այլ լողացող տոկոսադրույք, ինչն անորոշության տարրեր է պարունակում վարկի վերադարձելիության կանխատեսման և գումարի նախատեսվող չափի առումներով:

4. Հարկ եմ համարում անդրադառնալ նաև Կառավարության ներսում տարբեր գերատեսչությունների հակակշռման և փոխգործակցության սահմանադրական հրամայականին, որն ուղղակի ազդեցություն ունի Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ արտաքին քաղաքականության մշակման և իրականացման՝ Կառավարության գործառույթի արդյունավետության վրա:

Սահմանադրության 146-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է:

Սահմանադրության 147-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից:

2. Նախարարությունների ցանկը և Կառավարության գործունեության կարգը Կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով: Փոխվարչապետների թիվը չի կարող գերազանցել երեքը, իսկ նախարարներինը՝ տասնույթը»:

Սահմանադրության վերոնշյալ դրույթներով, ըստ էության, սահմանվում է Կառավարության՝ որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմնի կոլեգիալ բնույթը, այսինքն՝ Կառավարության հավաքական իրավասությունը ձևավորվում է նրա կառուցվածքային հիմնական բաղադրիչների՝ նախարարների (նախարարությունների) իրավասությունից:

«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախարարությունը մշակում և իրականացնում է իրեն վերապահված գործունեության ոլորտում Կառավարության քաղաքականությունը:

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կառավարության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ նախարարությունները.

«(...)

2) առողջապահության նախարարությունը,

3) արդարադատության նախարարությունը,

(...)

12) ֆինանսների նախարարությունը»:

Առողջապահության նախարարության կանոնադրության 19-րդ կետի համաձայն՝ նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառնությունները՝ առողջապահության բնագավառում միջազգային պայմանագրերի նախագծերի մշակումը, այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ սահմանված կարգով համագործակցության իրականացումը:

«Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի (այսուհետ՝ նաև ՄՊՕ) 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը տրամադրում է եզրակացություն միջազգային պայմանագրի նախագծում, բազմակողմ միջազգային պայմանագրում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմերի, ինչպես նաև միջազգային պայմանագիրը վավերացման ենթակա դարձնող հիմքերի առկայության մասին:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը տրամադրում է եզրակացություն միջազգային պայմանագրի նախագծում, բազմակողմ միջազգային պայմանագրում Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին, այդ թվում՝ միջազգային պայմանագրով եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման հանգեցնող դրույթների և տվյալ տարվա համար Հայաստանի Հանրապետության Ազգային

ՍԱՀԱՄԱՆԱՐԿՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ 5(117)2024 ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ժողովի ընդունած «Պետական բյուջեի մասին» օրենքում չներառված պարտավորությունների մասին:

Վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-L որոշմամբ հաստատված՝ Ֆինանսների նախարարության կանոնադրության համաձայն՝

«11.Նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

(...)

13) միջազգային համագործակցության ոլորտում՝

ա. մակրոտնտեսական, հարկաբյուջեային ու պետական պարտքի քաղաքականությունների շրջանակում միջազգային ֆինանսական կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող վարկերի ու դրամաշնորհների ստացման համակարգումը, ինչպես նաև միջազգային ինտեգրացիոն կառույցների հետ համագործակցության ապահովումը,

բ. միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին եզրակացությունների տրամադրումը,

(...):»:

Առողջապահության, Արդարադատության և Ֆինանսների նախարարությունների՝ միջազգային համագործակցության ոլորտում ունեցած գործառույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ՝

- Առողջապահության նախարարությունը մշակում է առողջապահության ոլորտի միջազգային պայմանագրերի նախագծերը,

- առողջապահության ոլորտի միջազգային վարկային պայմանագրերի պարագայում Առողջապահության նախարարությունը գործում է Ֆինանսների նախարարության հետ համագործակցաբար. վերջինս իրականացնում է նման բնույթի միջազգային պայմանագրերի մասով բանակցությունների վարման և միջազգային պայմանագրի կնքման գործընթացի մասնագիտական (ֆինանսական) համակարգումը՝ այդ թվում տրամադրում է միջազգային վարկային պայմանագրով Հայաստանի Հանրապետության համար ծագող ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ եզրակացություն,

- Արդարադատության նախարարությունը տրամադրում է եզրակացություն առ այն, թե արդյոք միջազգային պայմանագրի նախագծում առկա են օրենքին հակասող կամ օրենսդրական փոփոխություն պահանջող դրույթներ:

Ողջ վերոնշյալից բխում է, որ առողջապահության ոլորտի միջազգային վարկային պայմանագրերի բանակցման և կնքման գործընթացին մասնակցում են Առողջապահության, Ֆինանսների և Արդարադատության նախարարությունները՝ օրենսդրությամբ սահմանված իրենց ուրույն գործառույթներով: Ընդ որում՝ սույն հանգամանքն ինքնին նշանակում է, որ առողջապահության ոլորտում վարկային միջոցների ներգրավում նախատեսող միջազգային պայմանագրի կնքման գործընթացը պահանջում է նշյալ երեք պետական մարմինների սերտ համագործակցություն և փոխլրացում. նրանցից մեկի գործառույթը չի կարող լրացվել մյուսի կողմից, և գործընթացի՝ Հայաստանի Հանրապետության համար շահավետությունը կախված է նրանց ներդաշնակ աշխատանքից:

Համաձայնագրին կից ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև դատաքննության ընթացքում Կառավարության ներկայացուցչի ներկայացրած բացատրության համադրված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Համաձայնագրի կնքման գործընթացում Առողջապահության, Ֆինանսների և Արդարադատության նախարարությունների համագործակցությունն առերևույթ եղել է սահմանադրաիրավական պահանջների առումով խնդրահարույց: Մասնավորապես՝ Ֆինանսների նախարարության կողմից տրամադրված տեղեկանքում բացակայում է Համաձայնագրով նախատեսված վարկի տրամադրման պայմանների՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շահերի տեսանկյունից համակողմանի և խորքային վերլուծությունը, ինչն առերևույթ և փաստացի հնարավորություն չի տվել Առողջապահության նախարարությանը բանակցել և մշակել Հայաստանի Հանրապետության շահերի առումով հավասարակշռված միջազգային պայմանագրի նախագիծ: Այսպես՝ Ֆինանսների նախարարությունը չի անդրադարձել առողջության համապարփակ ապահովագրության համար Համաձայնագրով ներգրավվող վարկային միջոցներին այն դեպքում, երբ առողջության համապարփակ ապահովագրության ներդրումն անորոշ ժամանակով հետաձգվել է և, համապատասխանաբար, արտահայտված չէ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենքի նախագծում:

Իր հերթին, Արդարադատության նախարարությունն իր տեղեկանքում որևէ կերպ չի անդրադարձել Հայաստանի Հանրապետության գործող օրենքներին Համաձայնագրի հակասության և նոր օրենք ընդունելու անհրաժեշտության մասին: Խոսքը, օրինակ՝ վերաբերում է գնումների մասին օրենսդրությամբ սահմանված գնումների համակարգին զուգահեռ

գնումների նոր մարմնի ստեղծմանը, առողջության համապարփակ ապահովագրության մասին օրենքի ընդունման անհրաժեշտությանը և այլն: Ավելին՝ տեղեկանքում Համաձայնագրի իրավական վերլուծությունը, ըստ էության, բացակայում է:

Հանրագումարում կարելի է եզրահանգել, որ Համաձայնագրի բանակցման և կնքման գործընթացում իրավասու նախարարությունների փոխգործակցությունը եղել է անբավարար:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Համաձայնագրում ամրագրված պարտավորություններն առերևույթ չեն համապատասխանում Սահմանադրության 13-րդ հոդվածով սահմանված՝ փոխշահավետության սկզբունքին, Հայաստանի Հանրապետության վրա դնում են ֆինանսական պարտավորություններ՝ առանց Հայաստանի Հանրապետության համար հանդիպական օգուտի: Հետևապես՝ գտնում եմ, որ Սահմանադրական դատարանը Համաձայնագրում ամրագրված պարտավորությունները պետք է ճանաչեր Սահմանադրությանը հակասող:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ**

Ս. ՍԱՖԱՐՅԱՆ

2 դեկտեմբերի 2024 թվականի

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1760 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴՈ-1760 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴՈ-1760 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Սույն հատուկ կարծիքի շրջանակում նախևառաջ քննարկման առարկա կդարձնեմ քննարկվող միջազգային պայմանագրի սահմանադրականության հարցը՝ բովանդակային տեսանկյունից, այնուհետև նաև՝ սույն գործի հարուցման հիմք հանդիսացած դիմումը պատշաճ ներկայացված չլինելու հարցի տեսանկյունից:

ԲԱԺԻՆ I

Սահմանադրությամբ, ինչպես նաև «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով նախատեսված են Հայաստանի Հանրապետության կողմից կնքված միջազգային պայմանագրերի պարտադիր ճանաչելուն ուղղված երկու ներպետական ընթացակարգ՝ միջազգային պայմանագրերի հաստատման կամ վավերացման եղանակով: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության ստորագրած կամ միանալու ենթակա միջազգային պայմանագրի իրավաբանական ուժ ստանալը, ըստ այդմ՝ իրավական հետևանքների առաջացումը, կախվածության մեջ է դրվում վերը նշված երկու ընթացակարգերից¹: Միաժամանակ թե՛ Սահմանադրությամբ², թե՛ «Միջազգային պայմանագրերի մա-

¹ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մաս:

² Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մաս:

սին» օրենքով³ որոշակիացվել են միջազգային պայմանագրերի առանձին տեսակներ, որոնք իրավաբանական ուժ կարող են ստանալ բացառապես վավերացման ընթացակարգով. այդպիսիք են համարվում այն միջազգային պայմանագրերը՝

1) որոնք վերաբերում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պարտականություններին,

2) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ,

3) որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը,

4) որոնք Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական կամ գույքային պարտավորություններ,

5) որոնց կիրառումը նախատեսում է օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում, կամ որոնք պարունակում են օրենքին հակասող նորմեր,

6) որոնք ուղղակիորեն նախատեսում են վավերացում,

7) որոնք պարունակում են օրենքի կարգավորմանը ենթակա հարցեր:

Միաժամանակ միջազգային պայմանագրերի իրավաբանական ուժ ստանալու վերը նշված՝ վավերացման ընթացակարգի առնչությամբ Սահմանադրությունը Սահմանադրական դատարանին օժտել է այնպիսի լիազորությամբ, ինչպիսին է՝ մինչև միջազգային պայմանագրերի վավերացումը՝ դրանցում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը ստուգելը⁴: Նշված լիազորության առկայությունը սահմանադրական նախնական վերահսկողության մոդելի դրսևորումն է⁵: Մասնավորապես՝ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով նշվել է, որ նախքան միջազգային պայմանագրի վավերացման (դրան միանալու) մասին օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը ներկայացնելը Կառավարությունը, Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, դիմում է Սահմանադրական դատարան՝ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով⁶:

Ամփոփելով վերոնշյալ իրավակարգավորումները՝ հարկ է նշել, որ միջազգային պայմանագիրն իր պարտադիրությունը դրսևորում

³ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մաս:

⁴ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ:

⁵ Այս լիազորությունն առավել մանրամասն կարգավորված է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 74-րդ հոդվածում:

⁶ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մաս:

է ուժի մեջ մտնելու պահից⁷, որն էլ արտահայտվում է միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման եղանակով: Ընդ որում, Սահմանադրությամբ միջազգային պայմանագրերի վավերացումը ներառվել է Ազգային ժողովի լիազորությունների շարքում: Հատկանշական է, որ վավերացում պահանջող միջազգային պայմանագրերի առնչությամբ նախատեսվել է առանձնահատկություն, մասնավորապես՝ թե՛ Սահմանադրությամբ և թե՛ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով սահմանվել են կոնկրետ նախապայմաններ, որոնց առկայության պարագայում միայն միջազգային պայմանագրերը պետք է անցնեն վավերացման ընթացակարգով: Ավելին՝ նշված միջազգային պայմանագրերի առնչությամբ սահմանվել է պարտադիր փուլ՝ սահմանադրական նախնական վերահսկողության կառուցակարգի տեսքով: Ընդ որում Սահմանադրական դատարանի կողմից նման վերահսկողական գործառույթի իրականացումը կազմում է սահմանադրական արդարադատության բովանդակության բաղկացուցիչ մասը: Ըստ այդմ՝ վերոնշյալ նախապայմանները չպարունակող միջազգային պայմանագրերը պետք է անցնեն հաստատման ընթացակարգով, որն էլ հանդիսանում է Հանրապետության Նախագահի լիազորությունը:

Այսպիսով, վերոնշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ թե՛ սահմանադրի և թե՛ օրենսդրի կողմից նախատեսվել է սահմանադրական նախնական վերահսկողության պարտադիր ընթացակարգ բացառապես վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի դեպքում: Սահմանադիրը, ելնելով ֆինանսական կամ գույքային պարտավորություններ նախատեսող միջազգային պայմանագրերի նշանակությունից, դրանք դիտարկել է որպես նախնական սահմանադրական վերահսկողության օբյեկտ: Հիմք ընդունելով միջազգային պայմանագրերի առնչությամբ նախնական սահմանադրական վերահսկողության կառուցակարգի նշանակությունն ու կարևորությունը՝ գտնում եմ, որ սահմանադրի կողմից ֆինանսական կամ գույքային պարտավորություններ նախատեսող միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու համար վավերացման ընթացակարգի նախատեսումն ինքնանպատակ չէ. այն ուղղված է բովանդակային առումով միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունների սահմանադրականության գնահատմանը

⁷ 2015 թվականի փետրվարի 27-ի դրությամբ գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մաս և ներկա դրությամբ գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մաս:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

ՍԱՀԱՄԱՆՈՐԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

և դրանով իսկ Սահմանադրության գերակայության ապահովմանը՝ նկատի ունենալով, որ միջազգային պայմանագրերը վավերացման ընթացակարգն անցնելուց հետո դառնում են Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Բացի այդ, այս ընթացակարգի նախատեսումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Սահմանադրական դատարանը սահմանադրական նախնական վերահսկողության միջոցով պետք է գնահատման առարկա դարձնի նշված պայմանագրերով ամրագրված՝ ֆինանսական կամ գույքային պարտավորությունների նպատակահարմարությունը սահմանադրականության տեսանկյունից: Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում Սահմանադրական դատարանը պետք է ոչ միայն բացահայտի միջազգային պայմանագրերով ամրագրված՝ ֆինանսական կամ գույքային պարտավորությունների նպատակը, այլ նաև գնահատի այդ պարտավորություններից բխող նպատակի համապատասխանությունը Սահմանադրությանը: Հետևաբար Սահմանադրական դատարանի կողմից միջազգային պայմանագրերի առնչությամբ սահմանադրական նախնական վերահսկողության լիազորությունը լիարժեքորեն իրացված կարելի է համարել այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը միջազգային պայմանագրերով ամրագրված՝ ֆինանսական կամ գույքային պարտավորությունների նպատակը բացահայտելիս կանդադառնա նաև այդ նպատակների սահմանադրականության հարցին: Հակառակ պարագայում Սահմանադրական դատարանի՝ միջազգային պայմանագրերի առնչությամբ սահմանադրական նախնական վերահսկողության լիազորությունը կիմաստազրկվի՝ վերածվելով ֆիկտիվ բնույթ կրող լիազորության: Բացի այդ, առանց միջազգային պայմանագրերով ամրագրված՝ ֆինանսական կամ գույքային պարտավորությունների նպատակի սահմանադրականությունը գնահատելու՝ անհնար է պատկերացնել իրավիճակ, երբ նշված պայմանագրով ամրագրված պարտավորություններն ինքնին կհանգեցնեն Սահմանադրության որևէ կոնկրետ նորմի հետ անհամապատասխանելիության, այն դեպքում, երբ նման միջազգային պայմանագրերը որպես կանոն սահմանում են վարկի չափ, վարկի տրամադրման ժամկետ, վարկի օգտագործման համար հաշվարկվող տոկոսներ և վարկավորման նպատակ (այդ թվում նաև՝ վարկի օգտագործման ուղղությունները), ինչը ևս վկայում է այն մասին, որ սահմանադրի կողմից նշված միջազգային պայմանագրերի առնչությամբ նախնական սահմանադրական վերահսկողության կառուցակարգերը պետք չէ ենթարկել նեղ մեկնաբանության: Ուստի

գտնում են, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վավերացման ենթակա միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը պարտավոր է բովանդակային առումով գնահատման առարկա դարձնել համապատասխան միջազգային պայմանագրով ամրագրված բոլոր պարտավորությունները, մասնավորապես՝ թե որքանով են այդ պարտավորությունները բխում դրա սահմանադրական նպատակից և որքանով են այդպիսի պարտավորություններն ի զորու ապահովելու այդ նպատակի կենսագործումը: Այլ կերպ ասած, Սահմանադրական դատարանի կողմից միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրությամբ ամրագրված իր սահմանադրական առաքելության իրականացումը կհամարվի ապահովված միայն վերը նշված հանգամանքները գնահատելու պարագայում:

Վերոնշյալի համատեքստում անդրադառնալով քննության առարկա գործով միջազգային պայմանագրի առնչությամբ Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշմանը՝ հարկ են համարում արձանագրել հետևյալը.

Այսպես, Սահմանադրական դատարանը 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴՈ-1760 որոշմամբ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող առավելապես այն պատճառաբանության հիման վրա, որ «(...) Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները վերաբերելի են Ազգային ժողովի ու Կառավարության լիազորություններին, և Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության հարցը գտնվում է հիշյալ մարմինների լիազորությունների տիրույթում»:

Իմ գնահատմամբ՝ վերոնշյալ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար նախևառաջ պետք է պարզվեր այն հանգամանքը, թե արդյո՞ք քննարկման առարկա միջազգային պայմանագրից բխող պարտավորությունների նպատակը սահմանադրականության տեսանկյունից խնդիր չի հարուցում, որպիսի հարցի առնչությամբ պատասխան ստանալու պարագայում միայն Սահմանադրական դատարանը կարող էր գալ պայմանագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանելու

վերաբերյալ եզրահանգման: Մինչդեռ Սահմանադրական դատարանը, անհրաժեշտ չհամարելով բովանդակային առումով բացահայտելու սույն գործի քննության առիթ հանդիսացող միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունների նպատակի սահմանադրականությունը, այդ միջազգային պայմանագրի վավերացման նպատակահարմարության հարցի գնահատումը դիտարկել է որպես Ազգային ժողովի ու Կառավարության լիազորություն՝ անտեսելով սահմանադրի կողմից միջազգային պայմանագրի վավերացման առնչությամբ Սահմանադրական դատարանին վերապահված լիազորության էությունն ու նշանակությունը: Նման պայմաններում կարելի է ենթադրել, որ Սահմանադրական դատարանը միջազգային պայմանագրի վավերացման առնչությամբ նախնական սահմանադրական վերահսկողության լիազորությունը վերածել է լոկ ձևական լիազորության:

Բացի այդ, նաև հատկանշական է, որ նախքան Սահմանադրական դատարանի կողմից սույն գործի քննության առիթ հանդիսացող միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելը՝ Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասը, 2024 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴԱՌ-150 որոշմամբ որոշել է գործի դատաքննությունն իրականացնել բանավոր ընթացակարգով՝ հաշվի առնելով գործի հանգամանքների առավել արդյունավետ բացահայտման անհրաժեշտությունը:

Նշվածի կապակցությամբ հարկ եմ համարում արձանագրել, որ թեև գործի բանավոր քննության ընթացքում Սահմանադրական դատարանի կողմից Կառավարության ներկայացուցչին տրվել են հարցեր նշված միջազգային պայմանագրերով ամրագրված պարտավորություններից բխող նպատակների բացահայտման վերաբերյալ, այդուհանդերձ թե՛ վերջինիս կողմից ներկայացված բացատրություններով և թե՛ քննարկվող դիմումին կից ներկայացված փաստաթղթերով Կառավարությանը չի հաջողվել հիմնավորել նշված միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունների նպատակահարմարությունը, ինչը տվյալ դեպքում անտեսվել է Սահմանադրական դատարանի կողմից այնքանով, որքանով այդ հարցի պարզումը թողնվել է Ազգային ժողովի և Կառավարության լիազորությունների տիրույթում:

Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազ-

գային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագրի Հավելված 1-ում ընդհանրական կերպով սահմանվել է, որ ծրագրի նպատակներն են բարելավել առաջնային բժշկական օգնության որակը և իրագործումը, բարձրացնել վարկառուի առողջապահական ծախսերի արդյունավետությունը և նվազեցնել առողջապահական ծառայություններից օգտվելու ֆինանսական խոչընդոտները: Համաձայնագրի մյուս հավելվածներում և դրույթներում իրենց ամրագրումն են ստացել այն պարտավորությունները, որոնք ուղղված են հիշյալ նպատակների կենսագործմանը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով սույն հաբուկ կարծիքի 1-ին բաժնում տեղ գտած պատճառաբանությունները՝ գտնում եմ, որ սույն գործի քննության առիթ հանդիսացող միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանը պետք է բովանդակային առումով քննարկման առարկա դարձնե՞ր Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագրի Հավելված 1-ով սահմանված նպատակների համապատասխանությունը Սահմանադրության 1-ին հոդվածին, 85-րդ հոդվածի 1-ին մասին, 86-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 87-րդ հոդվածի 1-ին մասին: Ընդ որում, Սահմանադրական դատարանի հետևությունը պետք է հիմնված լինե՞ր հիշյալ համաձայնագրով ստանձնած բոլոր պարտավորությունների գնահատման վրա հետապնդվող նպատակին հասնելու հնարավորության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունների նպատակահարմարության տեսանկյունից:

Ամփոփելով վերը նշվածը՝ գտնում եմ, որ միայն վերոնշյալ պարագայում Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրությամբ ամրագրված առաքելությունը կարող էր համարվել լիարժեքորեն կատարված, որպիսի պարագայում և գտնում եմ, որ խնդրահարույց է քննարկվող միջազգային պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը:

ԲԱԺԻՆ II

Բացի վերոնշյալից, հարկ եմ համարում անդրադառնալ նաև սույն գործի հարուցման հիմք հանդիսացած դիմումի պատշաճ ներկայացված չլինելու հանգամանքին.

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությանը 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.
- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատաս-

խանութայինը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական

տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն

ՍԱՀԱՄԱՆԱԴՐԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին»

սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Սույն հատուկ կարծիքի 2-րդ բաժնի՝ վերոգրյալ դիրքորոշումների լույսի ներքո էլ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«6» դեկտեմբերի 2024թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ-ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 2»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 նոյեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Դ. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի,
Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղա-
կալ Է. Հակոբյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի
Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հարկա-
բյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման
ծրագիր - Ենթածրագիր 2» վարկային համաձայնագրում ամրագրված

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի նոյեմբերի 15-ի N 1797-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր – Ենթածրագիր 2» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի նոյեմբերի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ Բանկ) միջև «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր – Ենթածրագիր 2» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի նոյեմբերի 1-ին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաները խորացնելու և հարկաբյուջետային կառավարումն ու կայունությունն ուժեղացնելու նպատակով:

2. Համաձայնագրով նախատեսվում է Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 89,469,000 (ութսունինը միլիոն չորս հարյուր վաթսունինը հազար) եվրո՝ Համաձայնագրով նախատեսված բյուջետային աջակցության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար:

3. Համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում Համաձայնագրի 4 ներքոնշյալ հավելվածները.

- 1) Հավելված 1՝ Ծրագրի նկարագրությունը,
- 2) Հավելված 2՝ Մարման ժամանակացույցը,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

- 3) Հավելված 3՝ Վարկային միջոցների առհանումը,
- 4) Հավելված 4՝ Ծրագրի իրականացումը և այլ հարցեր:

4. Ֆինանսների նախարարության՝ Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանք-հիմնավորման համաձայն՝

1) Համաձայնագրի վավերացման նպատակահարմարությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի և Կառավարության՝ 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2323-Ն որոշման կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ,

2) Համաձայնագիրը կազմված է 3 հիմնական բաղադրիչներից՝

ա. հարկաբյուջետային, պետական պարտքի և ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականության բարելավում և ամրապնդում, ինչպես նաև համապատասխան ենթակառուցվածքների ներդրում,

բ. պետական արժեթղթերի թողարկման և կառավարման շրջանակի ու փողի շուկաների ենթակառուցվածքի ամրապնդում,

գ. ֆինանսական գործիքների և ներդրողների բազայի ընդլայնում և կորպորատիվ կառավարման ու թափանցիկության բարձրացում:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

5.1. մարել Վարկի մայր գումարը 12 տարում (հոդված II, բաժին 2.01, կետ «բ»),

5.2. վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են առհանված և չվճարված վարկի մայր գումարի դիմաց (հոդված II, բաժին 2.02),

5.3. վճարել պարտավորավճար՝ տարեկան 0.15%-ի չափով, որը հաշվեգրվում է Վարկի ամբողջ գումարի վրա (հանած ժամանակ առ ժամանակ առհանվող գումարները) (հոդված II, բաժին 2.03),

5.4. վճարել Վարկի տոկոսագումարները և այլ վճարներ կիսամյակային պարբերականությամբ՝ յուրաքանչյուր տարվա մարտի 15-ին և սեպտեմբերի 15-ին (հոդված II, բաժին 2.04),

5.5. մարել Վարկային հաշվից առհանված՝ վարկի մայր գումարը Համաձայնագրի 2-րդ հավելվածի դրույթների համաձայն (հոդված II, բաժին 2.05),

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

5.6. ապահովել, որ Վարկային միջոցներն օգտագործվեն Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ Համաձայնագրի դրույթների համաձայն (հոդված III, բաժին 3.01),

5.7. կատարել Համաձայնագրի 4-րդ հավելվածում սահմանված բոլոր պարտավորությունները կամ ապահովել դրանց կատարումը (հոդված IV, բաժին 4.01),

5.8. Բանկին ներկայացնել կամ ապահովել, որ Բանկին ներկայացվեն բոլոր այն հաշվետվություններն ու տեղեկությունները, որոնք Բանկը ողջամտորեն կպահանջի՝

1) համաֆինանսավորման միջոցների և դրանց օգտագործման վերաբերյալ,

2) Ծրագրի իրականացման, այդ թվում՝ թիրախների ապահովման և Քաղաքականության գործողությունների իրականացման վերաբերյալ (հոդված IV, բաժին 4.02):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հարկաթյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր-Ենթածրագիր 2» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

26 նոյեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1761

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ-ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 2»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1761
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր-Ենթածրագիր 2» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴՈ-1761 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր-Ենթածրագիր 2» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴՈ-1761 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴՈ-1761 որոշմամբ Հայաստանի

Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր-Ենթածրագիր 2» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական

միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում

կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շրկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«26» նոյեմբերի 2024թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՊԵԿ-Ի
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ
«ԿԱՆԱԶ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ԴԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 նոյեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի,
Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղա-
կալ Է. Հակոբյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի
Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի
միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման երկրորդ ծրա-
գիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորություննե-
րի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու
վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

Կառավարությունն իր՝ 2024 թվականի նոյեմբերի 15-ի N 1778-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի նոյեմբերի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի նոյեմբերի 5-ին և նոյեմբերի 12-ին՝ Համաձայնագրի 1-ին հավելվածում սահմանված ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր) աջակցելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

2. Համաձայնագրին կից ներկայացված՝ Արտաքին գործերի նախարարության՝ Համաձայնագրի վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության մասին եզրակացության համաձայն՝ Համաձայնագրով հատկացվելիք դրամական միջոցները հանդիսանում են բյուջետային աջակցության վարկ:

3. Համաձայնագրին կից ներկայացված Ֆինանսների նախարարության գրության համաձայն՝ Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու մարմիններ են հանդիսանում ՀՀ վարչապետի աշխատակազմը, Առողջապահության նախարարությունը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Շրջակա միջավայրի նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Քաղաքաշինության կոմիտեն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4. Համաձայնագրով ՕՊԵԿ հիմնադրամը համաձայնում է, Համաձայնագրով սահմանված պայմաններով, Հայաստանի Հանրապետությանը տրամադրել, իսկ Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է ՕՊԵԿ հիմնադրամից փոխառել հիսուն միլիոն եվրոյի (€50.000.000) չափով գումար (այսուհետ՝ Վարկ): Վարկի ավարտի ամսաթիվն է 2025 թվականի հունիսի 30-ը, իսկ արտոնյալ ժամկետը մեկնարկում է Համաձայնագրի կնքման ամսաթվից և ավարտվում է այդ ամսաթվից հինգ (5) տարի անց:

Եթե Հայաստանի Հանրապետությունը և ՕՊԵԿ հիմնադրամն այլ համաձայնություն ձեռք չեն բերել, ապա ամբողջ Վարկային միջոցները հատկացվում են որպես մեկ տրանշ՝ ի աջակցություն Համաձայնագրի 1-ին հավելվածում նշված Ծրագրի:

5. Ծրագրի նպատակն է խթանել Հայաստանում կանաչ, դիմակայուն և ներառական զարգացումը՝ նպաստելով կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացմանն ու հարմարվողականությանը, բարելավելով շրջակա միջավայրի կառավարումը և էներգաարդյունավետությունը, ապահովելով հավասարության ավելի բարձր մակարդակ և խթանելով մարդկային կապիտալի զարգացումը, ինչպես նաև ամրապնդելով կառավարումը:

6. Համաձայնագրի 5-րդ հոդվածի 5.03 կետի համաձայն՝ Վարկը հատկացվում է մեկ տրանշով՝ Վարկը ուժի մեջ մտնելու մասին հայտարարելուց, Համաձայնագրի 5-րդ հոդվածի 5.02 կետում ամրագրված պայմանները գոհացուցիչ ձևով իրականացնելուց և Հայաստանի Հանրապետության կողմից առհանման հայտ ներկայացվելուց հետո: Հատկացումը կատարվում է Համաձայնագրի համապատասխան կետերի համաձայն, ներառյալ՝ 2-րդ հավելվածը՝ Վարկի տրամադրումը, Ընդհանուր պայմանները և ՕՊԵԿ հիմնադրամի՝ հատկացման ընթացակարգերը:

7. Համաձայնագիրն ունի երեք հավելված, որոնք դրա անբաժան մասն են կազմում՝ **Հավելված 1. «Ծրագրի նկարագրություն», Հավելված 2. «Վարկի տրամադրումը», Հավելված 3. «Աստիճանական մարումը»:**

Համաձայնագրի 1-ին հավելվածի 2.01 կետով սահմանված է, որ Վարկը տրամադրվում է ի աջակցություն Ծրագրի, մասնավորապես՝ այն նախնական միջոցառումների, որոնք Հայաստանի Հանրա-

պետությունն իրականացրել է բարեփոխումների օրակարգի երեք (3) ուղղություններով. **Ուղղություն 1. «Կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության խթանում ու շրջակա միջավայրի կառավարման համար կարգավորող շրջանակի բարելավում», Ուղղություն 2. «Հավասարության ամրապնդում և մարդկային կապիտալի զարգացման խթանում» և Ուղղություն 3. «Հակակոռուպցիոն շրջանակի և արդարադատության ոլորտի արդյունավետության բարձրացում»,** որոնք, իրենց հերթին, բաղկացած են ավելի մանրամասն նկարագրված նախնական միջոցառումներից:

8. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

ա. յուրաքանչյուր կիսամյակ՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ին և դեկտեմբերի 15-ին, ՕՊԵԿ հիմնադրամի հաշվին վճարել Տոկոս, որը հաշվարկման ցանկացած ժամանակահատվածի համար համարվում է այն դրույքաչափը, որը կազմում է ԵՎՐԻԲՈՐ-ի վեց (6) ամսվա գումարը՝ գումարած առհանված և չվճարված գումարների նկատմամբ տարեկան հաշվեգրված մեկ ամբողջ հիսունվեց հարյուրերորդական տոկոսը (1.56%) (Հոդված 2, կետ 2.02, պարբերություն «ա» և կետ 2.05).

բ. յուրաքանչյուր կիսամյակ՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ին և դեկտեմբերի 15-ին, վճարել կոմիսիոն վճար՝ Վարկի չառհանված գումարի նկատմամբ տարեկան հաշվեգրվող մեկ քառորդ (0.25%) տոկոսի չափով, որի հաշվեգրումը կսկսվի Համաձայնագրի կնքման ամսաթվից վաթսուն (60) օր հետո, և որը ենթակա է վճարման սկզբնապես՝ Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո իննսուն (90) օրվա ընթացքում (առաջին վճարում) (Հոդված 2, կետեր 2.03 և 2.05).

գ. Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո՝ իննսուն (90) օրվա ընթացքում, վճարել միանվագ կոմիսիոն վճար՝ Վարկի մեկ քառորդ (0.25%) տոկոսի չափով (Հոդված 2, կետ 2.04).

դ. Արտոնյալ ժամկետի ավարտից հետո՝ քսանվեց (26) կիսամյակային վճարումներով, մարման պահին և վայրում գործող շուկայական փոխարժեքով, սկսած 2029 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 2041 թվականի դեկտեմբերի 15-ը՝ 3.84%, իսկ 2042 թվականի հունիսի 15-ին՝ 4.00% մասնաբաժնով, մարել Վարկի մայր գումարը եվրոյով կամ ՕՊԵԿ հիմնադրամի համար ընդունելի ազատ փոխարկելի ցանկացած այլ արժույթով՝ եվրոյով արտահայտված գումարին համարժեք գումարի չափով (Հոդված 2, կետ 2.06, հավելված 3, կետ 1.01).

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

ե. հայտարարել Ծրագրի և դրա իրականացման մասով Հայաստանի Հանրապետության հանձնառությունը (Հոդված 4, կետ 4.01)։

զ. Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.01 կետի և Ընդհանուր պայմանների 7.06 կետի նպատակներով՝ մինչև կարծիքների յուրաքանչյուր փոխանակում, ՕՊԵԿ հիմնադրամի դիտարկմանը և մեկնաբանությանը ներկայացնել Ծրագրի իրականացման գործընթացում արձանագրված առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունն այնքան մանրամասն, որքան ողջամտորեն պահանջում է ՕՊԵԿ հիմնադրամը (Հոդված 4, կետ 4.01, պարբերություն «բ»)։

է. Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.01 կետի և Ընդհանուր պայմանների 7.06 կետի նպատակներով՝ չսահմանափակելով Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.01 կետի «ա» պարբերությունը՝ անհապաղ տեղեկացնել ՕՊԵԿ հիմնադրամին ցանկացած իրավիճակի մասին, որի հետևանքով էապես փոփոխվում են Ծրագրի կամ Ծրագրի շրջանակներում ձեռնարկված ցանկացած գործողության, այդ թվում՝ Համաձայնագրի 1-ին հավելվածում ամրագրված գործողությունների նպատակները (Հոդված 4, կետ 4.01, պարբերություն «գ»)։

ը. վարկային միջոցներն օգտագործել Համաձայնագրի 1-ին հավելվածում ամրագրված և ՕՊԵԿ հիմնադրամի համար ընդունելի նպատակներով (Հոդված 5, կետ 5.01)։

թ. Վարկային հաշվից վարկի առհանումից հետո երեսուն (30) օրվա ընթացքում ՕՊԵԿ հիմնադրամին ներկայացնել տեղեկություն այն մասին, որ Հայաստանի Հանրապետության բյուջեի կառավարման համակարգերում համարժեք գումար է հաշվարկվել, և ներկայացնել Վարկից ստացված եկամուտների մասով Վարկային հաշվի մուտքերի և ծախսերի մասին քաղվածքը, այնուհետև՝ ՕՊԵԿ հիմնադրամի պահանջով տրամադրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հրապարակված պետական բյուջեի կատարման եռամսյակային հաշվետվությունները (Հոդված 5, կետ 5.06)։

ժ. Վարկի մայր գումարի առաջին Մարման ամսաթվի դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չլինելու պարագայում՝ Վարկի առաջին Մարման ամսաթվի դրությամբ վարկային միջոցների առհանման չափով վերադարձնել առաջին Մարման ամսաթվի դրությամբ առհանված և չվճարված Վարկի գումարը՝ Համաձայնագրի 3-րդ հավելվածի 1.01 կետին համապատասխան (Հավելված 3, կետ 2.01, պարբերություն «ա»)։

Ժա. Վարկի մայր գումարի առաջին Մարման ամսաթվի դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չլինելու պարագայում՝ վերադարձնել առաջին Մարման ամսաթվից հետո կատարված ցանկացած առհանում, այդ առհանման օրվան հաջորդող յուրաքանչյուր Մարման ամսաթվին՝ այն գումարի չափով, որը սահմանվում է ՕՊԵԿ հիմնադրամի կողմից հետևյալ ձևով՝ առհանման գումարը բազմապատկած կոտորակով, որի համարիչը Մարման այդ ամսաթվի համար Համաձայնագրի 3-րդ հավելվածի 1.01 կետում ներկայացված աղյուսակում նշված տոկոսն է, իսկ հայտարարը այդ ամսաթվի հետ համընկնող կամ դրան հաջորդող Մարման ամսաթվերի համար սահմանված մնացած բոլոր տոկոսների ընդհանուր գումարն է (Հավելված 3, կետ 2.01, պարբերություն «բ»):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

26 նոյեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1762

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՊԵԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱՉ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1762 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴՈ-1762 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴՈ-1762 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴՈ-1762 որոշմամբ Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները

ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

նությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային

եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային

փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատարանության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շարկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«26» նոյեմբերի 2024թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ 5(117)2024 ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ
«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՍԻԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ»
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 նոյեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի ապրիլի 25-ին ընդունված «Մշակութային ժառանգության ասիական դաշինք» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի հունիսի 27-ի N 960-Ա որոշմամբ հավանություն է տվել 2023 թվականի ապրիլի 25-ին ընդունված

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

«Մշակութային ժառանգության ասիական դաշինք» կանոնադրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի մասին Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հուլիսի 1-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴԱՌ-141 աշխատակարգային որոշմամբ «2023 թվականի ապրիլի 25-ին ընդունված «Մշակութային ժառանգության ասիական դաշինք» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցվել է՝ գործով լրացուցիչ ապացույցներ պահանջելու անհրաժեշտությամբ պայմանավորված:

Սահմանադրական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 19-ի ՍԴԱՌ-175 աշխատակարգային որոշմամբ «2023 թվականի ապրիլի 25-ին ընդունված «Մշակութային ժառանգության ասիական դաշինք» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը վերսկսվել է՝ հաշվի առնելով, որ վերացել է սույն գործի կասեցման հիմքը:

Ուսումնասիրելով վերոնշյալ կանոնադրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Կանոնադրությունն ընդունվել է 2023 թվականի ապրիլի 25-ին՝ ողջ Ասիայում մշակութային ժառանգության պահպանության և օգտագործման կարողությունները զարգացնելու, բարելավելու և մշակութային ժառանգության երկարաժամկետ պահպանությունը ողջ Ասիայում համակարգելու՝ տնտեսության, հասարակության, մշակույթի, զբոսաշրջության և շրջակա միջավայրի պահպանության զարգացմանը համընթաց, մարդկանց կապերը և ուղիղ հաղորդակցությունն ասիական երկրների միջև խթանելու և ավելացնելու, ասիական քաղաքակրթությունների փոխանցումը դյուրացնելու և Ասիայի համար ընդհանուր ապագա ունեցող համայնք ձևավորելու նպատակով:

2. Արտաքին գործերի նախարարության՝ Կանոնադրության վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության վերաբերյալ եզրակացության և ուժի մեջ մտնելու կարգի վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ մշակութային ժառանգության պահպանության ասիական դաշինք նախաձեռնության առաջին հանդիպումը տեղի է ունեցել առցանց՝ 2021 թվականի հոկտեմբերի 27-ին: Նախաձեռնության հիմնադիր անդամներ են դարձել Չինաստանը, Հայաստանը, Կամբոջան, Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը, Իրանը, Ղրղզստանը, Պակիստանը, Սիրիան, Արաբական Միացյալ Էմիրությունները և Եմենը:

Ներկա դրությամբ Կանոնադրությունն ընդունվել է 12 պետության կողմից:

3. «Մշակութային ժառանգության ասիական դաշինքը» (այսուհետ՝ ՄԺԱԴ) կամավոր մասնակցության, հավասարության, փոխադարձ հարգանքի և փոխադարձ շահի սկզբունքների հիման վրա ասիական երկրների կողմից ստեղծված միջկառավարական համագործակցության մեխանիզմ է, որն ուղղված է Մշակութային ժառանգության պահպանության ասիական նախաձեռնության իրականացմանը:

4. ՄԺԱԴ-ը բաղկացած է Ընդհանուր ժողովից, Խորհրդից, Գիտական կոմիտեից և Քարտուղարությունից:

5. ՄԺԱԴ-ն իրականացնում է հետևյալ գործունեությունը.

- աջակցություն համատեղ նախագծերի իրականացմանը Ասիայում մշակութային ժառանգության պահպանության և կառավարման ոլորտում՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալ ոլորտներով՝ հնագիտություն, ժառանգության օբյեկտների պահպանություն և վերականգնում, միջթանգարանային փոխանակում, Համաշխարհային մշակութային ժառանգության անվանակարգում, պահպանություն և կառավարում, մշակութային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման և սեփականության փոխանցման կանխարգելում մշակութային արժեք հանդիսացող կորած օբյեկտների վերադարձի և փոխհատուցման դյուրացում,

- համաժողովների, ֆորումների և մշակութային ժառանգության ոլորտում այլ միջոցառումների կազմակերպում,

- մասնագիտական վերապատրաստման և կարողությունների զարգացմանն ուղղված համագործակցության խթանում,

• փոխանակման ծրագրերի և համագործակցության արդյունքների և ձեռքբերումների ներկայացում և տարածում:

6. Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

• պահպանել Կանոնադրության պահանջները և հարակից նորմերն ու կանոնները և կատարել ՄԺԱԴ-ի կայացրած որոշումները (հոդված 9, մաս 1),

• պահպանել և պաշտպանել ՄԺԱԴ-ի շահերը և օրինական իրավունքները (հոդված 9, մաս 2),

• նախաձեռնել ՄԺԱԴ-ի միջոցառումների կազմակերպումը, մասնակցել դրանց և նպաստել դրա առաջընթացին և զարգացմանը (հոդված 9, մաս 3),

• նպաստել ՄԺԱԴ-ի՝ համաշխարհային տեսանելիության մեծացմանը. նշանակել մասնագիտացված մարմին՝ ընթացիկ գործունեության իրականացմանն աջակցելու նպատակով Քարտուղարության հետ հաղորդակցությունն ապահովելու համար (հոդված 9, մաս 4),

• նշանակել մասնագիտացված գործակալություն՝ ամենօրյա գործողությունները դյուրացնելու նպատակով Քարտուղարության հետ կապ պահպանելու համար (հոդված 9, մաս 5):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի ապրիլի 25-ին ընդունված «Մշակութային ժառանգության ասիական դաշինք» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

26 նոյեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1763

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 5(117)2024 ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ
«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՍԻԱԿԱՆ
ԴԱՇԻՆՔ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Ը
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ
26-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1763 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի ապրիլի 25-ին ընդունված «Մշակութային ժառանգության ասիական դաշինք» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴՈ-1763 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի ապրիլի 25-ին ընդունված՝ «Մշակութային ժառանգության ասիական դաշինք» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴՈ-1763 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՍԴՈ-1763 որոշմամբ 2023 թվականի ապրիլի 25-ին ընդունված՝ «Մշակութային ժառանգության ասիական դաշինք» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական

ՍԱՀԱՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում են, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարանի ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանի առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանի միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական

օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում


նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյույթի դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյույթի դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շփոթելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«29» նոյեմբերի 2024թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1899 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-ԻՆ ԵՎ 1907 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՀԱԱԳԱՅՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ
«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 դեկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Բաղդասարյանի, Ե. Խունդկարյանի,
Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Ե. Կիրակոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաներում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի նոյեմբերի 7-ի N 1735-Ա որոշմամբ հավանություն է տվել «1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաները վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ կոնվենցիաներում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի նոյեմբերի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կոնվենցիաները, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաները (այսուհետ՝ 1899 թ. Կոնվենցիա, 1907 թ. Կոնվենցիա, միասին՝ Կոնվենցիաներ) ընդունվել են համապատասխանաբար՝ 1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում՝ պետությունների միջև հարաբերություններում ուժի կիրառումը կանխելու նպատակով:

Համաձայն 1899 թ. Կոնվենցիայի և 1907 թ. Կոնվենցիայի՝ անկախ 2-րդ հոդվածով նախատեսված դիմումից՝ Ստորագրող տերությունները/Պայմանավորվող պետություններն առաջարկում են, որ վեճի մասնակից չհանդիսացող մեկ կամ մի քանի տերություն սեփական նախաձեռնությամբ, և որքանով թույլ են տալիս հանգամանքները, առաջարկեն իրենց բարի ծառայություններն ու միջնորդությունը վեճի մասնակից պետություններին:

Վեճի մասնակից չհանդիսացող տերություններն իրավունք ունեն առաջարկելու իրենց բարի ծառայություններն ու միջնորդությունը նույնիսկ ռազմական գործողությունների ընթացքում:

Միջնորդի խնդիրն է հաշտեցնել հակադիր պահանջները և նվազեցնել թշնամանքի զգացումը, եթե այն ծագել է վեճի մասնակից պետությունների միջև:

Միջնորդի գործառույթները դադարում են այն պահին, երբ վիճող կողմերից մեկը կամ ինքը՝ միջնորդը, հայտարարում է, որ առաջարկվող հաշտության միջոցները չեն ընդունվում:

Համաձայն վերոհիշյալ Կոնվենցիաների՝ թե՛ կողմերի խնդրանքով, թե՛ վեճի կողմ չհանդիսացող տերությունների նախաձեռնությամբ կիրառվող բարի ծառայությունները և միջնորդությունն ունեն բացառապես խորհրդատվական բնույթ և ոչ մի դեպքում չունեն պարտադիր ուժ:

Կոնվենցիաներով սահմանվում է, որ միջնորդության ընդունումը, հակառակի վերաբերյալ համաձայնություն չլինելու դեպքում, չի կարող լինել զորահավաքի կամ պատերազմի պատրաստվելու այլ միջոցառումների ընդհատման, հետաձգման, դանդաղեցման կամ խոչընդոտման պատճառ, իսկ եթե միջնորդությունը տեղի է ունենում ռազմական գործողություններն սկսվելուց հետո, հակառակ համաձայնություն չլինելու դեպքում, այն չի հանգեցնում ընթացիկ ռազմական գործողությունների դադարեցման:

Կոնվենցիաներով նախատեսված կարգով, գործառույթներով և իրավասությամբ ստեղծվում են Մշտական արբիտրաժային տրիբունալ, Միջազգային քննիչ հանձնաժողով, Մշտական արբիտրաժային դատարան, Մշտական արբիտրաժային դատարանի Միջազգային բյուրո և Հատուկ տրիբունալ:

Միջազգային վեճերում, որոնք չեն առնչվում ո՛չ պատվին, ո՛չ էլ կենսական շահերին և բխում են փաստերի գնահատման շուրջ ունեցած տարակարծությունից, Կոնվենցիաների կողմերն առաջարկում են վեճերի կողմերին դիվանագիտական համաձայնության չհասնելու դեպքում այնքանով, որքանով թույլ են տալիս հանգամանքները, հիմնել Միջազգային քննիչ հանձնաժողով՝ անկողմնակալ և արդար քննության միջոցով փաստերի պարզաբանմամբ վեճերը լուծելու նպատակով:

Միջազգային քննիչ հանձնաժողովները ստեղծվում են վիճող կողմերի միջև կնքվող հատուկ համաձայնագրով՝ Կոնվենցիաներով սահմանված կարգով:

Հանձնաժողովի նիստերը հանրային չեն, և հրապարակման ենթակա չեն նաև Արձանագրություններին ու քննությանն առնչվող փաստաթղթերը, բացառությամբ կողմերի համաձայնությամբ Հանձնաժողովի կայացրած որոշման առկայության դեպքում:

Հանձնաժողովի զեկույցը ընթերցվում է դռնբաց նիստում ներկայացուցիչների և իրավախորհրդատուի ներկայությամբ կամ բացակայությամբ, եթե վերջիններս պատշաճ ծանուցվել են: Հանձնաժողովի զեկույցն ունի բացառապես փաստերն արձանագրող բնույթ և ոչ մի պարագայում չի կարող համարվել Արբիտրաժային վճիռ: Կողմերը լիովին ազատ են ըստ իրենց հայեցողության տնօրինելու այդ փաստերը:

Դիվանագիտական ճանապարհով չկարգավորված միջազգային տարածայնությունների դեպքում անհապաղ արբիտրաժի դիմելու հնարավորություն ստեղծելու համար Պայմանավորվող տերությունները պարտավորվում են հիմնել Մշտական արբիտրաժային դատարան, ինչպես սահմանվել է Առաջին խաղաղության համաժողովում, որը հասանելի կլինի ցանկացած ժամանակ և կգործի, եթե կողմերը 1907 թ. Կոնվենցիայի ընթացակարգային կանոնների համաձայն այլ բան չեն նախատեսում:

Մշտական դատարանն իրավասու է քննել բոլոր արբիտրաժային գործերը, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը համաձայնում են ստեղծել հատուկ Տրիբունալ:

Տրիբունալի խորհրդակցություններն անցկացվում են դռնփակ, իսկ ընթացակարգը գաղտնի է: Յուրաքանչյուր որոշում կայացվում է Տրիբունալի անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ Արբիտրաժային վճիռն ընթերցվում է դռնբաց նիստում կողմերի ներկայացուցիչների և իրավախորհրդատուների ներկայությամբ կամ բացակայությամբ, եթե վերջիններս պատշաճ ծանուցվել են: Արբիտրաժային վճիռը պարտադիր է միայն վիճող կողմերի համար:

2. 1899 թ. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլ պարտավորությունների, փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

2.1. պետությունների միջև հարաբերություններում ուժի կիրառումը հնարավորինս կանխելու նպատակով գործադրել Հայաստանի Հանրապետության լավագույն ջանքերը՝ ապահովելու միջազգային տարածայնությունների խաղաղ լուծումը (1899 թ. Կոնվենցիա, հոդված 1),

2.2. լուրջ տարածայնության կամ հակասության դեպքում՝ այնքանով, որքանով թույլ են տալիս հանգամանքները, համաձայնել զենք կիրառելու փոխարեն դիմել մեկ կամ մի քանի բարեկամ տերությունների բարի ծառայություններից կամ միջնորդությունից օգտվելու հնարավորությանը (1899 թ. Կոնվենցիա, հոդված 2),

2.3. Ստորագրող տերությունների՝ 1899 թ. Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքի իրացումը չդիտարկել որպես ոչ բարեկամական գործողություն (1899 թ. Կոնվենցիա, հոդված 3, պարբերություն 3),

2.4. որպես վեճի մասնակից կողմ հանդես գալու պարագայում լուրջ տարածայնության դեպքում, երբ վտանգված է խաղաղությունը,

համապատասխանորեն ընտրել տերություն, որին կլիազորվի հակառակ կողմի ընտրած տերության հետ ուղիղ բանակցություններ վարելու առաքելությունը՝ խաղաղ հարաբերությունների խզումը կանխելու նպատակով (1899 թ. Կոնվենցիա, հոդված 8, պարբերություն 2),

2.5. մանդատի գործողության ժամանակահատվածում, որի ժամկետը, եթե այլ բան սահմանված չէ, չի կարող գերազանցել երեսուն օրը, որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ դադարեցնել վեճի առարկային առնչվող բոլոր ուղղակի հաղորդակցությունները վեճի մասնակից մյուս պետության հետ, որը համարվում է փոխանցված բացառապես միջնորդ տերություններին, որոնք պետք է գործադրեն լավագույն ջանքերը վեճի կարգավորման նպատակով (1899 թ. Կոնվենցիա, հոդված 8, պարբերություն 3),

2.6. որպես վեճի կողմ հանդես գալու պարագայում՝ Միջազգային քննիչ հանձնաժողովին հնարավորինս տրամադրել բոլոր այն միջոցներն ու հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են փաստերին ամբողջովին ծանոթանալու և դրանք ճշգրիտ հասկանալու համար (1899 թ. Կոնվենցիա, հոդված 12),

2.7. ստորագրող կողմերի հետ կնքված արբիտրաժային ցանկացած համաձայնագրի, ինչպես նաև հատուկ Տրիբունալների կողմից կայացված ցանկացած Արբիտրաժային վճռի վավերացված օրինակները փոխանցել Միջազգային բյուրոյին՝ Հաագա, ինչպես նաև օրենքները, կարգավորումները և փաստաթղթերը, որոնք հավաստում են Դատարանի կողմից կայացված Արբիտրաժային վճիռների կատարումը (1899 թ. Կոնվենցիա, հոդված 22, պարբերություններ 3 և 4),

2.8. 1899 թ. Կոնվենցիայի վավերացումից հետո՝ երեք ամսվա ընթացքում, ընտրել ոչ ավել, քան չորս անձ, որոնք քաջատեղյակ են միջազգային իրավունքին, ունեն բարձր բարոյական համբավ և պատրաստակամ են ստանձնելու Արբիտրի պարտականությունները վեց տարի պաշտոնավարման ժամկետով՝ վերընտրվելու իրավունքով (1899 թ. Կոնվենցիա, հոդված 23, պարբերություններ 1 և 5),

2.9. Արբիտրաժային տրիբունալի կազմի՝ կողմերի ուղղակի համաձայնությամբ չորոշելու պարագայում առաջնորդվել 1899 թ. Կոնվենցիայի 24-րդ հոդվածով սահմանված կարգով (1899 թ. Կոնվենցիա, հոդված 24, պարբերություն 2),

2.10. հոգալ Բյուրոյի ծախսերը Համաշխարհային փոստային միության կողմից Միջազգային բյուրոյի համար սահմանված չափաբաժնով (1899 թ. Կոնվենցիա, հոդված 29),

2.11. Արբիտրաժի զարգացմանը նպաստելու նպատակով արբիտրաժի ընթացակարգի համար կիրառել 1899 թ. Կոնվենցիայի III գլխով սահմանված հետևյալ Կանոնները, եթե այլ Կանոնների կիրառման վերաբերյալ կողմերը համաձայնության չեն եկել (1899 թ. Կոնվենցիա, հոդված 30),

2.12. Արբիտրաժին դիմելու պարագայում՝ ստորագրել հատուկ ակտ («Փոխզիջում» [Compromis]), որը հստակ սահմանում է տարաձայնության առարկան, ինչպես նաև Արբիտրոնների լիազորությունների շրջանակը. այդ ակտը պարտավորեցնում է կողմերին հավատարմություն ցուցաբերել Արբիտրաժային վճռի նկատմամբ (1899 թ. Կոնվենցիա, հոդված 31),

2.13. վճարել Հայաստանի Հանրապետության ծախսերը և Տրիբունալի ծախսերի հավասար բաժինը (1899 թ. Կոնվենցիա, հոդված 57):

3. 1907 թ. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլ պարտավորությունների, փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

3.1. պետությունների հարաբերություններում ուժի կիրառումը հնարավորինս կանխելու նպատակով գործադրել Հայաստանի Հանրապետության լավագույն ջանքերը՝ ապահովելու միջազգային տարաձայնությունների խաղաղ լուծումը (1907 թ. Կոնվենցիա, հոդված 1),

3.2. լուրջ տարաձայնության կամ վեճի դեպքում այնքանով, որքանով թույլ են տալիս հանգամանքները, զենքի դիմելու փոխարեն համաձայնել դիմել մեկ կամ մի քանի բարեկամ պետությունների բարի ծառայություններից կամ միջնորդությունից օգտվելու հնարավորությանը (1907 թ. Կոնվենցիա, հոդված 2),

3.3. Պայմանավորվող պետությունների՝ 1907 թ. Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքի իրացումը չդիտարկել որպես ոչ բարեկամական գործողություն (1907 թ. Կոնվենցիա, հոդված 3, պարբերություն 3),

3.4. որպես վեճի մասնակից կողմ հանդես գալու պարագայում՝ լուրջ տարաձայնության դեպքում, երբ վտանգված է խաղաղությունը, համապատասխանաբար ընտրել տերություն, որին կլիազորվի հակառակ կողմի ընտրած տերության հետ ուղիղ բանակցություններ վարելու առաքելությունը՝ խաղաղ հարաբերությունների խզումը կանխելու նպատակով (1907 թ. Կոնվենցիա, հոդված 8, պարբերություն 2),

3.5. մանդատի գործողության ժամանակահատվածում, որի ժամկետը, եթե այլ բան սահմանված չէ, չի կարող գերազանցել երեսուն օրը, որպես

վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ դադարեցնել վեճի առարկային առնչվող բոլոր ուղղակի հաղորդակցությունները վեճի մասնակից մյուս պետության հետ, որը համարվում է փոխանցված բացառապես միջնորդ տերություններին, որոնք պետք է գործադրեն լավագույն ջանքերը վեճի կարգավորման նպատակով (1907 թ. Կոնվենցիա, հոդված 8, պարբերություն 3),

3.6. որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ սահմանված ժամկետներում Հանձնաժողովին և հակառակ կողմին առկայության դեպքում ներկայացնել փաստերի շարադրանքը և ամեն դեպքում ակտերը, թղթերն ու փաստաթղթերը, որոնք Հայաստանի Հանրապետությունն անհրաժեշտ է համարում ճշմարտությունը պարզելու համար, ինչպես նաև վկաների ու փորձագետների ցանկը, որոնց ցուցմունքները ցանկանում է լսելի դարձնել (1907 թ. Կոնվենցիա, հոդված 19, պարբերություն 2),

3.7. որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ Քննիչ հանձնաժողովին տրամադրել հնարավոր բոլոր այն միջոցներն ու հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են փաստերին ամբողջությամբ ծանոթանալու և դրանք հասկանալու համար (1907 թ. Կոնվենցիա, հոդված 23, պարբերություն 1),

3.8. որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ օգտագործել Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ եղած միջոցները, ըստ սեփական ներպետական իրավունքի, երաշխավորելու Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող և Հանձնաժողով հրավիրված վկաների կամ փորձագետների ներկայությունը (1907 թ. Կոնվենցիա, հոդված 23, պարբերություն 2),

3.9. որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ վկաների կամ փորձագետների՝ Հանձնաժողով ներկայանալու հնարավորություն չունենալու դեպքում՝ կազմակերպել նրանց ցուցմունքների դեպոնացումը Հայաստանի Հանրապետության որակավորված պաշտոնյաների կողմից (1907 թ. Կոնվենցիա, հոդված 23, պարբերություն 3),

3.10. որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ վճարել Հայաստանի Հանրապետության ծախսերը և Հանձնաժողովի ծախսերի հավասար բաժինը (1907 թ. Կոնվենցիա, հոդված 36),

3.11. իրավական բնույթի հարցերի, մասնավորապես՝ միջազգային կոնվենցիաների մեկնաբանման կամ կիրառման դեպքում ճանաչել Արբիտրաժն ամենաարդյունավետ և միևնույն ժամանակ ամենաանկողմնակալ միջոցը՝ լուծելու այն վեճերը, որոնք չի հաջողվել լուծել

դիվանագիտական ճանապարհով (1907 թ. Կոնվենցիա, հոդված 38, պարբերություն 1),

3.12. առաջին իսկ հնարավորության դեպքում փոխանցել Բյուրոյին մյուս Պայմանավորվող տերությունների միջև կնքված արբիտրաժային ընթացակարգի պայմաններին վերաբերող ցանկացած համաձայնագրի, ինչպես նաև Հատուկ տրիբունալի կողմից կայացված Արբիտրաժային վճիռների վավերացված օրինակները, ինչպես նաև Բյուրոյին փոխանցել օրենքները, կարգավորումները և փաստաթղթերը, որոնք անհրաժեշտության դեպքում հավաստում են Դատարանի կողմից կայացված վճիռների կատարման մասին (1907 թ. Կոնվենցիա, հոդված 43, պարբերություններ 3 և 4),

3.13. ընտրել ոչ ավել, քան չորս անձ, որոնք քաջատեղյակ են միջազգային իրավունքին, ունեն բարձր բարոյական համբավ և պատրաստակամ են ստանձնելու Արբիտրի պարտականությունները (1907 թ. Կոնվենցիա, հոդված 44, պարբերություն 1),

3.14. Տրիբունալի կազմվելուց հետո ծանուցել Բյուրոյին դատարանին դիմելու Հայաստանի Հանրապետության որոշման մասին՝ ներկայացնելով «Փոխզիջում» [Compromis] և արբիտրների անունները (1907 թ. Կոնվենցիա, հոդված 46, պարբերություն 1),

3.15. հոգալ Բյուրոյի ծախսերը՝ Համաշխարհային փոստային միության կողմից Միջազգային բյուրոյի համար սահմանված չափաբաժնով (1907 թ. Կոնվենցիա, հոդված 50, պարբերություն 1),

3.16. Արբիտրաժի դիմելու իրավասություն ունենալու դեպքում՝ կնքել «Փոխզիջում», որով հստակ սահմանվում է վեճի առարկան, Արբիտրներ նշանակելու ժամկետները, ձևը, կարգը և ժամկետը, որի շրջանակներում պետք է տեղի ունենա 1907 թ. Կոնվենցիայի 63-րդ հոդվածով նախատեսված հաղորդակցությունը, ինչպես նաև նախապես վճարել գումարը՝ ծախսերը ծածկելու նպատակով (1907 թ. Կոնվենցիա, հոդված 52, պարբերություն 1),

3.17. Տրիբունալին տրամադրել գործի լուծման համար անհրաժեշտ տեղեկություններն այնքանով, որքանով դա հնարավոր է համարվում (1907 թ. Կոնվենցիա, հոդված 75),

3.18. որպես վեճի մասնակից պետություն հանդես գալու պարագայում՝ վճարել Հայաստանի Հանրապետության ծախսերը և Տրիբունալի ծախսերի հավասար բաժինը (1907 թ. Կոնվենցիա, հոդված 85):

4. 1907 թ. Կոնվենցիայի 91-րդ հոդվածի համաձայն՝ նշված Կոնվենցիան, պատշաճ կերպով վավերացված լինելով, Պայմանավորվող

տերությունների միջև հարաբերություններում կփոխարինի 1899 թվականի հուլիսի 29-ին կնքված Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին կոնվենցիային:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաներում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

3 դեկտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1764

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «1899 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-ԻՆ ԵՎ 1907 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՀԱԱԳԱՅՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1764 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաներում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի դեկտեմբերի 3-ի ՍԴՈ-1764 որոշմամբ որոշել է, որ 1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաներում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 3-ի ՍԴՈ-1764 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությանը 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի դեկտեմբերի 3-ի ՍԴՈ-1764 որոշմամբ 1899 թվականի հուլիսի 29-ին և 1907 թվականի հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիաներում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը

համապատասխանող: Հարկ են համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեն համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում են, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարանի ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանի առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանի միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական

դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական

ՍԱՀԱՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային

փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շփոթելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«4» դեկտեմբերի 2024թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 5(117)2024 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ
ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԻՐԵՆՑ
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

17 դեկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Բազադյանի, Ե. Խունդկարյանի,
Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի
նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի
հունիսի 11-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետու-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

թյան կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև իրենց մաքսային մարմինների փոխադարձ օգնության վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի օգոստոսի 29-ի N 1351-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի հունիսի 11-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև իրենց մաքսային մարմինների փոխադարձ օգնության վերաբերյալ» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հոկտեմբերի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև իրենց մաքսային մարմինների փոխադարձ օգնության վերաբերյալ» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի հունիսի 11-ին Երևանում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ մաքսային ոլորտում համագործակցության ամրապնդման նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

2.1. ՀՀ Մաքսային մարմնի միջոցով աջակցություն ցուցաբերել Ամերիկայի Միացյալ Նահանգներին ցանկացած մաքսային իրավախախտում կանխելու, բացահայտելու և քննելու հարցում՝ Համաձայնագրի դրույթներին համապատասխան (հոդված 2, մաս 1),

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ 5(117)2024 ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ

2.2. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինը կատարի Համաձայնագրի համաձայն ներկայացված աջակցության վերաբերյալ հարցումները՝ ՀՀ ներպետական օրենսդրության և կարգավորումներին համապատասխան, և դրանց սահմանափակումների պահպանմամբ, ինչպես նաև իր իրավասության ու առկա ռեսուրսների սահմաններում (հոդված 2, մաս 2),

2.3. ապահովել, որ հարցման հիման վրա ՀՀ Մաքսային մարմինը տեղեկատվության ձևով աջակցություն տրամադրի՝ մաքսային օրենսդրության կատարումն ապահովելու և Մաքսային մարմինների կողմից մաքսատուրքերն ու մյուս հարկերը պատշաճ ձևով գնահատելու համար (հոդված 3, մաս 1),

2.4. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինն ԱՄՆ Մաքսային մարմինների հետ համագործակցի տեղեկությունների անվտանգ և արագ փոխանակումը դյուրացնելու նպատակով՝ հաղորդակցման ուղիների ստեղծման և պահպանման, արդյունավետ համակարգման նպաստման և նոր սարքավորումների կամ ընթացակարգերի դիտարկման և փորձարկման շուրջ, ինչպես նաև ցանկացած այլ ընդհանուր վարչական հարցերի շուրջ, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ պահանջել նրանց կողմից համատեղ ձեռնարկվող գործողություններ (հոդված 3, մաս 3),

2.5. ապահովել, որ հարցման հիման վրա ՀՀ Մաքսային մարմինն ԱՄՆ Մաքսային մարմիններին տեղեկացնի այն մասին, թե արդյոք ԱՄՆ տարածքից արտահանված ապրանքներն օրինական ձևով են ներմուծվել ՀՀ տարածք, ինչպես նաև ապահովել, որ պահանջի դեպքում տեղեկությունները պարունակեն ապրանքների մաքսազերծման համար օգտագործվող մաքսային ընթացակարգը (հոդված 4, մաս 1),

2.6. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինը, հարցման հիման վրա և ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հսկողություն իրականացնի այն անձանց նկատմամբ, որոնք հայտնի է, որ կատարել են կամ կասկածվում է, որ պատրաստվում են կատարել մաքսային իրավախախտում՝ Հարցում ներկայացնող ամերիկյան կողմի տարածքում, դեպի այդ տարածքն ընկած կամ այդ տարածքով անցնող ճանապարհին (հոդված 4, մաս 2, կետ «ա»),

2.7. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինը, հարցման հիման վրա և ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հսկողություն իրականացնի փոխադրվող կամ պահեստավորված ապրանքների նկատմամբ, որոնք ճանաչվել են որպես կասկածելի ապօրինի շրջանառության առարկա՝

Հարցում ներկայացնող ամերիկյան կողմի տարածքում, դեպի այդ տարածքն ընկած կամ այդ տարածքով անցնող ճանապարհին (հոդված 4, մաս 2, կետ «բ»),

2.8. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինը, հարցման հիման վրա և ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հսկողություն իրականացնի տրանսպորտային միջոցների նկատմամբ, որոնք, հայտնի է, որ օգտագործվել են կամ կասկածվում են, որ օգտագործվել են մաքսային իրավախախտումներ կատարելու մեջ՝ Հարցում ներկայացնող ամերիկյան կողմի տարածքում, դեպի այդ տարածքն ընկած կամ այդ տարածքով անցնող ճանապարհին (հոդված 4, մաս 2, կետ «գ»),

2.9. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինը, հարցման հիման վրա և ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հսկողություն իրականացնի Հարցում ստացող ՀՀ տարածքում գտնվող շինությունների նկատմամբ, որոնք հայտնի է, որ օգտագործվել են կամ կասկածվում է, որ օգտագործվել են իրավախախտումներ կատարելու առնչությամբ՝ Հարցում ներկայացնող ամերիկյան կողմի տարածքում, դեպի այդ տարածքն ընկած կամ այդ տարածքով անցնող ճանապարհին (հոդված 4, մաս 2, կետ «դ»),

2.10. ապահովել, որ հարցման հիման վրա ՀՀ Մաքսային մարմինն ԱՄՆ Մաքսային մարմիններին տեղեկություն տրամադրի այն գործողությունների վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել ԱՄՆ տարածքում մաքսային իրավախախտումների այնպիսի իրավիճակներում, որոնք կարող են էական վնաս հասցնել ԱՄՆ տնտեսությանը, հանրային առողջությանը, հանրային անվտանգությանը կամ նմանատիպ այլ կենսական շահերին. ապահովել, որ հնարավորության դեպքում ՀՀ Մաքսային մարմինն այդպիսի տեղեկություններ տրամադրի՝ առանց այդ մասին հարցում ստանալու (հոդված 4, մաս 3),

2.11. ապահովել, որ ՀՀ Մաքսային մարմինը հարցման հիման վրա տրամադրի ապրանքների փոխադրման և առաքման վերաբերյալ տեղեկություններ, որոնք ցույց են տալիս այդ ապրանքների արժեքը, նպատակակետը և տնօրինումը (հոդված 5, մաս 1),

2.12. Հարցում ներկայացնող ամերիկյան մարմնի կողմից բնօրինակներ կամ պատճեններ հատուկ չպահանջելու դեպքում ապահովել, որ Հարցում ստացող ՀՀ մարմինը միաժամանակ տրամադրի բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են համակարգչային տեղեկատվության մեկնաբանման կամ օգտագործման համար (հոդված 5, մաս 3),

2.13. ապահովել, որ փոխանցված գործերի, փաստաթղթերի և այլ նյութերի բնօրինակները վերադարձվեն առաջին իսկ հնարավորության դեպքում (հոդված 5, մաս 5),

2.14. ապահովել, որ Հարցում ստացող ՀՀ մարմինը ձեռնարկի բոլոր ողջամիտ միջոցները՝ հարցումը կատարելու համար, և ձգտի ապահովել այդ նպատակի համար անհրաժեշտ ցանկացած պաշտոնական միջոց (հոդված 8, մաս 1),

2.15. ապահովել, որ Հարցում ստացող ՀՀ մարմինը հնարավորինս լիարժեք իրականացնի կամ թույլատրի Հարցում ներկայացնող ամերիկյան մարմնին անցկացնել նման տեսչական ստուգումներ, վավերացումներ, փաստահավաք հետաքննություններ կամ քննչական այլ միջոցառումներ, ներառյալ՝ փորձագետների, վկաների ու մաքսային իրավախախտումների կատարման մեջ կասկածվող անձանց հարցաքննությունը, քանի որ դա անհրաժեշտ է հարցումը կատարելու համար (հոդված 8, մաս 3),

2.16. ապահովել, որ Հարցում ստացող ՀՀ մարմինը բավարարի հարցումը՝ պահպանելով որոշակի ընթացակարգ այնքանով, որքանով այդ ընթացակարգն արգելված չէ ՀՀ ներպետական օրենսդրությամբ (հոդված 8, մաս 6),

2.17. Համաձայնագրի համաձայն ձեռք բերված տեղեկությունների համարորպես ստացող Կողմ ապահովել նույն աստիճանի գաղտնիություն, որը կիրառում է իր մոտ գտնվող նմանատիպ տեղեկությունների նկատմամբ (հոդված 9, մաս 1),

2.18. Համաձայնագրի համաձայն ձեռք բերված տեղեկություններն օգտագործել կամ բացահայտել միայն Համաձայնագրում նշված նպատակների համար՝ ներառելով ստացող հայկական Կողմի կողմից դրանց օգտագործումը ցանկացած վարույթում, և այդ տեղեկություններն օգտագործել կամ բացահայտել այլ նպատակներով կամ ստացող հայկական Կողմի այլ մարմինների կողմից, եթե դրանք տրամադրող Մաքսային մարմինը հստակորեն գրավոր հավանություն է տվել այդ օգտագործմանը կամ բացահայտմանը (հոդված 9, մաս 2),

2.19. ՀՀ կողմից ստացված տեղեկությունները տրամադրող ամերիկյան Կողմի հայցմամբ համարել գաղտնի. նշվում են նման հայցման պատճառները (հոդված 9, մաս 3),

2.20. տրամադրված տվյալների սխալ լինելու կամ փոխանակման ենթակա չլինելու դեպքում այդ մասին անմիջապես ծանուցել ամերիկյան Կողմին, իսկ այդպիսի տվյալներ ստանալու պարագայում երաշխավորել,

որ այդպիսի տվյալներ ստացած ՀՀ Մաքսային մարմինը կփոփոխի կամ կվերացնի դրանք (հոդված 9, մաս 6),

2.21. ապահովել, որ համապատասխան ՀՀ Մաքսային մարմինը ձեռք բերի կամ պահպանի տեղական պայմանավորվածություններ՝ ապահովելու գաղտնի տվյալների, գործի նյութերի և փաստաթղթերի համապատասխան փոխանցումը, անվտանգ պահպանությունը, պահեստավորումը, մշակումը և ներքին տարածումը (հոդված 9, մաս 8),

2.22. հարցումը չբավարարվելու դեպքում ապահովել, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի Հարցում ներկայացնող ամերիկյան մարմին՝ տրամադրելով հարցումը հետաձգելու կամ մերժելու պատճառների մասին հայտարարություն, ինչպես նաև գործի հետագա հետապնդման համար կարևոր հանգամանքները (հոդված 10, մաս 4),

2.23. որպես Հարցում ստացող Կողմ հանդես գալու պարագայում վճարել հարցման կատարման հետ կապված բոլոր ծախսերը՝ բացառությամբ փորձագետների և վկաների, ինչպես նաև գրավոր և բանավոր թարգմանության ու սղագրության հետ կապված ծախսերը, իսկ որպես Հարցում ներկայացնող Կողմ հանդես գալու պարագայում վճարել փորձագետների և վկաների, ինչպես նաև գրավոր և բանավոր թարգմանության ու սղագրության հետ կապված ծախսերը (հոդված 11, մաս 1):

3. Համաձայնագիրը նախատեսված է բացառապես Կողմերի միջև փոխադարձ աջակցության համար, և Համաձայնագրի դրույթները ցանկացած մասնավոր անձի համար չեն առաջացնում իրավունք՝ ստանալու, թաքցնելու կամ բացառելու որևէ ապացույց կամ խոչընդոտելու հարցման կատարումը:

Համաձայնագիրը նախատեսված է Կողմերի միջև առկա փոխադարձ մաքսային աջակցությունն ընդլայնելու և լրացնելու համար: Համաձայնագրի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել այնպես, որ սահմանափակվեն Կողմերի միջև փոխադարձ աջակցության և առկա համագործակցության վերաբերյալ համաձայնագրերը, պայմանավորվածություններն ու գործելակերպերը:

Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում Մաքսային մարմիններին ինքնուրույն կերպով տեղեկություններ տրամադրել այն գործողությունների վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել մյուս Կողմի տարածքում մաքսային իրավախախտումների:

4. Համաձայնագրի 9-րդ հոդվածը չի խոչընդոտում Համաձայնագրի համաձայն փոխանակված տեղեկությունների օգտագործումը կամ բացահայտումն այնքանով, որքանով առկա է այդպես վարվելու պարտավորություն ստացող Կողմի Սահմանադրությամբ կամ ներպետական օրենսդրությամբ՝ կապված որևէ քրեական վարույթի հետ: Ստացող Կողմը ցանկացած նման առաջարկվող բացահայտման մասին նախապես ծանուցում է տեղեկությունները տրամադրող Կողմին:

Համաձայնագրի 9-րդ հոդվածը չի խոչընդոտում նաև Համաձայնագրի համաձայն փոխանակված տեղեկությունների օգտագործումը կամ բացահայտումը՝ կապված ահաբեկչության կամ ազգային անվտանգության այլ հարցերի հետ, եթե ստացող Կողմի գործող օրենսդրության համաձայն՝ առկա է այդպիսի տեղեկություններն օգտագործելու կամ բացահայտելու պարտավորություն:

5. Համաձայն Համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի՝ եթե Հարցում ստացող կողմը որոշում է, որ աջակցություն տրամադրելով կխախտվի իր ինքնիշխանությունը, անվտանգությունը, հանրային քաղաքականությունը կամ այլ էական ազգային շահեր, կամ այն կհակասի իր ներպետական օրենսդրությանը և կանոնակարգերին, ներառյալ՝ օգտագործման և գաղտնիության սահմանափակումների երաշխիքների անհամապատասխանության ցանկացած իրավական պահանջ, ապա այն կարող է հրաժարվել կամ դադարեցնել աջակցությունը կամ կարող է տրամադրել այն՝ որոշակի պայմանների կամ պահանջների բավարարման դեպքում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2024 թվականի հունիսի 11-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև իրենց մաքսային մարմինների փոխադարձ օգնության վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

17 դեկտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1765

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԻՐԵՆՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1765 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2024 թվականի հունիսի 11-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև իրենց մաքսային մարմինների փոխադարձ օգնության վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1765 որոշմամբ որոշել է, որ 2024 թվականի հունիսի 11-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև իրենց մաքսային մարմինների փոխադարձ օգնության վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1765 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությամբ մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1765 որոշմամբ 2024 թվականի հունիսի 11-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև իրենց մաքսային մարմինների փոխադարձ օգնության վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ

ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային

ՍԱՀԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 5(117)2024 ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦

թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական

դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի

ՍԱՀԱՄԱՆԱԴՐԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 5(117)2024

որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«17» դեկտեմբերի 2024թ.

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**

**ՄԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ (ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ)
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԻՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԻՍՏԻՆ**



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5(117)2024

2024 թվականի դեկտեմբերի 12-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը մասնակցել է Երևանում կայացած՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Գերագույն (Բարձրագույն) դատարանների նախագահների խորհրդի առաջին պաշտոնական նիստին, որը նախագահել է Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանը:

Ողջունելով նիստի մասնակիցներին՝ ՀՀ ՄԴ նախագահը համոզմունք է հայտնել, որ ԱՊՀ անդամ պետությունների Բարձր դատարանների նախագահների խորհրդի նիստերը հիանալի հարթակ են ազգային դատարանների միջև երկխոսության զարգացման համար՝ հաշվի առնելով նաև անդամ երկրների իրավական մշակույթների պատմականորեն հաստատված ընդհանրությունը:

«Մեր գլխավոր նպատակը դատական համակարգի գործունեության արդյունավետության և հանրային վստահության բարձրացումն է: Այս համատեքստում, անկասկած, բոլոր սոցիալական, քաղաքական շերտերի ու խմբերի լուրջ փոխըմբռնում և համախմբում է պահանջվում,

որպեսզի ձևավորվի սահմանադրական և իրավական մշակույթ, որը քայլ առ քայլ կմոտեցնի մեզ իդեալին: Սակայն, այս հարցում հիմնական բեռը դատավորի և դատարանների վրա է: Այն ենթադրում է դատավորների և դատարանների աշխատակազմի մասնագիտական հմտությունների մշտական զարգացում, դատական ակտերի որակի բարելավում և ազգային դատարանների ու միջազգային դատարանների միջև երկխոսության ակտիվացում: Այս առումով հատկապես կարևոր է գործընկեր դատարանների, միջազգային կազմակերպությունների, այս ոլորտի փորձագետների և գիտնականների երկարաժամկետ և սերտ համագործակցությունը:

Հարկ է նշել, որ չնայած գործադիր իշխանության մեր գործընկերների թերահավատությանը և ակադեմիական շրջանակներում առկա հակասական կարծիքներին, այսօր մենք ավելի ու ավելի շատ ենք խոսում դատական դիվանագիտության մասին: Իհարկե, մենք շատ զգույշ ենք մոտենում այս երևույթին և գիտակցում ենք, որ գործադիր իշխանությունն է պատասխանատու արտաքին քաղաքական նպատակների իրականացման համար: Միաժամանակ կարծում ենք, որ այսօր դատական դիվանագիտությունն ակնհայտ իրողություն է, և դա հնարավոր չէ անտեսել», - իր խոսքում նշել է ՀՀ ՄԴ նախագահը:

Արման Դիլանյանը, կարևորելով ազգային և միջազգային դատարանների միջև երկկողմ և բազմակողմ համագործակցության և երկխոսության բազմաթիվ հարթակների առկայությունը, որոնք հնարավորություն են ստեղծում ոչ միայն քննարկելու դատարանների առջև ծառայած համընդհանուր բնույթի խնդիրներն ու մարտահրավերները, այլ նաև մշակելու դրանց հաղթահարմանն ուղղված ընդհանուր և նորարարական լուծումներ, Գերագույն (Բարձրագույն) դատարանների նախագահների խորհրդի առաջին պաշտոնական նիստի մասնակիցներին մաղթել է արդյունավետ աշխատանք:

Ծանոթագրություն. Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Գերագույն (Բարձրագույն) դատարանների նախագահների խորհուրդը ձևավորվել է 2021 թվականի հոկտեմբերի 15-ին ստորագրված և 2022 թվականի նոյեմբերի 26-ին ուժի մեջ մտած՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Գերագույն (Բարձրագույն) դատարանների նախագահների խորհուրդ ձևավորելու մասին» համաձայնագրի ուժով:

Խորհրդի մասնակից պետություններն են Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանի Հանրապետությունը և Ուզբեկստանի Հանրապետությունը: Դեռևս 2023 թվականի փետրվարի 20-ին կայացած՝ Խորհրդի կազմակերպչական անդրանիկ նիստի ընթացքում, Խորհրդի նախագահությունը ստանձնել է Հայաստանի Հանրապետությունը, իսկ Խորհրդի նախագահ է ընտրվել ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանը: 2024 թվականի դեկտեմբերի 12-ին, Երևանում կայացած նիստում Խորհրդի նախագահությունը հաջորդաբար ստանձնել է Բելառուսի Հանրապետությունը:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՆՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ,
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Ստորագրված է տպագրության՝ 10.01.2025 թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը 70X100 1/16
Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81 (189)
E-mail: armlaw@concourt.am
<http://www.concourt.am>

Вестник Конституционного Суда Республики Армения N 5(117)2024
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 5(117)2024
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 5(117)2024

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am

